

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
Organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԱԿ

№ 12
DÉCEMBRE
1931
PARIS (France)

«ՀՈՅ ՅԵՂՈՒՓՈՒՆԿՈՆ ԴԱՆՆԵՐԿՑՈՒԹԵԱՆ» ԳՐԳՈՆ

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

«Թիւրքական ճակատը» նորից արտակարգ եռուզեռի մէջ է: Բարեկամութեան ամրապնդում Յունաստանի հետ. Լամբէ-Վենիզէլոսեան ողջագուրումներ Ակրոպոլիսի ստորոտին. Լամբէի այցելութիւնը Բուզափեշա ու Սոֆիա. Բալկանեան Պորթրափոզով Պոլսում. Սարալ Օղլու Շուքրի պէշի արշաւը Ամերիկա «ոսկի գեղմի» յետեւից. Լիտվինովը Անգորայում եւ Թիւրք-խորհրդային չեզոքութեան ու բարեկամութեան դաշնագրի երկարածգում եւս հինգ տարով, մտերմական հեռագրիները փոխանակում Մոսկւայի եւ Անգորայի միջեւ, Լամբէի խոստումը այցելելու Մոսկւա. բուլղար վարչապետի ճամբորդութիւնը Անգորա — ա՛նա արտաքին ցուցական արտայայտութիւնների շարքը այդ եռուզեռի: Իրսից դիտողի համար այնպիսի տպաւորութիւն է ստացւում, որ, կարծես, ամբողջ աշխարհ զբաղւած է Թիւրքիայով, ամենքը աշխատում են գրաւել Ղազիի սիրտն ու բարեկամութիւնը:

Այս պատկերի մէկ կողմն է, իսկ միւս կողմը —

Թիւրքիայի անցեալ տարւայ պետական բիւրջէն փակեց ահապէն բացով: Անգորան ոչ միայն իր արտասահմանեան յանձնառութիւնները չկարողացաւ կատարել ու պարտքերը չվճարեց, այլ եւ ներքին ծախսերի մի զգալի մասը թողեց բաց կամ ստիպւած եղաւ կրճատել: Այս տարւայ բիւրջէն, անցեալի համեմատութեամբ, զեղջւած է մէկ վեցերորդով, բայց եւ այնպէս բաց արդէն հաշւում է 15 միլիոն ոսկի: Պետական հասոյթները պակասում են: Ազգաբնակչութիւնը, մասնաւոր նիւթական թշուառութեան, ի վիճակի չէ վճարելու ծանր տուրքերը, իսկ կառավարութիւնը, զուրկ եկամտի ուրիշ աղբիւրներից, հարկազրւած է նոր տուրքեր դնել:

Տնտեսական այս խնտանելի կացութիւնից դուրս գալու համար Անգորան ստիպւած է

ձեռք մեկնել արտասահման: Ո՞րտեղից, ո՞ր երկրից ճարել անհրաժեշտ դրամը: Դաշնակից ու բարեկամ Մոսկւայում, բայց Մոսկւան ինքն էլ, ընկած աշխարհէ աշխարհ, վարկեր է որոնում. մնաց որ Մոսկւան էլ անվերջ չի կարող տալ, առանց այն էլ Անգորայի պարտքը Մոսկւային խոշոր համեմատութիւնների է հասել: Դիմել Եւրոպային: Տարիների փրկարարուն այդպէս ցանցում է, որ Եւրոպայում էլ դրամ տալու ցանկութիւն ունեցող չկայ. մէկը չի հաստում քեմալական բեժմի լըրջութեան ու տեւականութեան. միւսը չի հաւանում Թիւրք-բոլշեւիկ մտերմութեան. երրորդը, սո՛հասարակ, վստահութիւն չունի Թիւրքիայի վճարունակութեան վրա. երէկւայ պարտքերը դեռ մնում են անվճար, ի՞նչ երաշխիք, որ նոր փոխառութիւնները չեն կորչի:

Եւ Եւրոպայից յուսահատ՝ Թիւրքիան ձեռք մեկնում է դէպի Նոր Աշխարհ: Մեղը ու շաքար է ծորում Շուքրի բէշի շրթունքից՝ հրապուրելու համար ամերիկեան միլիոնատէրերին, որ դրամ տան Թիւրքիային: Աւնատուրի անհաշիւ հարստութիւնները, հանքերն ու դաշտերը, նաւահանգիստներն ու գործարանները զրկարաց սպասում են ամերիկեան դրամադրիին՝ շահելու ու շահեցնելու համար: Եւ, սակայն, գործնական ամերիկացիք լսում են ժպտերես, բայց դրամ չեն տալիս, ու Շուքրի բէշը մնում է ձեռնունայն: Այս անխաղաղ ու անտոյգ պայմաններում ո՞վ է յիմարացել միլիոններ թափելու քեմալապետութեան սրկողը...

Արտաքին փոխառութեան յաջողութեան պայմաններից ամենահիմնականը ներքին ապրուրութիւնն է, ազգաբնակչութեան շինարար աշխատանքի ու ժողովրդական տնտեսութեան հիմքերի սպասովութիւնը, մինչ Թիւրքիայի ներքին կեանքը շարունակում է մնալ վրդովւած ու աբկոծ: «Արեւելեան նահանգները»

ամբողջապէս բռնած են անիշխանութեամբ. քրդական խոյր չի դարձանուում, ընդհակառակը, վէճերը երթալով տարածուում ու խորանում է: Մի կողմի մ ապստամբութիւնը գոպուում է, բռնկուում է մի ուրիշ կողմ: Մի տեղ «աւագակները» շարդուում են, գլուխ են բարձրացնում ուրիշ տեղ: Երէկ՝ Արարատ ու Չիրակ, այսօր՝ Տէրութ: Վաղը՝ ո՞վ գիտէ ուր: Արակը վառւած է ու այլեւ չի մարի, մինչև չհասնի իր տրամաբանական վարձատրին: Անգորպում լա՛ւ են դիտակցում այդ:

Արեւելեան նահապետների օրինակը վարակիչ է պետութեան եւ միւս շրջանների համար: Դժգո՛ւութիւններն ու «աւագակութիւնները» նորից գլուխ են բարձրացնում այստեղ ու այնտեղ: Տնտեսական սուր տագնապը մի կողմից, անտանելի հարկերն ու կոտորակարկան խրտութիւնները միւս՝ ժողովրդին մղում են դէպի յուսահատութիւն եւ յուսահատական արարքներ: Դժգո՛ւութիւններն ու ներքին խռրումները խտանում ու ձեւակերպուում են ե՛ւ արտասահմանեան հակաքեմալական շարքերում: Երուզակէ՛մում պատրաստուող համալրամական համագումարն էլ մէկ արտայայտութիւնն է այդ տրամագրութիւնների: Եւ քեմալական չաղքենասէրները գեթարոյն ճիգ են թափում՝ յաղթահարելու համար այս դժարութիւնները: Կասկած չկայ, որ արտաքին ճակատներում յաղթական քեմալիզմի յեղափոխական շնչի տակ պատրաստել է մի սերունդ, որ, իրօք, ձգտում է բարենորոգել ու արդիացնել Թիւրքիան, բայց առարկայական արգելքները չա՛տ են մեծ, եւ դեռ հարց է, թէ վերջնական ի՞նչ փութի կը յանդի Թիւրք յեղափոխութիւնը:

Այսպէս է արդի Թիւրքիան. ճակատին՝ կարմիր ու կանանչ գոյներով զարդարուն պերճաշուք ցուցանակ, իսկ ցուցանակի՝ յետեւը՝ փտութիւն ու քայքայում: Զուր չէ, որ Լամեթ ու Քեմալ այնպէս ամուր փակել են բոլշեւիկների փէշերին. միայն բոլշեւիկեան գործելակերպն ու Մոսկուայի բարեկամութիւնը կարող են երաշխաւորել նրանց իշխանութեան յարատեւութիւնը: Ինչպէս ստալինեան միահեծանութիւնը Ռուսաստանում, քեմալական բռնակալութիւնն էլ ապրում է բացառապէս մերկ բռնութեան ու սեխների ուժով: Քանի սեխները կան, քանի կանգուն է բոլշեւիզմը, անխախտ կը մնայ և քեմալական իշխանութիւնը:

Այստեղ է ներկայ Թիւրքիայի ոյժը, բայց եւ տկարութիւնը միաժամանակ: Մոսկուայի բարեկամութիւնը իր հետ բերում է եւ վտանգաւոր հետեւանքներ, որովհետեւ խորհրդային իշխանութեան բացասական համբաւը չի կարող չանդրադառնալ եւ Թիւրքիայի միջազգա-

յին դիրքի վրա: Թիւրքիան Գերմանիա չէ, որ մեղուենակ լինի յեւեւու բոլշեւիկները վրա եւ միեւնոյն ժամանակ պահէ իր կատարեալ անկախութիւնը արեւմուտքի ու Մոսկուայի միջև: Կա՛մ Մոսկուա, կա՛մ Եւրոպա—այսպէս է դըժուարած հարցը Թիւրքիայի համար: Այսօրւայ պայմաններում, Թիւրքիան չի կարող գոյութիւն ունենալ առանց Մոսկուայի գործօն աջակցութեան: Խզել կապերը Մոսկուայի հետ, նշանակում է կորցնել ներքին եւ արտաքին յենարանները: Զեռք մեկնել Եւրոպային, նշանակում է թիկունքում ունենալ բոլշեւիկների թշնամութիւնը: Մնալ սերտ բարեկամութեան մէջ խորհրդային իշխանութեան հետ, նշանակում է զրկւել դրամատիրական աշխարհի վրտասնութիւնից ու լայն օժանդակութիւնից, որ ստել է՝ շարունակել մաշակ տնտեսական հիւծախախց: Անա այն ճակատագրական հակասութիւնները, որոնց ճիրաններում դալարում է այսօր քեմալական Թիւրքիան եւ որոնք չեն վերացել ո՛չ Լամեթ—վեյնիզիոսեան համբոյրներով, ոչ էլ բազմաձայն քարոզչութիւններով եւրոպական կամ ամերիկեան դրամատիրական հրապարակներում:

Ամենչն իրական ու կարեւոր փաստը մեզ համար այս բոլորի մէջ է հարկէ, Թիւրքբոլշեւիկեան բարեկամական դաշնագրի երկարաձգումն է հինգ տարով: Ասել է, հինգ տարի եւ Թիւրքիան յանձն է առնում մնալ Մոսկուայի ինամակալութեան տակ: Ասել է նոյնպէս, որ հինգ տարի եւս Մոսկուան շարունակելու է կատարել ժանդարմի դերը Թիւրքիայի արտաքին եւ ներքին սահմանների վերաբերմամբ:

Թիւրքբոլշեւիկեան յարաբերութիւններից է կախւած եւ Թիւրքիայի միջազգային դիրքը Եւրոպայի ու Ամերիկայի հանդէպ, ինչպէս նաեւ դրամատիրական աշխարհի վերաբերումը դէպի Թիւրքիայի տնտեսական կարիքները: Հազիւ թէ՛ այս պայմաններում եւրոպական կամ ամերիկեան դրամադալուխը յօտարի խոշոր ներգրումներ կատարել Թիւրքական ժողովրդական տնտեսութեան մէջ: Ուրիշ խօսքով, այն քայքայող հիւանդութիւնը, որով բռնւած է Թիւրքիայի պետական մարմինը, չի կարող դրսից դարձմանում ստանալ, իսկ ներսի միջոցները վաղուց արդէն ճանաչւած են անբաւարար:

Այսպէս են պատկերանում այսօր գործերը «Թիւրքական ճակատում»: Ուռուցիկ խօսքերն ու ցոյցերը թո՛ղ չմոլորեցնեն. բացասական ազդակները Թիւրքիայի զարգացման ուղիների վրա անհամեմատ աւելի ուժեղ են, քան քաղաքական ու տնտեսական վերելքն ապահովող գործօնները:



ՄԻՀՐԳՍ ՄԻՐՁԱԽԱՆԵԱՆ

ՍԱՐԳՅՈՍ ՇԱՀԻՆԵԱՆ

(Տես «Գրօշախ», 1931թ. № 11)

ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Անդրկովկասի խորհրդային իշխանութեան մէջ տիրող « հիմնական սխալները » և Կոմկուսի ներքին փտութիւնները մի անգամ ևս գրաւել են Մոսկւայի ուշադրութիւնը: «Պրաւդա»յի նոյեմբ. 3 համարում հրատարակած է Համ. Կոմ. Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի 31 Հոկտ. ընդարձակ որոշումը Անդրերկոմի և Հայաստանի, Ազրբէյջանի ու Վրաստանի Կենտրոնների գեկուցումների առթիւ, որից երևում է, որ մինչև այժմ մեր արած բոլոր մերկացումներն ու քննադատութիւնները գրեթէ ամբողջութեամբ եղել են տեղին:

Այսպէս, Համ. Կոմկուսի Կենտկոմը ընդգծում է, որ «Անդրերկոմի և ազգային Կոմկուսների Կենտկոմների աշխատանքների մէջ կատարւած են լուրջ քաղաքական սխալներ, որոնցից հիմնականը Հանդիսանում է գեկուցելիական խնդրում կատարւած սխալը»:

Ո՞րն է գեկուցելիական խնդրում կատարւած սխալը: Մոսկւան հաստատում է, որ Անդրկովկասի բոլշևիկները «հացամթերման գործում թոյլ են տւել մի շարք խիստ կոպիտ խեղճութիւնումներ», իսկ երկրագործութեան հուսարականացումը կատարել են առանց նախնական լուրջ պատրաստութեան, որի հետևանքով «կուլակային և հակախորհրդային տարրերը հնարաւորութիւն են ստացել օգտագործելու կատարւած սխալներն ու խեղճութիւնները իրենց արգեցութիւնը դիւրում ուժեղացնելու համար»: Մեղմ խօսքերով ցոյց է տրւած այն վէրքը, որը անընդհատ և անհաշիւ փաստերով մատնանշել ենք մենք մեր քննադատութիւնների մէջ: «Հացամթերումը» Կովկասի պայմաններում վե-

րածւած է բացայայտ թայանի. կոլխոզների կառուցումը՝ գիւղատնտեսութեան բռնի քայքայման և ժողովրդական տնտեսութեան փշայցման:

Ինչ մի քանի օր առաջ Հայաստանի Կենտր. Վեր. Յանձնաժողովը մատնանշում էր, որ Աշտարակի շրջանում կոմունիստ դեկավարները «կոլտնտշարժումը կոպիտ կերպով դեկրետաւորել են. դէպի կոլտնտեսութիւնները գեկուցելիական նոր հոսանք ստեղծելու նպատակով՝ կոմունիստներին և կոմերիտականներին կայուն առաջադրանքներ և անփոփոխելի ժամկէտներ են տւել. մի շարք գեկուցումներում գեկուցողները ոչ-կոլտնտեսականներին հանել են իրենց կազմից, կոլտնտշինարարութեան վերաբերեալ խորհուրդների ճիշդ համապատասխան որոշումը սխալ են մեկնաբանել՝ «քեզ տրւում է մէկ ժամ ժամանակ, որոշի՛ր՝ կամ կոլտնտեսութիւն կուլակի դէմ, կամ կոլտնտեսութիւնից դուրս և կուլակի հետ ընդդէմ կոլտնտեսութեան»: Գիւղացիներին վախեցրել են, թէ իր մացեն ունեւոր տնտեսութիւնների ցուցակի մէջ, նթէ նրանք կոլտնտեսութիւն չմտնեն. սպառնացել են թէ կոլտնտեսութիւն չմտնող գեկուցելիների երեխաներին կը վտարեն դպրոցներից, ինչպէս նաև կը յատկացնեն նրանց վատթարագոյն հողեր»*):

Ո՞ւր միայն սպառնացել, այլ և գործադրել են ըստպատասխան: Ո՞ւր միայն Աշտարակի շրջանում, այլ և ամբողջ Հայաստանում: Կոլխոզներ ստեղծելը և կուլակաթափութիւնը կործանեց Հայաստանի գեկուցանտե-

* «Խորհրդ. Հայաստան», 5 Յոյնիբեր:

ստիճանը -- այս մասին մենք շատ ենք խօսել ու փաստեր բերել: Եւ Հայկոմկուսի Կենտկոմը, զգուշաւոր արտասայտութիւններով, հաստատում է մեր ասածը:

Մոսկւան հաստատում է նոյնպէս, որ Անդրերկրում «չի պահանջուի... Անդրկովկասեան Դաշնակցութեան մէջ մտնող ազգային հանրապետութիւններէ լայն ինքնուրոյնութեան և տնտեսական նախաձեռնութեան ծաւալումը: Անդրերկրում թող և տեւ տարապայման կենտրոնացում Անդրկովկասեան Դաշնակցութեան տնտեսական ու մշակութային շինարարութեան ղեկավարութեան մէջ, որի հետեւանցով մի շարք ճիւղերում հանրապետական մարմինները զարգէլ են դիմազուրկ (ՄՏԿ շինարարութիւն, կադրերի պատրաստում, հանրապետական նշանակութիւն ունեցող մի շարք ձեռնարկութիւններէ փոխանցումը Ֆելդերայիային, Անդրբամբակ կոմի անձրւոյ գործողութիւնները ջրային տնտեսութեան քնագատումը, շրջաններին ուղղած անմիջական կարգադրութիւններէ ձեռով և այլն):»:

Դարձաւ, սա նոյն մեղադրանքն է, ինչ որ անվերջ կրկնում ենք մենք, թէ՛ Անդրկովկասեան Դաշնակցութեան մէջ մտնող ազգային հանրապետութիւնները աւելի և աւելի երաւագրուում են, որ կենտրոնացումը հասել է այն աստիճանի, որ, օրինակ, Հայաստանը փաստորէն լայն դարձել է մի գաւառ՝ տեղական խղճով իրաւունքներով:

Վերջապէս, «կուսակցական գծով», Մոսկւան հաստատում է, որ «Անդրերկրային և հանրապետութիւններէ ղեկավար կադրերէ մէջ առանձին անձերի կողմից մղուած է անկղզուք պայքար արդէսութեան համար («խմբապետական» տարբեր), և այդ հողի վրա ղեկավար կադրերի ընտրութիւնն ու գործիչներէ բաշխումը, մի շարք զէպզերում, կատարուած է ոչ թէ կուսակցական գործնական սկզբունքներով, այլ նայելով թէ որ խմբակցութեան է պատկանում ենթակայն: Իբրև հետեւանք այս բանի, յաճախ, ղեկավար դիրքերի համար առաջ են քաշուած ակնյայտի-կերպով տկար աշխատողներ: Կազմակերպութեան մէջ տեղի են ունենում բոլշևիկեան կարգապահութիւնը անպատժ կերպով խախտող մի շարք փաստեր»:

Ի՞նչ են այս մեղադրանքները, եթէ ոչ «Իրօշակ»ի և, առհասարակ, դաշնակցական մամուլի էջերում ամէն օր որձանագրուող փաստերը: «Հակակուսակցական խմբադրուումներ», «հին» ու «նոր» ղեկավարութիւններէ անվերջ զգուշութիւն, վտխարած ամբաստանութիւններ ու շեղբացում, «խմբապետական տարբեր»ի շահատակութիւններ, «աջ օպորտունիզմ», «ձախ-քեպաղէտողութիւն», անհաշիւ թեքումներ ընդհանրական գծից, «իդէոլոգիական» խարխախումներ, մութ դաւեր, միմիայն ոտք տակ սպարն դնել, արժողի ու իշխանութեան կոխ -- ահա Հայկոմկուսի ծոցում իշխող կարգերն ու բարձրը: Մոսկւան միայն, յետին թւով, արձանագրում է այն, ինչ որ վաղուց արդէն յայտնի է ամենքին:

Որքան և մտայլ լինի, սակայն, խորհրդային ու բոլշևիկեան իրականութիւնը, Համկոմկուսի Կենտկոմի որոշումը ոչ մի նոր բան չի ասում մեզ և արժէք ունի սով դրսի ալիարհի համար, որպէս արդէն իսկ յայտնի փաստերի հեղինակաւոր վաւերացում պերսոն իշխա-

նութեան կողմից: Կոմկուսի որոշումը աւելի հետաքրքրական է ուրիշ տեսակէտից, իբրև արտասայտութիւն մեր կողմից նոյնպէս ուժգնօրէն մերկացւած այն քաղաքական գծի, ըստ որի Անդրկովկասը Մոսկւայի աշխուհի գիւտում է միայն որպէս «հումք» մատակարարող գաղութ, իսկ Հայաստանը՝ բացառապէս իբրև աննշան մի ծայրադասում:

Անդրերկրի և ազգային հանրապետութիւնների Կենտկոմերի սխալները երևան հանկուց յետոյ՝ Համկոմկուսի Կենտկոմը առանձին-առանձին պարզում է այն շինարարական ծրարիչները, որոնք պէտք է կիրառուեն կեանքի մէջ անդրկովկասեան իշխանութեան կողմից: Ահա յատուղ Մոսկւայի հողի երևան է դալիս իր բովանդակ աշխարհակայական մեղքութեամբ:

Շինարարական ո՞ր ձեռնարկներն է համարում Մոսկւան ամենից կարևոր: Թէ արդիւնաբերութեան և թէ դիւրատնտեսութեան ապարգիւցում, ամենից առաջ, անհրաժեշտ են համարուած այնպիսի ձեռնարկներ, որոնց անմիջական նպատակն է կենտրոնիս դրամ, հում նիւթ և արտածման սարանքեր հասցնելը -- նաւթ, բամբակ, մանրանէզ, պղինձ, քարածուխ, ծխախոտ, թէյ, դիմի, մետաքս և այլն: Երկրորդական և երրորդական նշանակութիւն է տրուած գուտ սեղական, երկրի ազդարանութեան կարիքներին ծառայող ձեռնարկներին և, հետևաբար, նաև ժողովրդական նախաձեռնութեան և ինքնագործունէութեան: Մրաքրւած է, առաջին հերթին, շինել ու վերակառուցանել տնտեսական «գիւղատներ», այսինքն՝ խոշոր տնտեսական միաւրներ, համախիթեանական արժէք ներկայացնող ձեռնարկութիւններ, մինչ տեղական տնտեսութեան կարիքները մատնած են ճօպորտունիտական ինքնահասի»:

Այստեղից և այն արհամարհանքն ու մեկուսացումը, որին ենթարկւած է Հայաստանը:

Համկոմկուսի Կենտկոմը հետևեալ հրահանգներն է տալիս Անդրերկրի և Վրաստանի, Ազրբէյջանի ու Հայաստանի Կենտկոմներին յառաջիկայ տնտեսական գործունէութեան համար: Այդ հրահանգները բաժանուած են, զլիսաւորապէս, ըստ հանրապետութիւնների, բայց կան և ընդհանուր բնոյթ կրող: Ըստ հանրապետութիւնների --

Վրաստանի համար հրահանգում է՝ «արագացնել ցաւթի արդիւնաբերութեան» կազմակերպումը Վրաստանում նոր գտնուած հանքահողերի վրա»:

Հրահանգել է Անդրերկրի և Վրաստանի Կենտկոմին յատուղ ուշադրութիւն ներել Քաթուրի նաւթագիտի գործարաններին՝ ապահովելով ծրարի կատարեալ իրագործումը:

«Յանձնարարել Անդրերկրի և Վրաստանի Կենտկոմին Միութեան Ժողովախորհրդի հետ միասին անյապարհ միջոցներ ձեռք առնել ապահովելու համար ԳրուչնիՖոի (Վրաստանի նաւթային կազմակերպութեան) տնտեսական պաշտած ղեկավարութիւնը, հասցնելու համար ԳրուչնիՖոին սարքաւորում և սրահանջւած վարչական-տեխնիկական մասնագէտ աշխատողներ այն պայմանով, որ 1932ին արդէն սկսել նաւթի արդիւնաբերական արտադրութիւնը»:

«Մինչև 1932թ. մտրտ աւարտել Չևտաֆոնի Փետոմանդանէզի գործարանը Վրաստանում: Առաջարկել

Ժողովները, արագացրած կարգով, մշակել ալի-
միսիտովի գործարարի կառուցման ծրագիրը և անցնել
չինութեանն:

«Յանձնարարել Միութեան Ժողովները արագացնել
Տիվարչիկի անխաճանքերի մշակութեան գործը,
իսկ Ջրային գործառնութեան՝ մէկ ամսւայ ընթացքում
նեխակայանի անխի նաւահանցատի կառուցման
ծրագիրը և՛ 1932թ. յունւարից ձեռնարկել շինութեանն:

«Կենտրոնը մարտական խնդիր է դնում Անդրկովկասի,
ի մասնաւորի, Վրաստանի կուսակցական կազմակերպութիւնների առջև առաւելագոյն չափով ընդլայնել
թէյի մշակութիւնները... Ի նկատի ունենալով,
որ երկրորդ Հոգաբնակիչ Անդրկովկասը պէտք է բաւարարէ
ողջ Խորհրդի Միութեան թէյի պահանջը»:

«Պարտաւորութիւնն զենէ Անդրերկրի և Վրաստանի
Կենտրոնի վրա՝ մշակել որոշ ծրագիր Անդրկովկասի
ամառանոցային գործի կազմակերպման և այս տեսակետից
Անդրկովկասում գոյութիւն ունեցող հարուստ հնարաւորութիւնների
օգտագործման համար: Առաջարկել Անդրերկրի, ազգային
Կոմկուսակցութիւնների կենտրոններին և, առաջին հերթին,
Վրաստանի Կենտրոնին՝ ամրացնել Ղրխավարութիւնը՝ կազմակերպելով
այդ միութեան ղեկավարութեան տակ յատուկ բաժնետիրական
ընկերութիւններ ապաքինարանների կառուցման համար:
Ի մասնաւորի, առաջարկել Վրաստանի Առողջապահութեան
գործառնութեան արգէլ 1932ին սկսել շինել ապաքինարաններ
ու հանդստեան տներ Անդրկովկասի ամենակարևոր
ամառանոցներում (Մխալտուրո, Արասթուման, Բորթոմ,
Սեւ ծովի եղերք)»:

Արքայանի համար հրահանգում է, ի հարկէ, առաջին
հերթին, «կենտրոնանալ բոլոր միջոցներով Արքայանի
նաւթի արտադրութեան և մշակութեան զարգացման վրա»
և այդ նպատակով պահանջւած է շարժման մէջ
դնել անդրկովկասեան կուսակցական կազմակերպութիւնների
և, առաջին հերթին, Արքայանի ու Բաթումի կազմակերպութեան
բոլոր ուժերը»: Ենթադրում է վերից վար
հիմնովին վերակազմել Արքայանի նաւթային
անտեսութիւնը՝ թէ արտադրութիւնը, թէ՛ մշակութիւնը
և թէ՛ փոխարդութիւնն ու արտաճումը»:

Առաջարկում է յատուկ ուշադրութիւն դարձնել
«մասնաւորապէս Արքայանի ելեկտրականացման»: «Ի
մասնաւորի քննել Դարասախիայի և Ջուրովի ելեկտրակայանների
չինութեան արագացման խնդիրը»:

«Առաջարկել Անդրերկրի և Միութեան Ժողովները
հարկէ արագացնել բոլոր նախապատրաստական աշխատանքները
սկսելու համար, 1933ին, Դաշքեսանի (Արքայանի)
մետաղադրածական գործարարի կառուցումը»:

Ընդարձակել Արքայանի բամբակի մշակութիւնը,
նոր միջոցներ յատկացնել Արքայանի բամբակի որակի բարձրացման
համար:

Առանձին ուշադրութիւն դարձնել ոռոգման վրա՝
բամբակահողի քանակն աւելացնելու նպատակով:

Եւ, վերջապէս, Հայաստանի համար հրահանգում է՝
«պղնձի արտադրութիւնը աւելացնելու նպատակով

անմիջապէս ձեռնարկել Հայաստանի Ղափանի ու Ալաշկերտու
պղնձահանքերի հիմնական վերակառուցման ու վերասարգործման»:
Եւ ուրիշ ոչինչ:

Երեք հանրապետութիւնների վերաբերող առանձին-
առանձին խնդիրներից գառ արւում են և ընդհանուր
հրահանգներ, որոնք վերաբերում են ամբողջ Անդրկովկասին,
ինչպէս անասնապահութեան զարգացումը, տեխնիկական
բոյսերի մշակութիւնը, տեղական ոռոգումն ու ելեկտրականացումը,
և այլն:

Փորձեցէք ամփոփել այս տեղեկութիւնները: Վրաստանի
համար՝ նաեւ արդիւնաբերութիւն, Բաթումի գործարաններ,
մանգանիզի գործարան, ալիմիսիտի գործարան,
ածխահանք, ածխիկ նաւահանգիստ, թէյի մշակութիւն,
ամառանոցներ — 8 խոշոր ձեռնարկի իրենց
այլապահ ճիւղաւորումներով: Արքայանի համար՝
նաւթարդիւնաբերութիւն, ելեկտրակայաններ, մետաղադրածարան,
բամբակ, ոռոգում — 5 խոշոր ձեռնարկի իրենց
ճիւղերով: Եւ Հայաստանի համար՝ պղնձ — 1 ձեռնարկ:
Համեմատութիւնն այնքան ակնբայն է, որ ո՛չ մէկ
բացատրութեան պէտք չունի: Հայաստանը դրւած է
Արխագրայից էլ ցած: Անդրկովկասի շինարարութեան
յոսկիացած գումարների մեծագոյն մասը գործադրւած է
Վրաստանում և Արքայանում, Հայաստանում՝
փչրանքներ միայն:

Ինչո՞ւ է այսպէս: Հայ բուլեղները պատասխանում են,
թէ Հայաստանը գուրկ է համամիութեանական հետաքրքրանք
նեխակայանի անտեսական արժէքներից, այդ պատճառով
խոշոր ձեռնարկների զլխաւոր մասը կատարւում է
Վրաստանում և Արքայանում: Ընդհանր է այս ինքնաբերականը:
Ո՛չ ճիշտ չէ:

Այսպէս, Մոսկւան պէտք ունի բամբակի, այդ պատճառով
Արքայանում ոռոգման մեծ աշխատանքներ է ծրագրում
Նրիւն համար Միլի և Մուղանի անապատները: Բայց
յոնքան արժէք ունեցող անապատ կայ և Հայաստանում՝
Սարգաթապատի ընդարձակ դաշտ, որի ոռոգումով մօտ
50,000 դեհեանին քանդելի հող կը բացուի,
Հայաստանի բամբակագործութեան ծաւալը երկու
անգամով կը լայնացուի և 30—40,000 գաղթականներ
բնակութեան տեղ կը դասեն: Մեծ Սարգաթապատի
ոռոգումը համամիութեանական նշանակութիւն
ունեցող կարևոր մի գործ է, բայց թէև Արքայանում
անհամեմատ աւելի շատ հող կայ քան Հայաստանում,
Մոսկւան միլիոններ է յատկացնում Մուղանի ու
Միլի դաշտերի ջրային աշխատանքներին, իսկ Սարգաթապատի
անապատը շարունակում է մնալ մեռած փոխանակում:

Մի ուրիշ, ոչ պակաս կարևոր խնդիր՝ Սեւանի օգտագործումը:
Սեւանի «գործը» ահա քանի տարի է զբաղեցնում
է Հայաստանի «ողջ Հասարակաշխութիւնը»:
ուսումնասիրութիւններ են կատարւում, յատակագծեր
կազմւում. քննւած և ապագայում խնդիր է, որ Սեւանի
ջրային աշխատանքները կարևոր են ոչ միայն
Հայաստանի տեղական կարիքների տեսակէտից,
այլ և «միութեանական մասշտաբով», բայց և այնպէս
միլիոններ են ծախուում Վրաստանի... ամառանոցների
վրա, իսկ Հայաստանի համար կենսական համարող
մի պահանջ անտեսւում է:

ել, վերջապէս, Երեւան—Աղստաֆա երկաթուղու հարցը: Նոյնպէս բազմիցս քննած, չափւած, հաշուած ու հաստատուած է, որ այս երկաթուղալիծը միայն Հայաստանի տեղական կարիքներին չպիտի ծառայէ, այլ, կարծացնելով ճանապարհը Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, օգտակար է լինելու ամբողջ Միութեան: Սակայն և այնպէս, միլիոններ ու միլիոններ ևն տրամադրուած Վրաստանի ածխահանքի համար յատուկ նահանգներու շինութեան, իսկ Հայաստանի երկաթուղու պահանջը յետ է մղուած:

Կարիք կա՞յ շարունակելու: Հայաստանում պղնձից դատ համաժողովներական արժէք ներկայացնող ուրիշ ձեռնարկներին էլ տեղ կայ, և դուր են հայ բուլշեփներին չեմեղանքի ճիգերը: Բայց եթէ, այնուամենայնիւ, Հայաստանում «միութեանական մասշտաբի» գործեր չեն կատարուած, զիլաւար պատճառը այն մեկուսացած, արհամարհելի վիճակն է, որին մատնուած է Հայաստանը: Մինչ վրացի և ապրիլյանցի բուլշեփները ոգի է բռին աշխատում են խորհրդային հնարարութիւններն օգտագործել ի նպաստ իրենց երկրի, մինչ Վրաստանում և Արբրէշտում անկայայտի կերպով նեղագլխական քաղաքակառուցիւն է հետադիւրուած, հայ Փանչուճիները շարունակում են գտնանցել համաշխարհային յեղափոխութեան և ուղղափառ լենինիզմի մասին և արհամարհանքով նայել Հայաստանի տեղական կարիքներին: Նրանց համար տարբերութիւն չկայ՝ Մուղանի կողողի թէ՛ Սարգսապարը: Հայաստանում երկաթուղի կը շինուի թէ՛ Վրաստանում և նրանց ալք թէ՛ թեւեւս Վերաբերումը ճարտարութեամբ օպտագործուած է թիֆլիսում ու Բապոււմ, ուր մարդիկ հասկանում են շատ լաւ, որ Մուղանը թուրքի համար կամ

Վրաստանի հողը վրացու համար աւելի կարեւոր են, քան Սարգսապարը, կամ Ելեան-Աղստաֆա երկաթուղին...

Համամիութեանական Կոմկուսի Կենտկոմի այս նոր որոշումները քննութիւնը նորից ու նորից հրապարակ է դնում այն տխուր փաստը, որ ինչպէս ամբողջ Անդրկովկասը, այնպէս և Հայաստանը դրած են պաշտօնային կախում մէջ կենտրոնական Ռուսաստանից: Ինչպէս Հնդկաստանը Անդլիտայի համար, Անդրկովկասը զաղութի դեր է կատարում Ռուսաստանի տնտեսական գործառնութեան մէջ: Անդրկովկասը ինքնարժէք չէ. Անդրկովկասի ժողովրդի վիճակը Մոսկուային շատ զիջ է հետաքրքրում: Նրան հարկաւոր է Անդրկովկասի նաւթը, բամբակը, պղինձը, մանդանկը, թէ՛ յը, ծխախոտը, մետաքսը, դիմին: Ինչպէս Անդլիտան միլիոններ չի խնայում Հնդկաստանի կամ Մուղանի հանքերն ու «տեխնիկական րոյտերը» մշակելու համար, Մոսկուան էլ խոշոր «ներքերումներ» է անում Անդրկովկասի «էկոնոմիկայի» մէջը, որպէսզի Ռուսաստանի գործարանները ունենան հում նիւթ և Վնէշտորպը արտածման առատ և աժան սարքեր:

Աւելի ցաւալի է. Հայաստանի դրութիւնը, որ ենթակայ է կրկնակի գաղութայնացման. մէկ կողմից քամուած է Մոսկուայի ձեռքով, միւս կողմից՝ շահագործման աւարկայ է Թիֆլիսի համար: Ճնշած կըրկնակի հարստահարութեան ծանր երկանաքարի տակ՝ Հայաստանը հարստահարուած ու հիւժուած է անխնայ, իսկ հայ բուլշեփները երանելի միամտութեամբ «սոցիալիզմ են կառուցում»:

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԻՐԱՎԱԶՈՒՐԿ

Երբ 1920թ. զեկտ. 2ին Հայաստանի պետական զեկն անցաւ բուլշեփներին, այդ ոչ թէ լոկ իշխանութեան փոփոխութիւն էր կամ նոր վարչաձևի հաստատում, այլ հայ քաղաքական կեանքի փոխանցում էր պատմական մի նոր փուլ: Այդ թեւականից սկսած, Հայաստանը կորցնում է իր ուրույն քաղաքական դէմքը և միանգամայն գրկուած այն բոլոր ազդեցիկներից, որոնք հնարարուր էին դարձնելու Միացեալ և Անկախ Հայաստանի ստեղծումը: Տասնմեկ տարի առաջ, մեր երկրում վերականգնել նախայեղափոխական դրութիւնը: Հայաստանը դարձաւ Ռուսաստանի մէկ ծայրագաւառ:

Լենինի կուսակցութեան հիմնական սկզբունքներից մէկն էլ եղել է բոլոր ճնշած ու իրաւարարիկ ազդութիւնների պատառուրդը: Սակայն, այդ նշանաբանը Ռուսաստանը գործադրում է այն չափով, որքան որ պահանջում են իր յաղթանակի ապահովումն ու քաղաքական շահերը: Պատմութիւնը ցոյց տւեց, որ Լենինը մէկ ձեռքով ստորագրում էր Հայաստանի անկա-

խութիւնը, իսկ միւս ձեռքով վաւերացնում էր այնպիսի դաշնագրեր, որոնք խորասուզում էին Հայաստանի քաղաքական բոլոր իրձերը:

Այսպէս, 1917թ. զեկտեմբերեան ծանօթ զեկրետով յայտարարում էր Թիւրքահայաստանի ինքնորոշման և անկախութեան իրաւունքը, իսկ 1921թ. մարտ 16ի դաշնագրով վերահաստատում է Իրեստ-Լիտովսկի սահմանը, որ դոյութիւն ունի և այսօր Հայաստանի և Թիւրքիայի միջև, այն տարբերութեամբ, որ Սուրմալուն էլ յանձնուած է Թիւրքերին և Նախիջևանը յայտարարում ինքնավար հանրապետութիւն՝ Արբրէշտի հովանաւորութեան տակ: Չպէտք է մոռանալ, որ 1921 թի դաշնագրերը ստորագրել է այն ժամանակ, երբ Վրաստանը խորհրդայնացել էր քսան օր առաջ և Հայաստանում էլ իշխանութիւնը դանուած էր ապստամբ ժողովուրդի ձեռքը: Աւելացնենք և այն, որ այդ պաշտպարի նախալիծը կազմել էր Մոսկուայում 1920թ. յունիսին, երբ. անդրկովկասեան հանրապետութիւնները

րից միայն Ազրբէջանի խորհրդայնացումն էր տեղի ունեցած :

Դիւանապետական այս բարբարոս քայլից շնորհիւ, Ռուսական իր թիւերը տարածեց նաև Հայաստանի տնտեսութեան վրա : 1921թ. սեպտեմբերի 30ին, Հայաստանի և Ռուսաստանի խորհրդային իշխանութիւնների միջև կնքուեց մի դաշնագիր, համաձայն որի Հայաստանի եկամտական կեսանքի անօրինումը յանձնուեց է Ռուսաստանին : Այդ համաձայնագրով, Հայաստանի թէ՛ բիւջէին ու դրամանիշների ինչպիսիք և թէ տուրքերի ու եկամուտների սահմանումը փոխանցուեց է Ռուսաստանին : Հայաստանը գրեւորեց և տնտեսական Երաւունքները :

Պարզ է, որ քաղաքական ու տնտեսական նման իրաւական վիճակում՝ Խորհրդային Հայաստանը սակայն էր Կարուեց ստորագրել 1921թ. հոկտ. 13ի հայտնական քարտեզավան դաշինքը, որը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մարտ 16ի դաշնագրի կրկնութիւնը : Իսկ ձէնովայի խորհրդաժողովի նախորեակին, 1922 թ. փետրուար 22ին, Մոսկուայում կնքուեց մի պայմանագիր, որով Հայաստանը հրաժարուեց արտաքին քաղաքականութիւն վարելու իրաւունքից, իր դատի պաշտպանութիւնը յանձնուեց է Ռուսաստանին : Յայտնի է, թէ ձէնովայում կամ թէ յետոյ՝ Լոզանում, Ձիչերինն ինչպէս պաշտպանեց հայկական դատը...

Հայաստանի անկախութիւնը դառնում է սոսկ ձեւականութիւն, բայց, շատ յանցած, այդ ձեւականութիւնն էլ է վերանում :

1922թ. մարտ 11—12ին կայմուեց է Անդրկովկասեան խորհրդային Հանրապետութիւնների դաշնակցութիւնը, 1922թ. դեկտ. 13ին՝ Անդրկովկասեան Դաշնակցութիւնն և 1922թ. դեկտ. 30ին որոշուեց է կազմել Խորհրդային Հանրապետութիւնների Միութիւն, որը, սակայն, գործարուեց է միայն երկու տարի յետոյ :

Անդրկովկասեան Դաշնակցութեան կազմութեան նախաձեռնութիւնը Բազելի կայմաներպութիւնն իրեն է վերապատէ : Միւս կողմից, Հայաստանի բուլեիկիներն են աշխատում խել ստաբլութեան դափնին : Սակայն, փաստն այն է, որ Անդրկովկասեան Դաշնակցութիւնը կազմել է Ռուսաստանի Կենտ. Կոմիտէի որոշմամբ : Կուսակցութեան 12րդ համալուծարում (ապրիլ, 1923) Ստալինը յայտարարուեց է, որ այդ նպատակով Անդրկովկաս է ուղարկուել երկու յանձնարար՝ Ձերթիւնակու և Կամենեի գլխաւորութեամբ և Կենտկոմը երեք անգամ որոշում է կայացրել Անդրկովկասեան Դաշնակցութիւն կազմելու մասին : Աւանձնապէս այդ որոշման վրա սնվել է Լենինը :

Ինչո՞վ էր հիմնարարուեց Անդրկովկասեան Դաշնակցութիւն կազմելու անհրաժեշտութիւնը :

Նախ՝ առանց այդ Դաշնակցութեան, անհնարին էր համարուեց Անդրկովկասում խաղաղութիւն պահպանել և հաւասարութիւն ստեղծել : Երկրորդ՝ դաշնակցութիւնն անհրաժեշտ էին դառնում Անդրկովկասի սահմանները արտաքին թշնամիներից պաշտպանելու տեսակէտից և ներքին թշնամիների դէմ պայքարելու համար : Եւ երրորդ, որ պլխատուն է, տնտեսական առումով Անդրկովկասը համարուեց էր մէկ միւտուր և, ըստ ծրար

ըրի հեղինակների, առանձին Հանրապետութիւններէ տնտեսական վերելք չէր կարող տեղի ունենալ առանց անդրկովկասեան ժողովուրդների միութեան : Բայց այդ, անդրկովկասեան դաշնակցային կառավարութեանն էր վերապահուեց փոխարարութիւններ մշակել Ռուսաստանի Խորհրդային Հանրապետութեան հետ :

Այսպիսով, Անդրկովկասեան Դաշնակցութիւնն առաջանում է՝ հաւասարութեան, խաղաղութեան, ապահովութեան և տնտեսական վերելքի նշանաբանների տակ :

Ձնայած որ, ըստ սահմանադրութեան, Անդրկովկասեան Դաշնակցութիւնն ստիպուտ էր պահելու իր կազմի մէջ մտած իրաքանչիւր հանրապետութեան անկախ իրաւունքները, փաստային դաշնակցութիւնն այն ձևով է կազմակերպուեց, որ անդրկովկասեան Հանրապետութիւնները կորցնում են իրենց պետական ուրոյն դիմագիծը : Անդրկովկասեան Տնտեսական Բարձրագոյն Խորհուրդին է վերապահուեց Անդրկովկասի բոլոր հանքային հարուստութիւնների օգտագործման իրաւունքը և հողաշինարարութեան ու հողօգտագործման սկզբունքների ստորինում է : Բիւջէի իրաւունք սահմանողն էլ Հանդիսանում է անդրկովկասեան կենտրոնական մարմինը, առանց որի թոյլտուութեան, առանձին Հանրապետութիւններն իրաւունք չունին պետական և տեղական բիւջէներէ ծախքերը բողբելու նպատակով տուրքեր որուել : Նոյնպէս իրենց սահմանների պայմանագրերը կնքել կարուեց է միայն դաշնակցային կառավարութիւնը : Մի իտղբով, Անդրկովկասի ժողովրդական տնտեսութեան և նրա առանձին ձեւերի հիմունքների ու ընդհանուր ծրագրի որոշողը լինելու է անդրկովկասեան կենտրոնական կառավարութիւնը, որի վճիռները պարտադիր են թէ՛ Հրաստանի ու Ազրբէջանի և թէ՛ Հայաստանի համար :

Իբրև հետևանք այս դրութեան, առանձնապէս Երաւագործի վիճակ ստեղծեց Հայաստանի համար : Թէև դաշնակցութիւնն Անդրկովկասում հաւասարութեան շտապով սէտք է հանդիսանար, բայց, թէ տնտեսապէս և թէ քաղաքականորեն տուժող եղաւ Հայաստանը : Սահմանային որևէ փոփոխութիւն տեղի չունեցաւ և Հայպատկան հողերի մեծագոյն մասը մնաց Տաճկաստանի, Ազրբէջանին ու Վրաստանին : Իր քաղաքական ճակատադիրը կապուեց Ռուսաստանի, Վրաստանի ու Ազրբէջանի հետ՝ Հայաստանն այլ եւս է վիճակի չէր իր պահանջները ներկայացնել դաշնակց Տաճկաստանին : Եւ, վերջապէս, Անդրկովկասեան Դաշնակցութեան ղոյլութիւնն իսկ դառնում էր ծանր տապանաքար Հայկական Դասին :

Շէնց ստալին օրից, անդրկովկասեան երեք Հանրապետութիւններէ տնտեսապէս համարժէք ուժեր չէին : Վրաստանն իրեն այնքան զօրաւոր էր զգում, որ միւսների հետ տնտեսական միութեան կազմելու կարիքը բնաւ չունէր : Տնտեսական շահերով չէր էլ կապուեց հարևանների հետ, որ ձգտել Անդրկովկասի դաշնակցութեան : Դրանով սէտք է բացատրել այն, որ վրացիները երկար ժամանակ ընդդիմանում էին անդրկովկասեան Հանրապետութիւնների միութեան : Սակայն, Անդրկովկասեան Դաշնակցութիւնը Վրաստանին այն

օգուտը տւեց, որ վրացիները, գրաւելով կառավարական և կուսակցական բարձր դիրքեր, հնարաւորութիւն ունեցան իրենց երկրին հասնել առաւելագոյն բաժինը:

Նպաստաւոր էր նաև Ագրբէջանի վիճակը: Նախ՝ անձևոմիսի էին մտում սահմանները, և երկրի տնտեսութեանն ոյժ էին տալու Ղարաբաղի և Նախիջևանի նման հարուստ շրջանները: Երկրորդ՝ Բազիլ քարիւղը և Մուղանի բամբակը տնտեսական առաջնակարգ արժէքներ էին Ռուսաստանի համար, որպէսզի վերջինս միխարդներ մուծէր Ագրբէջան և դարկ տար նրա բարգաւաճման: Երրորդ՝ աշխարհազրականօրէն ագրբէջանցիները պրաւած էին Անդրկովկասի ամենէն բերքատու հարթավայրերը և, հետևաբար, լայն հնարաւորութիւններ ունէին զարգացնելու թէ զիւզատնտեսութիւնը և թէ բարձր մշակութային բոյսեր: Ռուսաստանը, շահագրգռւած Ագրբէջանով, Անդրկովկասի Դաշնակցութեան խողովակով լայն աւելցուցեալին պիտի բերէր այդ երկրին: Բացի այդ, Անդրկովկասեան Դաշնակցութեան ստեղծումով, Ագրբէջանը հնարաւորութիւն էր ստանում անարդէլ կերպով օգտագործելու Հայաստանի արտադարները:

Որպէս ամենաազդեացող և տնտեսապէս յետամնացը, ամենից չաա Հայաստանն էր շահազգգուած Անդրկովկասեան Դաշնակցութեան ստեղծման մէջ: Իսկ Ռուսաստանն էլ ամենից քիչ անկեղտութիւնն ունէր Հայաստանից: Հաղորդակցութեան ներկայ պայմաններում, հայկական պղինձն առաջնակարգ արժէք էր ներկայացնում ուստական արդիւնաբերութեան համար: Անասարթուութիւնը Հայաստանի տնտեսութեան կարեւոր ճիւղերից մէկն է: Իսկ մեր երկրի 380 հազար գետնատին արտադարներ Յ6 տոկոսը օգտագործում են ագրբէջանցի վաշխաւորները: Անդրկովկասեան դաշնակցային կառավարութիւնն իր տնտեսական ծրագրերները կազմելիս, երբեք էջր առաջնորդուած ու չի առաջնորդուած: Հայաստանի շահերով: Անդրկովկասի Դաշնակցութիւնը հայերի սպասած արդիւնքը չունեցաւ:

Այդ էր պատճառը, որ Հայաստանի բոլշևիկ դեկավարութեան մէջ սկսեցին խմորումներ, որոնք որակւեցին որպէս «պզգային թեքում»: Աշոտ Յովհաննիսեանի Կենսկոմը «բոլշ տնտեսութեան» ձգտումներ յայտնաբերեց, այսինքն՝ կանխցաւ Հայաստանի տնտեսութիւնը կազմակերպելը տնտեսական շահճերի տեսակէտից: Անդրկովկասի Կենտգործկոմի ժողովում (1926 թիւ յունւար) Հայաստանի կառավարութեան նախագահ Սաքօ Համբարձումեանը բողոքեց, որ մեր արօտայութիւնը յատկացնելով Ագրբէջանին՝ Հայաստանը զրկուած է անասարթուածութիւնը զարգացնելու հնարաւորութիւնից: Իսկ Մարեմը ամենովիտականսուկեան մասին զրած զրքոյիւում յայտարարեց, որ մի շարք պատասխանատու հայ կոմունիստներ անժայտելի են համարում անդրկովկասեան հանրապետութիւններին մէջ գոյութիւն ունեցող տնտեսական անհասարկութիւնը: Եւ պատահական երևոյթ չպէտք է ընդունել այն փաստը, որ հայ կոմունիստներից տմանք Հողային պահանջներ առաջադրեցին, Ախալքալախն էլ ըմբատապաւ վրաց իշխանութեան դէմ (1925թ.)՝ Հայաստանին

միանալու ցանկութեամբ և նման շարժումներ եղան Լեւոնային Ղարաբաղում:

Ահա՛ և Անդրկովկասեան Դաշնակցութեան բերած հաւասարութիւնն ու խաղաղութիւնը:

Ինչպէս վերը յիշեցինք, 1924ի վերջին կազմեց Պորբրդային Հանրապետութիւններէ Միութիւնը, որ եկաւ վերջնական հարւածը հասցնելու նախկին Ռուսաստանի սահմաններում առաջացած բոլոր հանրապետութիւնների (ինչպէս և Հայաստանի) պետական ուրոյնգոյութեան: Իրեն ի՛նչ իրաւունքներ է վերապահում Միութեանական կառավարութիւնը:

Համաձայն խորհրդային սահմանադրութեան, միայն միութեանական բարձրագոյն մարմինները իրաւունք ունին՝ վարել արտաքին քաղաքականութիւն և դիւանապետական փոխ-յարաբերութիւններ, ստորագրել և վաւերացնել քաղաքական և այլ դաւլինքներ ու պայմանագրեր, պատերազմ յայտարարել ու խաղաղութեան պայմանները, փոփոխութեան ենթարկել արտաքին սահմանները, կազմակերպել ու ղեկավարել զինուորական ուժերը, Միութեան կազմի մէջ նոր հանրապետութիւններ ընդունել և եղած հանրապետութիւններին ներքին սահմանները ճշտել, քաղաքացիութեան իրաւունք սահմանել, աշխատանքի հիմնական օրէնյանքն որոշել, ղեկավարել երկրի ողջ տնտեսութիւնը, ինչպէս և հաղորդակցութիւնը, փոստ-հեռագրական գործը և արտաքին ստեւտուրը: Երկրի ելեմուտքի, դրամանիշների, չափի ու կշիւի, բեղէնի, արտաքին և ներքին փոխառութիւնների, տուրքերի, եկամուտների, հողաշինարարութեան և հողօգտագործման, հանքային հարստութիւնների, անտառների և ջրերի, ազգաբնակչութեան տեղափոխութիւնների, դատական օրէնքների և դատավարութեան, կրթական գործի ընդհանուր սկզբունքների և առողջապահութեան ու ընդհանուր վեճակաբարութեան ամբողջ ղեկավարողը, սահմանողն ու գործադրել տւողը միութեանական օրէնսդիր իշխանութիւնն ու կառավարութիւնն է: Պետական այդ բոլոր կարեւոր խնդիրների որոշման մէջ առանձին հանրապետութիւնների կառավարութիւնները ծախ չունեն և պարտաւոր են միայն ենթարկւել ու գործադրել:

Առանձին հանրապետութիւնները չունեն զինուորական, արտաքին գործոց, արտաքին ստեւտուրէ, հաղորդակցութեան և փոստ-հեռագրային կոմիսարիատներ: Ժողովրդական տնտեսութեան խորհուրդի, ներքին ստեւտուրի, աշխատանքի, ելեմուտքի և բանւորափրադախական տեսչութեան հանրապետական կոմիտարիատները հանրապետում են համամիութեանական համանուն կոմիտարիատների ստորադաս մասնաճիւղերը: Որպէս ինքնուրոյն կոմիտարիատներ, հանրապետութիւններն ունեն ներքին գործոց, արդարադատութեան, հանքային կրթութեան, առողջապահութեան և հողագործութեան կոմիտարիատները: Հետագային, առողջապահական կոմիտարիատները կարծաւ Աշխատանքի կոմիտարիատի մէկ բաժինը, իսկ հողօրդկոմստն էլ միացեց անդրկովկասեան հողագործութեան կոմիտարիատին, որն իր հերթին զարձաւ մասնաճիւղ միութեանական համանուն կոմիտարիատի: Ինքնուրոյն կոմիտարիատներ մնացին միայն երեքը՝ ներքին գործոց,

Հարային կրթութեան և արգարադատութեան: Բայց, ի նկատի ունենալով, որ այս կոմիտարիատները համար էլ ընդհանուր սկզբունքներ Խահմանողը նորէն միութեանական մարմիններ են, այլ և այն, որ ներքին գործերի մեծ մասը տնօրինում է Գեղարն (Ձեկա), արանց ինքնուրոյնութիւնն էլ դատուում է բոլորովին անւանական:

Բողոքական կուսակցութիւնը ներկայիս կուսում է համաժողովեանական: Հետևաբար, խորհրդային սահմաններում գոյութիւն ունի մէկ կուսակցութիւն, որի կենտրոնը նստած է Կրեմլում: Թէ՛ կուսակցական-կազմակերպական և թէ՛ կրկին արտաքին ու ներքին քաղաքականութեան բոլոր ինդիքները որոշւում են միութեանական կենտրոնական կոմիտէի կողմից: Եւ քանի որ՝ խորհրդային երկրներում սիրւում է կոմկուսակցութեան բացարձակ մենատիրութիւնը, ապա և կուսակցական գծով բոլոր Հարապետութիւնները խստօրէն ենթակայ են Կրեմլին: Կենտրոնացման նման ձևը, ի հարկէ, հիմքից խախտում է ստանձին Հանրապետութիւնների պետական ուրոյն գոյութեան սկզբունքը:

Սակայն, մէկն Կրեմլը չէ, որ իբր խորհրդային թաթերը պարզում է մինչև Հայաստան:

Այսպէս թէ այնպէս, մինչև 1929թ. վերջերը, Հայաստանն իր տնտեսական շինարարութիւնը և հողային գործերը տանում էր մասամբ ինքնավար ձևով: Բայց, 1929թ. նոյեմբերին, Մոսկւան կայացնում է մի որոշում, որով անդրկովկասեան Հանրապետութիւնների բովանդակ տնտեսական կեանքը յանձնւում է Անդրկովկասի դաշնակցային կառավարութեան տնօրինութեան: Տնտեսական ամբողջ շինարարութեան և հողային գործերի հսկողն ու ղեկավարողը դառնում է Թիֆլիսը: Այլ՝ ևս, Հայաստանը զրկւում է իր տնտեսական պահանջների համար անմիջականօրէն Մոսկւա դիմելու և երկրի տնտեսութիւնը համաձայն տեղական պահանջների վարելու Հանրապետութիւններից: Միւս կողմից, այս որոշումը վերջնականապէս կասեցնում է տեղական ինքնավարութիւնն ու տնտեսական նախաձեռնութիւնը:

Այս բանը չըմբռնեցին Հայաստանի օրւայ ղեկավարները և նոյն թիւ դեկտ. 2ին տեղի ունեցած Երևանի կուսակախի ժողովում, այդ որոշման առթիւ, հանեցին հետևեալ բանաձևը՝ «Անդրկովկասեան Դաշնակցութեան ղեկավար դերի ուժեղացումը բնաւ չի նշանակում Հանրապետական մարմինների աշխատանքների թուլացում, այլ, ընդհակառակը, դաշնակցային մարմինների աշխատանքի և ղեկավարման ուժեղացումն աւելի կը նպաստի առանձին Հանրապետութիւնների ինքնավարութեան և տնտեսական նախաձեռնութեան զարգացման»: Սակայն, չանցած երկու տարի, և ահա այդ որոշումը կայացնող նոյն Մոսկւան, քննութեան առնելով Անդրկովկասի ներքին վիճակը, գտնում է, որ Անդրկովկասեան դաշնակցային կառավարութիւնը տնտեսական խիստ կենտրոնացման քաղաքականութիւն է կիրառել, որով միանգամայն դի-

մադրել են դարձել մի շարք Հանրապետական տնտեսական ու մշակութային ձեռնարկներ ու հիմնարկներ («Պրաւագ», 1931թ. նոյեմբ. 3): Այս փաստն իսկ բաւական է համարելու Համար, թէ՛ որքան անհեռաւսեալ ու կոյր կառավարող են Երևանի կուսակախն ու Հայաստանի ներկայ վարիչները:

Եթէ Մոսկւան մեղադրում է Թիֆլիսին կենտրոնացման քաղաքականութեան մէջ, ապա ինքն էլ գերծ չէ այլ մեղքից: Նախ, Մոսկւան, աստիճանաբար իրաւապրկելով ստանձին Հանրապետութիւններին՝ վարչական ու քաղաքական տեսակէտից վերականգնեց Ռուսաստանի նախկին գերակայութիւնը: Իսկ տնտեսական քաղաքականութեան այն ուղին, որ ծրագրում և հրահանգում է Անդրկովկասի ժողովուրդներին, պարզ ցոյց է տալիս, որ տնտեսական քաղաքականութիւնը տարւում է այն ձևով, որ Անդրկովկասը իր բնական Հարատւութիւններով ծառայելու է Ռուսաստանի տնտեսութեանը, որն այսօր մարմնացած է ռազմական հնգամեակի մէջ: Իսկ հնգամեակի ծրագրեր կազմողներն, ի հարկէ, Ռուսաստանի ծայրամասերի ժողովուրդներին անմիջական պահանջներին բաւարարելու և նրանց երկրների շահերով առաջնորդելու մտքից շատ են հեռու:— Ամենից առաջ, Անդրկովկասը Ռուսաստանին անհրաժեշտ է իբրև հում նիւթի աղբիւր:

Հետաքրքրական է այս տեսակէտից Անդրկովկասի ներկայ վիճակը համեմատել ցարական ժամանակների հետ: 1910ին, Կովկասի փոխարքայ Վարանցով-Դաշկովը, կայսեր ներկայացրած իր ղեկուցադրի մէջ, Կովկասը համարում է «կայսերական թագի ամենափայլուն ալամանդը»: Վարանցով-Դաշկովը մատնանշում է Կովկասի տնտեսական այն խոշոր դերը Ռուսաստանի համար, որը կարող է ունենալ իր զարգացած տնտեսութեամբ: Այլ՝ իսկ ստանձառով նա պտտարկում է Կովկասի տնտեսական յառաջդիմութեան լայն հնարաւորութիւններ տալ: Ինչո՞վ է սարբերում Ստալինի քաղաքականութիւնը ցարական փոխարքայի ձեռնուածներէց:

Հայաստանի դրութիւնը ծանրանում է և նրանով, որ նրան ու նրա բողոքական վարիչներին այսօր Անդրկովկասում որևէ արժէք չեն տալիս: Մեանիկեանի մահից և Լուկաշինի աքսորից յետոյ, Անդրերկրամի քարտուղարութիւնն ու դաշնակցային կառավարութեան նախագահութիւնը գտնում է վրացիների, ազրբէջանցիների և ուսաների ձեռքը: Վերջին, նոյեմբ. 9ին նշանակելից նոր քարտուղարութիւն, հետեւեալ կազմով՝ առաջին քարտուղար՝ Մամիա Օրախելաշվիլի, երկրորդ՝ քարտուղար՝ Վրաստանի Կոմկուսի քարտուղար Բերիա և երրորդ քարտուղար՝ Ազրբէջանի Կոմկուսի քարտուղար՝ Պոլոնսկի: Իսկ կառավարութեան նախագահ՝ Օրախելաշվիլու տեղ նշանակեց՝ ազրբէջանցի Ղազանֆար Մուսաբէգովը: Հայաստանը, կարծես, բոլորովին զոյրութիւն չունի: Հայաստանին այլևս հաշի չեն տանում: Նրա իրաւապրկումը համարում է բնական...

ԱՇՈՏ-ԱՐՄԲՐՈՒՆԻ

ՍՏ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ԳԱՂՍՌԱԿԱՆ ԴԱԻԱՆԱՆՔԸ

Ստեփանոս Նազարեանի փիլիսոփայական աշխարհահայեցողութիւնը և քաղաքական դաւանանքը կազմակերպել է Հեզելի և Իդէալիստական դպրոցի խոր ազդեցութեան տակ: Այդ փիլիսոփայական դպրոցի մի շատ ազդեցիկ կենտրոնն էր նաև Գորպատը, ուր ուսել է Նազարեանը և ամմիլական աղբիւրից վերահասու եղել նախորդ դարի առաջին կէտի ամենամեծ և ազդեցիկ իմաստասիրական դրուժեան (սխոսեմին): Ուստի, Նազարեանի քաղաքական դաւանանքը հասկանալու համար անհրաժեշտ է մի քանի խօսք ասել Հեզելի պետական ու պատմական ուսմունքի մասին: Եւս առաւել այդ անհրաժեշտ է, որովհետև մեր մեծ վերածննդի ընկերային ուսմունքը բնականաբայէս սերտորէն յարակցում է իր ժամանակի՝ Եւրոպայում գոյութիւն ունեցող հասարակական գաղափարների հետ: 1840-60թ. ազգային հարցը այդ գաղափարների մէջ բռնում է առաջին տեղը: Նազարեանի հասարակական ու գրական աշխատանքի միջուկն էլ հայոց ազդեցութեան խնդիրն է: Մեր ազգային հարցը, աւելի ճիշտ ուսուհայոց հարցը նա քննում է եւրոպական ազգերի պատմութեան, գիտական տեսանկիւնով՝ հիմնաւորելով այն ժամանակի մեծագոյն իմաստասիրութեան ուղղութեան վրա:

Մենակ Ստ. Նազարեանը չէր, որ ենթարկւել էր Հեզելի փիլիսոփայութեան. այդ իմաստասիրական կառուցածքը յատկապէս շատ մեծ ընդունելութիւն գտաւ Արեւելեան Եւրոպայի ազգերի նոր ստեղծող աշխարհիկ մտաւորականութեան մէջ: Ստանաւորապէս ուսուցնելու համար Նազարեանը միտքը դարձնում էր Հեզելի ուսմունքի հիման վրա, և ստեղծում էին հոսանքներ—գապագայինները (արեւմտականներ) և սլավոնոֆիլները, որոնք զննութեան նիւթ ունէին, ի վերջոյ, ուսուց ազդութեան խնդիրը: Յ նորին, Հեզելի վարդապետութեան բոլոր մասերը նորն ուշադրութիւնը չէին դրաւում: Եթէ Գերմանիայում նրա աշակերտները և յատկապէս ձախ Հեզելիանները իւրացրին նրա մեթոդաբանութիւնը՝ տալով Հեզելի ուսմունքից շատ հեռացած նոր բովանդակութիւն, ապա արեւելեան Եւրոպայի բազմաթիւ ազգերի մտաւորականութեան հետաքրքրեց նրա պատմափիլիսոփայութեամբ, որի մէջ ողու ստեղծագործող կարողութիւնը և նրա առարկայացումն առաջնակարգ նշանակութիւն էր ստանում: Հեզելի պատմադարձական և պետական ուսմունքը ճնշւած ու անազատ ազգերի մտաւորականութեան համար սոսկ ճեմարանական ուսումնասիրութեան նիւթ չէր, այլ մի ուժեղ գէնք քաղաքական-հասարակական պայքարի համար:

«Բացարձակ ոգին» իր ինքնութիւնը, «Իրենք» արտայայտում է պատմութեան մէջ. այստեղ նա հասնում է ինքնադիտակցութեան, ճանաչում է ինքն իրեն: Իւրաքանչիւր դարաշրջանում այս կամ այն ժողովուրդը, աւելի ճիշտ, ազգը հանդիսանում է ողու կրողը և որպէս այդպիսին դառնում է պատմական ժողովուրդ:

«Տնտեսալ» ազգը բացարձակ ողու իրացողն է, ձևաւորողը պատմութեան մէջ: Ողու դրոճն է՝ ձգտել հասնելու անասնման ազատութեան, այդ նրա ներքին էութիւնն է, որը իրականանում է աստիճան առ աստիճան: Ըստ այսմ պատմութիւնը դառնում է ազատութեան գաղափարի յարասև ամման մի պրոցես: Հին արեւելքում ազատ էր մէկը, Յունաստանում և Հռոմում նա դառնում էր բոլոր քաղաքացիների պատուութիւնը, նոր դարերում և յատկապէս նորագոյն շրջանում ազատութեան սկզբունքը կազուում է մարդու գաղափարի հերմարդն ազատ է ու ազատ պիտի լինի հէնց նրա համար, որ մարդ է ծնւած: Այս առումով ազատութեան գաղափարը՝ սրբազուրկ ամէն նիւթական տարբերից և ստացաւ բարոյական հիմնաւորում: Բացարձակ ոգին, որպէս անասնման ազատութիւն և վերջինս էլ որպէս բարոյական սկզբունք լաւապէս առարկայանում և հաստատում է պետութեան մէջ, ուր ոգին, գաղափարը լիակատար ու ամբողջական բարոյայտութիւն և բարոյական իմաստ է ստանում: Պետութիւնը բանականութեան իրացումն է, այն աշխարհը, որ դարձել է ոգի, ազատութիւնը իր կատարելութեան մէջ: Եթէ այս է պետութիւնը, ապա ուրեմն նրա նպատակը չի կարող լինել մասնակի շահը, նիւթական հողազրցութիւնը, այլ միայն ազատութեան երաշխաւորումն ու պահելը: Այս ըմբռնումով պետութիւնը դառնում է պատմութեան մեծագոյն հաստատութիւնը: Մրանից՝ որպէս հետևանք բխում է, որ այն ազգերը, որոնք պատմութեան գաղափարն մէջ կերտել են իրենց ազգային պետութիւնները, խոսացրել են կամ ունակութիւն ունեն խոսացնելու իրենց մէջ բացարձակ ոգին, ունեն խոշոր պատմական և քաղաքակրթական արժէք: Պետականութիւնն է, որ ազատում է մշակութային արժէքները, որոնք Հեզելի վարդապետութեան մէջ բացարձակ ողու առարկայացման մասնակի ձևերն են: Այսպիսով պատմութիւնը դառնում է պետութեան՝ քաղաքական դրութիւնների պատմութիւն:

Հեզելի պատմափիլիսոփայական և պետական ուսմունքը ոչ թէ վերացական մտքի մէկ հանճարեղ մարդանք էր, այլ ունէր գերագանցօրէն իրական հիմք և գործնական արժէք: Նա զուգակցում էր եւրոպական ազգութիւնների գաղթօճքին և նպատակ ունէր տեսական հիմնաւորում տալու այդուսական բիւրոկրատիոմին: Բացարձակ ողու վերջին հանգրանքը, ըստ Հեզելի, գերման ազգն է ու պրուսական քաղաքական ու ընկերային կազմակերպութիւնը: Հեզելը գաղափարախօսն էր գերման ազգութեան, որն անցնելով նպագիտեան արշաւանքի ու աւերների անելի փորձերից՝ կանգնած էր մէկ ազգային պետութիւն ստեղծելու ճանապարհի վրա:

Ոգին՝ իրականութիւն է դառնում ազգայնօրէն կազմակերպւած պետութեան մէջ: Իր նպատակով պահպանողական, սակայն, տրամաբանօրէն յեղափոխիչ՝ Հեզելի ուսմունքը թէ՛ Գերմանիայում և թէ՛ Արեւելեան

Եւրոպայում հսկայական նշանակութիւն ունեցաւ : Չնայած իր վերացական ձևին և մութ ու ծանր արտայայտութեան երանակին՝ Հնդեյի վարդապետութիւնը ինքնանաճառութեան հասած ազգային հաւաքականութեան և նրա պետականորէն ձևաորոշում ուսմունքն է : Ազգութեան դադափարն է, որ ընկած է Հնդեյի պատմագիտական ուսմունքի հիմքում : ազգն է պատմութեան ուսումնասիրութեան նիւթը : Ի հարկէ, սրանից չի բխում, որ նրա ուսմունքը կարող է զրնել այն տեսութիւնների շարքում, որոնք դարձան ճնշւած ազգերի զաղափարափոստութիւնը : Ընդհակառակը, Հնդեյը արհամարհոտ ակնարկներ ունի սլաւոնական ազգերին, որոնց համարում է պատմութիւնից զուրկ ժողովուրդներ : Նա գերման ազգայնական է, որի համար իր փոփոխութիւնն է միայն զոռ ընտրեալը : Սակայն, նրա ուսմունքը, նրանից հանած տրամաբանական հետեւութիւնները ընդգրկում էին աւելի հետուս : Ուստի ճնշւած, փոքր ազգերի առաջաւոր մասնաւորները իւրացրին նրա զաղափարը՝ մարդը առուժով, ոչ նրա գործնականը : Եթէ Գերմանիան կարող է բացառիկ ոգու կրողը հանդիսանալ, ինչու նոյնը չի կարող լինել Լեհաստանը, Ռուսաստանը, Չեխիան, Հայաստանը : Եւ երակէտ ունենալով Հնդեյի ուսմունքը՝ այդ ազգերի մտաւորականութիւնը ջանում է հաստատել իր ազգային հաւաքականութեան ապրելու և ստեղծագործելու իրաւունքը : Եւ դարմանալի չէ, որ վերոյիշեալ ազգերի զաղափարական մտքի զարգացման էական խնդիրն է՝ ազգութեան զաղափարը : Եթէ Հնդեյը գերման ազգն է համարում բացառիկ ոգու կրողը — սա նշանակում է, որ դեհան մշակոյթը՝ որքան, կրօն, զաղափարական ձև՝ արժէքաւոր է, կատարեալ է, որքան, ի հարկէ, կատարեալ կարող է լինել ոգու առարկայացումն սահմանափակ ձևերի մէջ : Սակայն, Արեւելեան Եւրոպայում այդոք ազգերի մտաւորականութիւնն էլ ջանում է կերտել իր ազգային-մշակութային արժէքները, հաստատել այն մի կողմից իր պատմական անցեալի վրա, միւս կողմից՝ ժամանակի առաջաւոր ազգերի օրինակը ի նկատի ունենալով :

Նազարեանը իր զաղափարական տեսակէտները արտայայտել է ցան ու ցրել՝ տարբեր ժամանակներում և տարբեր յօդւածների մէջ : Սակայն և այնպէս հաւաքելով ի մի ունի ամենը, ինչ որ նա գրել է զաղափարական հարցի մասին, կը ստանանք մի լրիւ և ներդաշնակ կառուցւածք : Մի բան, որ աչքի է ընկնում նրա երկերի մէջ ամենուրեք՝ այն մեծ պատկառանքն է, որ նա ունի զաղափարական ոյժի հանդէպ : Լինելով իր ժամանակի պատմագիտորէն և փիլիսոփայօրէն ամենից պատրաստւած դէմքը՝ նա խորին ճշմարտութեամբ կարողանում է որչափ պետութեան առաջնակարգ նշանակութիւնը նոր ազգութիւնների ստեղծման գործում : Նա այդ համոզմունքներն եկած էր ոչ միայն եւրոպական ազգերի անցեալի ուսումնասիրութեամբ, այլ և իր ժամանակի, իրական կեանքի գիտողութեամբ : Նա ապրում էր մի ժամանակ և ուսանում էր մի վայրում, ուր և երբ տեղի էին ունենում ազգային պետութիւնների կառուցանելու փորձեր և կառուցւած պետութիւններին ուսման վարական ձևաւորում տալը : Դեռ ևս իր հասարակա-

կան ու գրական աշխատանքի սկզբում նա ազգային հարցի մասին խօսելիս արտայայտում է այսպէս . «Մի ազգի համար իր կրօնը, իր լեզուն և իր զաղափարականութիւնը այն մեծախորհուրդ և խորախորհուրդ անօթներն են, որ ընդունելով իրենց մէջ ասուածնդէնը և մարդկեղէնը պիտի աճեցուցանէին, ծաղկազարդէին և պտղաբեր չինէին» : Այսպէս որոշելով ազգութեան գործունեքը՝ նա միաժամանակ հանդիսանում է երակէտը հայ հասարակական կեանքում յոռազայում առաջացող հասանքներ : Եթէ պահպանողականները կառնչեցին կրօնի զաղափարին՝ որպէս ազգութեան պահպանման ազգակ, հայ զաղափարական կուսակցութիւնները ազգութեան դոյութեան ամենէն կարեւոր ազգայնեքն մէկը համարեցին պետութիւնը : Նազարեանը ոչ միայն որոշում է զաղափարական անօթից՝ դէբը, այլ և նրա բնոյթը : Մեկնելով հեղեքեան դպրոցից՝ նա պետութիւնը համարում է մէկ հաստատութիւն, որ պիտի աճեցնէ նաեւ «աստածակէշիք» : Պետութիւնը դառնում է ամենէն կարեւոր հաստատութիւնը ազգութեան զարգացման : «Թագաւորութիւն, զաղափարական կեանք, ազգային պատիւ ու փառք ասած բաները չեն միայն սնտոյի, արտաքին աշխարհական փայլողութիւն, որից կարելի էր հրժարուել անվնաս, ո՛չ, այլպէս չէ : Թագաւորութիւնն ասած բանը է մի ազգի խելքն ու բանականութիւնը տեսնելի ու զգալի կացուցած նրա զաղափարական կարգերի մէջ, նրա օրէնքները, կառավարութեան և դատարարականութեան եղանակի մէջ»*) : Այս ստղերի մէջ շատ որոշ երևան է զալիս Նազարեանի ոչ միայն զաղափարապաշտութիւնը, այլ և բանապաշտ միտքը : Իր պատմափիլիսոփայութեան մէջ նա բանապաշտ է — ինտելեկտուալիստ, այդպէս է և իր հոգեբանութեան մէջ : Սրա աղբիւրները պիտի որոնել Արեւմտեան Եւրոպայի փիլիսոփայական ու հասարակական ուսմունքներին մէջ : Եթէ պատմութիւնը «խելք է ու բանականութիւն», նրա բովանդակութիւնն է գիտութեան զարգացումը իր բոլոր կողմերով և նրա ժողովրդականացումը, պայքարը խաւարի, նախապաշարունների դէմ, սպա զաղափարականութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ իրացումն այդ բանականութեան մարդկային համակցութեան օրէնքների, դատարարականութեան և սովորութեան մէջ : Սա նրա զաղափարապաշտութիւնն է և հեղեքաբանութիւնը : Միայն մի տարբերութիւն կայ երկուսի միջև . Հնդեյի մօտ այդ խելքն ու բանականութիւնը բացարձակ ոգու արտայայտութիւններից մէկն է, Նազարեանի մօտ՝ «ազգին է» : Սակայն, ի վերջոյ, Հնդեյի մօտ էլ ուղին նոյնանում է ազգութեան հետ, Նազարեանի մօտ էլ ազգութիւնն ընդունում է իր մէջ ասուածնդէնը : Թագաւորութիւնը կազմակերպչական նշանակութիւն ունի և պարզ ու որոշ հանրային նպատակ : Նա ցրւած, բաժան-բաժան եղած կամքերի հաւաքողն է, որոշ ուղղութեամբ և որոշ նպատակով դեկալարողը : «Թագաւորութիւնն է, որ իբրև մարմնացած հոգի և զօրութիւն գործ է կատարում ազգի թէ նիւթական և թէ իմացական բախտաւորութեան հա-

*) Ստ . Նագաբեանի Երկերը, Թիֆլիս, 1912թ . հատոր I, էջ 90 :

մար: Քաղաքաբնակիչներն էլ, որ ամենայն բան սղդի մէջ կարդի և սահմանի տակ է պահում և ցանուցիր գործերունը ազդի միտարիւթով և բարբիւթով մի ամբողջութեան մէջ ուղեցրածնում է դէպի մի հասարակական նպատակ: Ուրեմն, պետութիւնը մի գործիք է, մի անօթ, «աղդի թէ նիւթական և թէ իմացական բախտաւորութեան համար»: Պետութիւնը այս առումով նոյնանում է աղդութեան հետ՝ զստնալով նրա գոյութեան զանախիթի մեծակշիւ անօթը»: Եթէ նրա հոգաբարձութիւնը նիւթականն ու իմացականն է, ինչպէս և բարոյականը, ապա նշանակում է պետութիւնը ազգային մշակոյթի մեծագոյն ձողակն է: «Նշխանական դասակարգ» զազգաշինութեան» պատճառ է լինում: Նս մի բարոյական կարգ է, «անխիթի իրաւունք», որով պայմանաւորում է Կ՝ կրօնը, և լիզուն և ընդհանրապէս յառակշիւութիւնը:

Վերադրելով քաղաքական տարրին այսպիսի արժէք՝ Նազարեանը հիմնովին բաժանում է այն մտածողներից, որոնք 18րդ դարում և էլ առջև պետութիւնը նոյնացնում էին թագաւորական հարստութեան հետ և ծառայական յարաբերութեան մէջ դնում վերջինին նկատմամբ: Նա ընդհանրապէս ոչինչ չունի նաև նոյն դարի վերջին հանդէս եկած այն տեսութիւնների հետ, որոնք պետութեանը լոկ գլխիւնապահ դեր էին տալիս: Ըստ այսմ, նա չպիտի միջամտի լինէր ընկերային մարմնի մէջ տեղի ունեցող եռուղիներին, պայքարին. նրա ազդեցութեան շրջանակը որքան կարելի է պէտք է վերածել նազագոյնի: Նախորդ դարի առաջին քաղաքային այս տեսակէտը ուժեղ հարած ստացաւ հեգելեան դպրոցից, որի պետութեան բարոյական ըմբռնումը և նրա գաղափարաբան Նյուտոնի գնելը այդտեղից պետութիւնը ամէն նիւթական պատկերացումից: Նազարեանն ևս դէմ է այդ տեսակէտին. պետութիւնը «մարմնացած հոգի» է, ուստի և պարտականութիւն ունի ազդի անդամների հանդէպ: Նրա հոգացողութեան առարկան մէկ անհատը չէ, թագաւորական տունը չէ, ոչ էլ մէկ դասակարգ, այլ որովանդակ «ազգն» է: Եւ եթէ ի նկատի ունենանք, որ ազգը նրա զբաղան վաստակների մէջ նոյնանում է «հասարակի», խնարհ խաւի հետ, ապա կր տեսնենք, որ պետութիւնն ևս առաւել մեծ արժէք է ստանում որպէս ներգործոն ազգակն ազգային մշակոյթի պահպանման և դարգացման և այդ արժէքների համազգայնացման խնդրում: Ի հարկէ, նրա հասարակական ուսմունքը այսօրայ իմաստով ուսմակաւորական չէր: Նրան անձանօթը կր հայ գիւղական աշխատաւորութիւնը: Իրեն Նախորդող Արտվեսանը աւելի ուսմակաւոր միտք էր, նրա ուսմունքի հասարակական յենարանը տեւի լայն էր: Եթէ Նազարեանի «հասարակի» քաղաքային արհեստաւորութիւնն էր ու համարութիւնը, Արտվեսանի գիւղն էր, իսկական հայ գիւղը, որի գոհագեղ պատկերը այնքան ստորանդաւոր նկարել է նա:

Հայն դործունէութեան շրջանակ գծելով պետութեան հանդէպ և համարելով այն ոչ միայն մշակոյթի կերտող ու պահպանող միջոց, այլ և «բարոյական կարգ»՝ Նազարեանը տարբերում է նաև Ա)ական-Պական թւականների մեծ տարածում գտած քաղաքական-

տնտեսական այն ուսմունքից, որի հիմնադիրը Կարլ Մարքսն էր: Հետաքրքիր է համեմատել Նազարեանի և Կ.Մարքսի ուսմունքները: Երկուսն էլ դուրս են եկել Հեգելի դպրոցից, սակայն, ընթացել են բոլորովին հակառակ ուղիներով: Կ. Մարքսը իր պատմափիլիսոփայութեան և բնագիտութեան մէջ նիւթապաշտ է. Ստ. Նազարեանը բանապաշտ է և գաղափարապաշտ: Կարլ Մարքսը հանրային կենսաբան դասից կրօնի և բարոյախօսութեան արժէքն էր և դրանք ուրոյն, նիւթական ուժերից անկախ ազգակ չհամարեց. Նազարեանը հասարակական կենսի յառաջիմութիւնը ոչ միայն հետեանք է համարում գաղափարների, այլ և բարոյական սկզբունքի կիրառման կենսի մէջ: Այդ բարոյական սկզբունքներ սերտորէն յարակցում են կրօնի, աւելի սրտ, քրիստոնէութեան վարդապետութեան հետ, որպէս ամենից կատարեալ կրօնի: Պետութիւնը ըստ Մարքսի իշխող դասակարգի դաժան շահագործման յաւաքոյ գննքն է և, որպէս այսպիսին, գուր է ամէն բարոյական հիմունքից: Նա պայքարի գործիք է ճշողի և ճշողի միջև և յաղթողը ջանում է տիրանալ նրան իր դասակարգային շահերի համար ծառայեցնելու. նպատակով: Եւ հաղթածում միտումը ինքննստիքեան կապած է պետութեան հետ, հետեանպէս և պատմութիւնը՝ բնաւ հաշտել չի կարող նրա գաղափարի հետ. ու այն վայրկեանին, երբ պետութիւնը կընկնի, վախճան կունենայ, կը սկսի իրական ազատութիւնը ժողովուրդների: Նազարեանի համար պետութիւնը խելքի, բանականութեան, բարոյականութեան մարմնացումն է. նա սղդային ուժերի հաւաքոյն է և հանրային նպատակով գործադրողը: Նա ըստեղծողն է իմացական ու նիւթական արժէքների, «բախտաւորութեան»: Մինչ Կ. Մարքսի պատմափիլիսոփայութեան հիմքում ընկած է դասակարգը, Ստ. Նազարեանի մօտ ազգն է, ազգային ամբողջութիւնը, որի ուժերի գարգացմանն էլ նիւրում է պետութիւնը: Կ. Մարքսը եննելով հեգելեան դպրոցից պահեց միայն նրա մեթոդաբանութիւնը՝ տալով ծանր հարածներ Հեգելի ուսմունքին, Ստ. Նազարեանը ամբողջապէս մնաց հեգելեան գաղափարների աշխարհում:

Եթէ ազգային արժէքների գաղաքացման համար պետութիւնը մեծ անհրաժեշտութիւն է, ապա պետական կարգակերպութիւնից գուրկ լինելը բախտորոշ նշանակութիւն կարող է ունենայ: Ըստ Նազարեանի «ոչինչ ազգի մէջ ղումունքը և իրաւութեան ծաղկած չեն ուր չէ եղել նոցա վերայ մի կարող իշխանական գաւազանի հովանաւորութիւն, ուր չէ եղել մի ազատ քաղաքական կենսա» (էջ 91): Քննելով մեր պատմական ունեցումը՝ նա գտնում է նրա մեծագոյն շափոյ: այն բանում, որ քաղաքական կենսաբան յատկը եղել է շատ քիչ զարգացած. հայութեան պետականութիւնը՝ թոյլ, աւատական և կարճատև: Այս հանգամանքը որոշիչ նշանակութիւն է ունեցել թէ մեր քաղաքային դաստիարակութեան և թէ մեր յազգային մշակոյթի համար. «Հայոց ազգը ըստ մեծի մասին օտար թագաւորութեան լծի տակ, ուրեմն ստրուկ և ծառայ, ի հարկէ պիտոյ է անմասն մնար այն սղդածանքից, որ ճարել է յունայ սղդբ աւելի յաջող հանգամանքների տակ. և առանց սպասութեան անկարելի է մատենադրութիւն, անկա-

րելի է դիտութիւն, յատնադիմութիւն և բարգաւա-
ճութիւն» (էջ 19) :

Աղղութեան ազդակներդ մէկն էլ, ըստ Նազարեա-
նի, կրօնն է, սակայն, ոչ թէ որպէս դաւանաբանու-
թիւն, այլ որպէս բարոյական սկզբունք: Քրիստոնէու-
թիւնը ոչ միայն կրօնական մի ուսմունք է, որ կապում
է մարդուն մի դերագոյն, անվսխման էակի հետ, այլև
ժամանակա՛ւից մարդկութեան բարոյական դադափար-
նելի լաւագոյն խտացումն է: Նա թելադրում է սէր
առ Աստուած և սէր առ մարդը և վերջինիս մէջ է նրա
ընկերային արժէքը: Այս իմաստով կրօնը ընդհանրա-
պէս և ջրիտանդէութիւնը մասնատրապէս մի սոնհրա-
ժեշտ գործօն է բնկիրային կեանքի մէջ, ուստի և հաս-
կանալի է, որ Նազարեանը շատ անդամ անդրադա-
նում է այդ խնդրին: Սակայն, կրօնի որոշիչ նշանա-
կութիւն տւում և ազդութեան ազդակ համարելը կու-
նենան այն հետևանքը, որ ազգը կրօնպէս համայնք
կը դառնայ: Մնալով որպէս այդպիսին՝ անկարելի է
ստեղծել բարձր հազեոթ մշակոյթ: կրօնի արժէքը ազ-
գերի կեանքում լրի բարոյական է, իսկ բարոյական
միջոցներով դեռ «պոզ» չի ստեղծում և պահում:
«կրօնը ազգի համար էր և ոչ թէ ազգը կրօնի համար»
(էջ 89): Ուրեմն նա մի միջոցն է ազգային ամբողջու-
թիւնը պահելու, սակայն, շատ թոյլ միջոց. նրա գո-
տութիւնը բաւական չէ ազգաշինութեան համար. «հա-
ւատն առանց իշխանական դաւանանքի թևակոխեան,
խաչն առանց սրի տկար է և չի կարող ազգաշինութեան
պատճառ լինել: Եթէ սուտ է մեր ասածը, թող ցոյց
տան աշխարհի երեսին մի քաղաքացեալ՝ հզօր ու յուսա-
րեակ ազգ, որ միայն կրօնի գորութեամբ, առանց
քաղաքական կեանքի և մեծութեան հասած լինէր որ-
եւիցէ ազգաշինութեան, բարեկարգութեան և ազգային
պարծանքի մարդկութեան ազդերի մէջ» (էջ 90) :
Այսինքն կրօնը դեռ բաւական չէ, մասնաւոր բարոյա-
կան առումով: կրօնը նոր և նորագոյն դարերում աս-
տիճանաբար զարգարում է ազգերի կեանքում այն մի-
ակ ազդակը լինելուց, ինչ որ էր հին և միջին դարե-
րում: Աղղութիւնը ստանում է աշխարհիկ բնոյթ և
պետութիւնն այն կազմակերպութիւնն է, որ ինքը ա-
զատապրելով կրօնից և եկեղեցուց՝ առաջն է ազգու-
թեան աշխարհիկ և քաղաքական իմաստ:

Ժխտելով կրօնի միակ և բացարձակ արժէքը՝ Նա-
զարեանը դուրս է դալիս այն մտածողների դէմ, որոնք
նախորդ դարի կէսերին նոյնացնում էին աղղութեան և
կրօնի դադափարները և հայերին համարում էին եկե-
ղեցյական աղղութիւն, կրօնական համայնք: Սրանք
մտանում էին, որ կրօնը ազգութեան գործօն ելած է
այն ժամանակ միայն, երբ իշխողը ինքը ներկայանում
էր որպէս կրօնական համայնք և դեռ ևս չէր որբերիւ
աղղութեան սկզբունքը: Իսթանման գիծը ոչ թէ ազ-
գութեան պատկան լիութեամբ էր գծում, այլ կրօնա-
դաւանական պատկանելիութեամբ:

Եթէ «քաղաքական անօթի» մի «անշարիւի մեծ»
գործիք է ազգաշինութեան գործի համար, ապա ի՞նչ
արժէք են ստանում նրանք, ովքեր պետական կեանքի
դեկլարութիւնը ունեն իրենց ձեռքին: Պատմա-քաղա-
քական պէմբերը գործակից են ազգի նրթական ու ի-
մացական հարստութեան կուտակման: «Մեծատուննե-

րի, իշխանների ու թաղաւորների կողմէ՞ր վերին ու
գեղեցիկ կողմէ՞ր այն է, որ նոքա արդէն ծրածն ու
կանաչածը ազգային հոգու հիմքից՝ իրենց կարող ձեռ-
քով հովանաւորէին, մեծախոյթ ինամակալութեամբ
շուր տային և սնուցանէին և այսպէս հասուցանէին
ցանկալի պտղաբերութեան» (էջ 281) :

Ասել է, եթէ պետական կազմակերպութիւնը ի-
մաստաւորում է որպէս ազգ - մշակութային միա-
ւորի ուսնացումն ու պահպանումը, եթէ նա փորձած
ու լաւագոյն միջոցն է ոչ միայն ազգային դիմազոծ
անսղարտ պահպանման, այլ և անկաշկանդ դարձոց-
ման, ապա պետական՝ նախ դեկլարայինը չեն կարող
ունենալ մասնակի՝ տոյժային, դասային կամ անձնա-
կան նպատակներ, ինչպէս կը թելադրէր ՆՅրդ դարի
մտածողութիւնը: Նազարեանը պետութեան վերաբերում
է դրական դեր. նա կազմակերպող ոյժ է, նա մի-դրա-
կան գործօն է ազգերի կեանքում, մինչ Կ. Մարքսը
պետութեանը վերաբերում էր միայն բացասական դեր-
մէկը սենսում էր նրա զայիք անխիբը, միայն նրա
սուերտու կողմերը:

Եթէ Նազարեանը այսպէս է որոշում և անգամ գե-
րազնահատում է քաղաքական գործօնի դերը, ապա
շափաղանք հետաքրքիր խնդր է, թէ ինչ քաղաքական
պահանջներ է անում ևս հայութեան համար: Նախ ա-
սանք, որ նրա հրապարակախօսական գնումութեան նիւ-
թը ուսասանայութիւնն է. տանկահայութիւնը ընդամե-
նը մէկ-երկու անգամ է գրաւում նրա ուշադրութիւնը:
Ընդհակառակն, ուսասանական խնդրը դուցէ ոչ ոք
իր ժամանակակիցներըց այնքան լայն չի ըմբռնել ու
իր ժամանակի համար այնքան իրական միջոցներ չի
ստաջարկել, որքան Նազարեանը: Իր քաղաքական աշ-
խարհահայեցողութիւնը թելադրում էր, որ հայութիւ-
նը նոյնպէս ըմբռնէ քաղաքականօրէն, այսինքն՝ որպէս
ուրոյն պետական միւտը: Նազարեանի օրով հայու-
թիւնը կրօնա-դաւանական համայնք էր. նրան կազմա-
կերպողը հայոց եկեղեցին էր. ըստ Նազարեանի ուս-
մունքի հայութիւնը պիտի թողնէր կրօնի սկզբունքը,
դառնար ազգ աշխարհիկ իմաստով, և կազմակերպւէր
պետակաւորէին: Իր քաղաքական ուսմունքի տրամաբա-
նական եզրակացութիւնը այս պիտի լինէր: Սակայն,
նա իր ուսմունքից համապատասխան եզրակացութիւն
չհանց: Իր քաղաքական մտածողութեան շնորհ կա-
ուցանելիս նա ամբողջպէս հիմնուած էր այն տւեալ-
ների վրա, որ ընձեռնում էր արեւմտեան Եւրոպայի
պատմութիւնը: Սակայն, հայոց քաղաքական բախտի
մասին խորհրդածելիս նա անում է մէկ շեղում: Այդ
շեղման հիմքն ու պատճառը ոչ թէ Նազարեանի գա-
ղափարների շեղումն է, այլ պայմանաւորում է այն
իրական-պատմական տւեալներով, որոնք մէջ սարում
էր հայութիւնը ՆՅրդ դարի առաջին կեսին: «Հայոց
ազգը Աստուծոյ աթոռի առջև անաբխան էր գտնւած
թագաւորական պատեր շեղութեան: Սա է Նազարե-
անի հանձն սխուր եզրակացութիւնը մեր անցեալից:
Մեր պետական կեանքը մեր և օտարի մեղքով ոչնչա-
ցել է ու չկայ այլևայլ»:

Եթէ այսպէս է անցեալը, ապա ինչ գործելակերպ
պէտք է ընդգրկել այժմ. ջանա՞լ արդեօք ստեղծելու

Հայոց պետականութեան շնորհիւ, թէ՛ ընդմիջու հրաժարել նրանից, որքան և այլ ծանր լինի Հայ աղբյուրին մշակութային բախտի տնօրինման Համարը: Նազարեանը գնաց երկրորդ ուղիով, այսինքն՝ մերժեց Հայոց քաղաքական անկախութեան սկզբունքը: Այս է այն շեղումը, որ անուճ է նա իր քաղաքական ուսմունքի մէջ: «Հայերս քաղաքական մտքով բուս ենք, այսինքն ուսուցիչները հպարտի և անաւագ այլ տնօրինեան մարմնի և ունիմք նոյն օգուտը: Եւ վնասը ինչ որ ունի թագաւորութիւնը ներքուստ և արտաքուստ» (էջ 334): Սա դասական բանաձևն է, որ մշակեց Հայոց թատենակ իշխող, ղեկավար ակադեմիք Հայ Հասարակական մտածողութեան մէջ: Հայութիւնն արդուքիւն է առանց քաղաքական անօթի, հետեալաբար ուսուսչայոց հարցը, ըստ Սո. Նազարեանի, քաղաքական հարց չէ, այլ միմիայն մշակութի խնդիր: Չունեցանելով ուրիշ քաղաքական իղէջ՝ Հայութիւնը պիտի ջանայ ապահով կացուցանել իր ազգային կարողութիւնները, ինքնատիպ դիմագիծը և արտայայտութեան ուրոյն ձևը: Եւրոպական իմացական նւաճումները պտուղները պիտի պատաստուին Հայոց մէջ՝ ստեղծելով նոր ղեկավար դաս՝ աշխարհիկ մտաւորականութիւնը: Նազարեանի խորհրդածութեանն ճիշդը հայ մշակութի ստեղծման պայմաններին ու պահպանման խնդիրն է: Որով նա առաջին մեծ մշակութային գործիչն է ուսուսչայոց մէջ:

Յեղափոխական խառնածք չունի Նազարեանը, ինչպէս իր կրօնէր ժամանակակիցը՝ Նալբանդեանը, ուստի և քաղաքական անկախութեան հարցը չէ ղեռնում: Եթէ մշակութի խնդիրը նրան գործածում էր խաղաղ մտաւորական աշխատաւոր, ապա բռնադատած Հայրենիքի արդատադրման հարցը նրան պիտի դարձնէր յեղափոխական, ինչպէս Մ. Նալբանդեանին: Նազարեանը Հայրենիքի հարցը քննութեան նիւթ չի դարձրել: Հայութեան պատմական անցեալը բնկելիս նա զրուճ էր. «ստանց կամքի, որտի և ձեռքի միութեան», առանց մի ընդհանուր գաղափարի, որ պիտոյ է լինի Հայրենիքի պաշտպանութիւնը, ոչինչ կարողացել չէ և կարող չէ յառաջանալ» (էջ 168): Եթէ հաւաքական գործակցութիւնը այդքան անհրաժեշտ էր մեր պատմութեան նախարարական շրջանում, ապա ևս առաւել անհրաժեշտ է այժմ. միայն մի տարբերութեամբ: Այժմեան Հայութեան գործակցութիւնը, միասնական հանրային աշխատանքը չունի նպատակ Հայրենիքի փրկութիւնը: Հայ Հայրենիքը, ըստ Նազարեանի, ազատագրած է. սուսները եկել դարւել են Պարսկաստանից Հայկական հողերը:— «Ժողովրդի Հայրենիքն այժմ ազատած է ստրկութիւնից: Նա կապւած է մի ևւրդակական լուսաւորութիւնն ընդհուպ տէրութեան հետ. Ստրկութեան կապանքները հանուծ են Հայրենիքի ինքնից Հայրենիքում» (էջ 92): Ուրեմն, Հայրենիքի խնդիրը լուծւած է, նրա հետ և քաղաքական հարցը — Հայը քաղաքական պահանջ չունի, նա Հայ է, բայց ուս քաղաքացի: Ոչ թէ Հայրենիքն է նրա տքնալան աշխատանքի տարարան, այլ Ազգը. ոչ թէ Հայրենիքն է, որով, Հայրենիքի խնդիր չկայ. կայ մշակու-

թի խնդիր. Նազարեանի ուսմունքի մէջ այս երկուսը չեն համադրուում, ի հարկէ, չեն էլ հակադրուում, այլ պատմական իրադարձութեանց հետեանքով բաժանուում են. բաժանելով դատուում են հայ հասարակական ու քաղաքական մտքի, տարբեր փուլերը՝ կազմելով մեր ընկերային զարգացման մի շատ ինքնատիպ արտայայտութիւնը: Ազգապաշտպանութիւնը դատուում է Հայրենասիրութիւնից, ապա՝ Հայրենիքից: Պիտի անցնի երկու սերունդ — Նազարեան - Արժուունի — մինչև որ ազգն ու Հայրենիքը համադրւին ու քաղաքական լուծում ստանային յանձին իրաֆիլի, ու մինչև որ Հայոց յեղափոխութիւնը դարձնի իրականութիւն:

Եթէ Հայրենիքի հարցը Նազարեանին չի դարձնուում, ապա արգելութեան խնդիրը, աւելի ճիշտ, Հայ մշակութի հարցը նրա հողաշրջութեան գլխաւոր խնդիրն է: Ազգային մշակութի հարցը նա լուծում է ուսուստականութեան առհասանելու: Մեր մշակութային վերածնութեան նկատմամբ ուսուստականութիւնը ոչ մէկ կասկած չպիտի ունենայ, քանի որ ՅՈսկան թուականներին Ալեքսանդր Բ. իսկ հնչեցրել և մշակել է յառաջողութեան սկզբունքը՝ գործի կանչելով հանրային բոլոր սեփերը: Հայութիւնը պիտի օգուտի «լուսաւորեալ» պետութեան ընձեռած միջոցներից և վերանորոգի: Մեր քաղաքական պահանջ չունենալու հետեանքով՝ «Ռուսաստանը կարող է բոլորովին աներկար յայ յինչ Հայոց ստղի դէպի նա անդձեռի հաւատարմութեան մասին, և գրա սպաջոյցը միշտ և հաւապագ տւել է նա: Տանիկները որպէս մահմեդականք իւրեանց յարաբերութեան մէջ դէպ ի Ռուսաստան թէ շատ և և թէ փոքր միշտ կասկածելի են: Վրացիք թէպէտ և կարող չէին պահպանել իւրեանց դրութիւնը պարսիկների երեսից, այնուամենայնիւ տրոնում են և անդձ են Ռուսաստանից, որ սա բաւականացել չէ մի պաշտպանողական իշխանութեամբ, այլ ստորադրել է նրան իր ստոյգ հրամանատարութեան տակ: Բայց Հայը ճշմարտապէս շնորհակալ է Ռուսաստանից, որ ազատել է նրան մի անտանելի, անարգական ստրկութիւնից և բացել նրա առջև մի նոր քաղաքական կեանքի ասպարէզ» (էջ 96):

Սակայն, որպէս ուսուսական քաղաքացի, ինչպիսի՞ պահանջներ ունի և ի՞նչ ձեռով պիտի ապահովի նա Հայ մշակութի: Հայ մշակութային միաւորը պիտի ստանայ որոշ ձեւաւորում և օժտուի որոշ իրաւունքներով, պիտի դառնայ ինքնավար մի մարմին: Նախորդ դարի ՅՈսկան թուականներին Հայ կրօնա-գաւանական մարմինը ճանաչւած էր որպէս այդպիսին և ստացել էր որոշ ինքնավար իրաւունքներ յանձին Պոլսեանիէի: Այժմ, երբ Սո. Նազարեանը ջանում է ստեղծել նոր ազգութիւն՝ աշխարհիկ իմաստով, աշխարհիկ մտաւորականութեան ղեկավարութեամբ, այլ լսաքով՝ կրօնա-գաւանական փոխաւորութիւնը էր ազգային-մշակութայինով, ի՞նչ կազմակերպութիւն էր տալիս նրան: Ըստ նրա՝ պատմա-մշակութային ուրոյն միաւոր մնալու համար անհրաժեշտ է ձմի նիւթական կամ բարոյական բունապատութիւն, մի փայտեայ կամ հողեւոր դատական: Հայերը չունին այդ նիւթական դաւապանք: Հայոց ազգը չունի թաղաւորութիւն, ուրեմն և մի Պետրոս Մեծ կարող չէ վերկենալ նրա մէջ և ինքնիչ-

խան գաւազանը ձեռքին հրամայելով՝ առաջ մղել այգաշինութեան գործը: Հայոց դուռնիները այլ է. նրա կարող մարդիկը, մանաւանդ ազգի հողեւոր գլուխը պարտական է գործ դնել մի բարոյական գաւազան կեանք և կենդանութիւն յառաջանելու ազգի մէջ» (կէ 127):

Ուրեմն, «նիւթական գաւազանը» չկայ. գոնէ լինի «բարոյական»: Իրաւունքի սահմաններէջ նազարեանն անցաւ բարոյականի սահմանը: Նա չհիմնաւորեց հայ մշակոյթի իրաւունքը, և չէր էլ կարող հիմնաւորել, որովհետեւ Խուսապտանը չէր ճանաչում հայութիւնը որպէս ազգ, և որպէս այդպիսին էլ իրաւունքներ չէր տալիս: Յժական թւականներին ազգային իրաւունքի պահանջը յեղափոխական գործ էր, իսկ նազարեանը յեղափոխական գործիչ չէր: Եթէ հայ մշակոյթը իրաւական հիմունք չունի, ապա նրան սլաշտպանելը դառնում է լոկ բարոյական պարտք: Սա նշանակում էր կոչ անել հայ մշակութային միութեան պատկանող մարդկանց խղճին և դիտակցութեան: Երկուսն էլ շատ թոյլ էին ու պակասաւոր նախորդ դարի կէսերին: Իրակա-

նութեան մէջ նազարեանն ստիպւած է բաւարարելու 1836թ. Պորտեմնիէի վրա դժած սահմաններով, որը հայ հոգեւորականութեան դարձնում էր իրաւական տէրը հայ մշակութային-կրթական հաստատութեանց: Բայց եթէ նազարեանը իրօք բաւարարոււմ էր դրանով և մարդասիրական հաստատութիւններով, սա նշանակում է, որ իրականութեան անյաղթ պարագաները ստիպեցին նրան հրաժարելու իր քաղաքական ուսմունքից, որ այնքան արդիական էր հնչում, և նորից կառչած մնալ հայ հողեւոր իշխանութեան, «բարոյական գաւազանին», գործել ևրպական լուսաւորութեան անունով, ջանալ ստեղծելու աշխարհիկ ազգութիւն, հայ կեանքի զեկամարութիւնը յանձնելու նոր ստեղծւող մտաւորականութեան, սակայն, այս բոլորը կատարել կրօնական-դաւանական հաստատութիւնների ծածկոյթի տակ:

Եւ հայը երկար ժամանակ այդպէս էլ արաւ, մինչև որ իր ազգային պահանջներին համապատասխան իրաւական ձևակերպում տուց:

Գ. ԳԻՒԶԱԼԵԱՆ

Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Շ Ո Ւ Ր Ջ

Անցեալ տարի այս ատեն, յանկարծ խուճապի մատնելով երկտացոյցի բացէն, որ ժառանգական է, զեմալապետութիւնը հրամայեց խնայողական շարժք մը կազմակերպել: Օրակարգն էր. — ամէն ինչ թրջական. կարելի եղածին չափ զին դնում՝ արտասահմանէն: Պատրաստեցաւ մասնաւոր կանոնադիր մը, զարկ տալու համար տեղական ճարտարաբանտին: Կանոնադիրը պատիժներ կը նախատեսէր անաստողներուն: Թմբին հուշակեցաւ աղբային ըմպելի, փոխան սուրճին: Թանը յանձնարարեցաւ իբրև գինի: Կիներն անգամ շարժման մէջ դուրեցան, որպէսզի գոհնան տեղական արտադրութիւններով, փոխանակ միլիոններ թափելու օտար հրապարակներու վրա, արդուզարդի և անուշահոտութեանց համար:

Հաւատարիմները ծափահարեցին այս արտակարգ տնօրինութիւնները, քանի որ հրամանը վերէն կուգար: Իսկ դառնացածները առիթը գտան փսփալու — «Ես դուշակած էի արդէն»: Այս շարքէն Քեւորիմ Գարայէզիքի փաշա, պարտք սեպեց յօրեւած մըն ալ գրել, երբ մամուլը ազատ էր տակաւին: Ի՞նչ կըսէր «Հայաստանի յաղթականը».

— «Քանի քանի անգամ դիտել տւեր էի թէ մեր ներածումներն ու արտածումները հաւատարակչուած չեն և միլիոններով բաց ունիւն: Մատանանք էի վերահաս վտանգը և այն աղէտը թէ մեր հարստութիւնները կը փճանան տեսակներէն: Այս բոլորը նախատե-

սեր և ազգարարեր էի ութ տարի առաջ, բայց լսող չեղաւ»:

Այնուհետև տեղի ունեցաւ Ծէթհի պէյի յաղթական մուտքը Իրիլը, գլըզագին արտայայտութիւններով, և ժողովուրդը ուժ տունելով, բարձրաձայն պատմեց իր թշուառութիւնը: Բայց կարծ տեւեց մարգանքը, — հազիւ հարիւր օր: Եւ երբ Ծէթհին ասպարէզէն քլլեցաւ, կացութեան տէր և տիրական ձգելով Ըամէթը, Մուսթաֆա Քեմալ ինքն էր որ, վերջացող տարւան ընթացքին, պտոյտ մը կատարեց դէպի ծովեզբը և միջին գաւառները, ժողովուրդին վիճակը ուսումնասիրելու համար: Արդիւնքը՝ Ազգ. Մեծ Ժողովին լուծումը, նոր՝ սարքովի ընտրութիւններ, և կրճատում երկտացոյցի: 1923ին ի վեր աստիճանաբար ուււելով 226 միլիոն ոսկիի հասած երկտացոյցը զեղչեցաւ 185 միլիոնի: Եւ ամէն ինչ հաւատարակչուեցաւ — կնչպէս սուլթանական օրերուն: Այսինքն թուրքի վրա:

Բայց ահա նոր անակնկալ մը: Երկտացոյցի վաւերացումէն քանի մը ամիս յետոյ, Թուրքիա կը մատուցէ նոր տազնասպի մը, շատ աւելի ծանր և անդիմազերելի:

Նոյ. 12ին, գործադարներու խորհուրդը զինքըրը ցերեկին խառնելով, կը պատարտէ արտակարգ որոշմանգի մը, որուն տրամադրութեամբ աննախընթաց սահմանափակումներու կենթարկելին թուրքիոյ ներածումները: Էնկիւրին ըսաւ, — եղիցի, և կղեւ: Նոյեմ-

բեր 16ին, արդէն կը հրատարակէր հրամանագիր մը, որ նւագագոյն շափին կը վերածէ ներածումները: Այսուհետև, իւրաքանչիւր ամսու 10ին, համեմատական բաժին մը պիտի հաստատուի ներածելի ապրանքներու իւրաքանչիւր տեսակին համար, և երկու ամսուան պայմանագրով: Իւրաքանչիւր երկամսեակի, աստիճանաբար պիտի պակսեցնեն ներածման քանակը. այսինքն պիտի թալլարեն միայն բացարձակ անհրաժեշտը, մինչև որ շտկի առևտրական կշիռը: Որոշմանդէրը, որ կը բազկանայ վեց յօդածներէ, միևնոյն աստիճան պայման կը դնէ որ կառավարութեան կամ պետական հաստատութեանց դնած ապրանքներու փոխարժէքը վճարի տեղական ապրանքներով: Եւ յետոյ, որպէսզի մաքսանենդութիւնը խափանելի, ներածումները պիտի կտտարին միայն վեց նաւահանգիստներէ, — Պոլսոյ, Իզմիր, Մերսին, Տրապիզոն, Սամսոն և Կարս: Առհերձ բաժինը, 90%: Կիլիսայ Պոլսոյ, իսկ ամենէն աննշան մասը՝ վերջին երեք կայաններուն:

Նոր կարգադրութիւնը արդէն տակն ու վրա ըրած է Պոլսոյ հրապարակը: Մաքսատուները օրերով անգործութեան դատապարտուցան: Իսկ օտար դեպահները, որոնք պարզապէս առևտրական գործակալներ պարծած են վերջին տարիներս, փութացին մասնաբեր տեսակցութիւններ, դերութիւններ խնդրելու:

Կացութեան ծանրութիւնը ապացուցանելու համար, կարժէ յիշել որ հրապարակալիւրներն ալ խառնուցան կարաւանին և ոչ միայն սրբազան պարտականութիւն համարեցին բացատրել նոր կարգադրութեան առաւելութիւնները, այլ և պահանջեցին «հայրենադատութիւն»՝ հռչակել մաքսանենդութիւնը, որ առևտուրին ամենէն կենդանի մասը կը կազմէ Թուրքիոյ մէջ, սկիզբէն ի վեր: Նոյն ինքն «Հաքիմէյթը Միւլիյէն», էնկիւրիի պաշտօնաթերթը, գրեց զբաղէտներեափոխան ծախի՝ Րոֆիզի պէյն ստորագրութեամբ (18 նոյ.):

— «Մաքսանենդը, փախցնողը, օգնողը և անոնց նւր ընկերութիւն ընդդէմ պէտք է հայրենիքի թշնամի հռչակի: Մաքսանենդութեան դէմ գործնական մէկ միջոց կայ: Յելուզակները, յետադիմականները և բոլոր անոնք որ պետութեան զոյսութեան դէմ վտանդ մը կազմած են, շատ լաւ դիտեն թէ ի՞նչ է այդ միջոցը: Այսինքն այդ վտանգը արմատախիւ ընել: Պետական կազմին մէջ ո՞ր և է պաշտօն ունեցող տարրերը պէտք է զօրաշարժի ենթարկելին մաքսանենդութեան դէմ և բոլոր հայրենակիցները պէտք է հայրենադատութիւն նկատեն մաքսանենդութիւնը:

«... Լեբան վրա թէ քաղաքին մէջ, մաքսանենդը պիտի հետապնդի լրտեսի մը պէն»:

Կարճ խօսքով, կախողանն է որ կը սպասէ մաքսանենդին, ինչպէս զեմալպետութեան դէմ ըմբոստացող ունէ «հայրենադատ»:

Բայց սպառնալիքներէն աւելի պերճախօս են թւանշանները:

Համաձայն պաշտօնական վիճակագրութեան մը, վերջին եօթը տարիներու ընթացքին Թուրքիոյ տնտեսական հւասարակշռութիւնը խոնգարած է աւելի քան 302 միլիոն ոսկիի բացով մը: Թուրք թերթերն են

որ կը հրատարակեն հետեւելի ցուցակը (1931ի արդիւնքը միայն տասը ամիս հաշուով). —

Թւական	Ներածում	Արտածում
1925	241,618,652	192,025,260
1926	234,699,735	186,422,755
1927	211,398,184	158,421,998
1928	223,531,775	173,537,489
1929	256,296,379	155,214,071
1930	142,553,703	151,454,371
1931	111,544,854	95,694,074

Եզրակացութիւնը, — 1925-31, եօթը տարւան ընթացքին Թուրքիայէն արտասահման գացած է 302,843-364 ոսկիի հարստութիւն մը:

Ուրիշ նախ մը. — 1929էն 1931 (այս վերջինը միշտ տասը ամիս հաշուով), ներածումները եղած են 518 միլիոն ոսկի, արտածումները՝ 403 միլիոն ոսկի: Ուրեմն, 115 միլիոն ոսկիի թրջական հարստութիւն մը չւած է արտասահման:

Արտածումներու մանրամասնութիւններն ալ շահեկան պատկեր մը կը ներկայացնեն, Թուրքիոյ տնտեսական շքաւորութեան մասին:

Միախոտը Թուրքիոյ ամենէն բանուկ բերքերէն մէկն է, և տարին 50 միլիոն ոսկի եկամուտ կը սպասուի: Մասնագէտներու կարծիքով, Եթէ հոգ տարւի, մինչև 75 միլիոն ոսկի կրնայ բերել: Արդ, Արտածումներու Գրասենեակին վիճակագրութիւնը ցոյց կուտայ թէ 1929ի աւաջին տասը ամիսներուն ծախւած է 29,791,581 ոսկիի ծխախոտ, 1930ի նոյն ժամանակաշրջանին՝ 34,404,211 ոսկիի, իսկ 1931ին՝ 18,867,662: Կէս առ կէս ինկած է նաև հում բամպակի արտածումը, — 1929-ին՝ 6,472,968 ոսկի, 1930ին՝ 11,747,414 ոսկի, 1931-ին՝ 3,894,982 ոսկի: Ինկած են նաև ձէթի, ափսոսի, բուրդի արտածումները: Մեծապէս աւելցած է միայն գարին, 104,780 ոսկիէն բարձրանալով 2,127,435 ոսկիի: Բայց ի՞նչ կարժէ գարին, տասնեակ միլիոններու քով:

Միախոտի տազնապը մասնաւորապէս շեշտուցու վերջին տարիներու ընթացքին: Հայերու և Յոյներու կտտորածէն և բռնազարթնէն յետոյ, ոչ միայն հրեան դուրսէն մը ճարակեցաւ, այլ և Յունաստան, Պուլկարիա և Ամերիկա սաստկացուցին մրցակցութիւնը: Ինչ 1930ի աշնան թուրք թերթերը կը գանդատէին թէ տեսակը աւելած ըլլալով, գնորդները հետզհետէ կը պակսին և ամէն տարի 13 միլիոն ոսկիի պակաս ծխախոտ կը ծախուի: Իսկ այս տարի փետրուարին Տրապիզոնի և Արդուռնի ծխախոտները ծախւած չըլլալով, դիւղացիներէն շատերը սկսան կաղին տնկել:

Ինչ որ պարզեցինք խիտ դիժերու մէջ, տազնապին առևտրական երեսն է: Կայ տակաւին բուն տնտեսական-եյմտականը, որուն հանդէպ ալ արտակարգ միջոցներ ձեռք առած է զեմալպետութիւնը:

Արտածումներու սահմանափակման հետ մէկտեղ, կառավարութիւնը պարտաւորած էր երկտացոյցի նոր կրճատման և «ազգային պաշտպանութեան տուրք»ի օ-

բինազրիծ մը, որ Ազգ. Մեծ Ժողովին ջննութեան ենթարկեցաւ նոյնմեր 28ին, օրէնք հռչակեցաւ ղեկու- լին:

Այդ օրինադրով, որուն ընդունելութեան համար կատարութիւնը վստահութեան խնդիր յարուցած էր, կը հաստատուի ընդհանրական տուրք մը, կամ թռչակ- ներէ և եկամուտներէ զեղջ մը կը կատարել հետեւեալ համեմատութեամբ.— Մինչև 150 ոսկի ստացողներէ՝ 10%, 151էն 350 ոսկի ստացողներէ՝ 12%, 351-600 ոսկի ստացողներէ՝ 1է, իսկ 601էն աւելի ստացողներէ՝ 16%: Մինչև 150 ոսկի ստացողներուն 30 ոսկին տուրքէ զերծ պիտի համարուի: Չեղչած է նաև երես- չխիսաններուն թռչակը:

Այս բացառիկ միջոցները պիտի բաւե՞ն առևտրա- կան կշիռը շտկելու և ելմտացոյցի հաւասարակշռու- թիւնը պահպանելու: Ո՛չ: 1932ի կրճատ նախահաշիւը 15 միլիոնի բաց մը կը ցուցնէ արդէն, իսկ Հանրային Պարտքի տոկոսները կը մնան միշտ անվճար: Էնկիւրի մեծ յոյսեր դրած էր Ամերիկա զրկւած պատերազու- թեան վրա: Հասած տեղեկութիւնները կը հաւաստեն թէ Մարածողու Շիւքրի պէյ բարձրովին յուսախար եղած է: Շնորհիւ վերջին տարիներու ընթացքին մղած թրջանպատտ պրոպագանտին, և այս տարի տրամա- դրւած իւրոտ կայծի մը (70,000 տոլար), ամերիկեան կապք մը ընկերութիւններ տրամադիր կերևան Հանրօ- ղուտ շինութիւններ ստանձնելու: Նոր Թուրքիոյ ու- զանն ալ այն է որ դրամ մտնէ երկրին մէջ, այս կամ այն ձևով, առանց վնասելու իր քաղաքական և տնտե- սական անկախութեան: Իսկ ուրիշ կերպ դրամ՝ չի կը- նար ճարել: Ոչ միայն չեն տար, այլ և Մոսկւան ալ ծուռ կը նայի:

Այս տեսակէտն, չափազանց ուշադրաւ է «Իդ- վևտիստ»ի խմբագրականը՝ Լիտվինովի այցելութեան առթիւ:

Մոսկւայի պաշտօնաթերթը անգամ մը ևս փառա- բանելով ուսուցիչութեան թարեկամութիւնը, կը հրէսէ կարգ մը խօսքեր որոնք միևնոյն ատեն ազգաբարեու- թիւններ են:

— «Տակաւին չէ վերջացած արևմտեան պետու- թեանց մղած պայքարը՝ Թուրքիոյ ազգային անկա- խութեան դէմ: Այդ պայքարը ներկայան կը մղուի տն- տեսական գետնի վրա: Հակառակ Թուրքիոյ ելմտական ծանր կացութեան, արևմտեան պետութիւնները ամ- բողջական վճարումը պահանջեցին Օսմ. կայսրութեան շրջանի պարտքերուն, քաջ դիմաւորով որ իրենց այդ պահանջը թրջական դրամին անկողնը կը շնանակէ: Թուրքիա ներկայիս կարևոր և մեծ պարտականու- թեանց առջև կը գտնուի, իր տնտեսական վիճակը բար- ձրացնելու համար: Արևմտեան պետութիւնները տնտե- սական ոչ մէկ օժանդակութիւն կրնան ընել Թուրքիոյ, որովհետև Ազգերու Դաշնակցութիւնը տակար է, Անգլի- ոյ մէջ խողովութիւնները անպակաս են և համաշխարհ- հային պատերազմի վաննզը անկցած է:

«Թուրքիա այսօր կը բոլորէ տնտեսական անկա- խութեան պատերազմի շրջան մը, և կրնայ տեսնել բա- րեացակամութիւնը ոռւտ ժողովրդական զանգւածնե- րուն որոնք գոհունակութեամբ կը հետևեն անոր տն- տեսական ամբողջումներուն: Այս պայքարէն վերջ,

Թուրքիոյ տնտեսական Տումուրուտներէ յաղթանակը առաջին անգամ շնորհատուրդը դարձեալ Խորհրդային Միութիւնը պիտի ըլլայ»:

Աւելորդ սպացոյց մը ևս, թէ Մոսկւան շուգիւր դիւրաւ ձգել Թուրքիոյ օժիքը:

* * *

Թուրքիոյ ներքին դործալարը վերջերս պտոյտ մը կատարեց ղէպի արևելեան և հարաւային գաւառները, ընկերակցութեանը հատուտիւր շքախումբի մը, որուն գլուխը կը գտնուէին երեք զօրավարներ և մարզպան Եպրահիմ Թալի պէյ: Գրոյտը տեղի ունեցաւ յատկա- պէս այն շրջաններուն մէջ ուր Գիւրսեր կը բնակին, — Երզնկա, Բալու, Չմշկածաք, Խարբերք, Մալաթիա, Տիգրամահերտ, Մարտին, Մղերք: Նպատակը՝ բարի է անշուշալ, — «ուսումնասիրել ժողովուրդին վիճակը»: Իսկ իրականին մէջ՝ բաւական թափանցիկ:

Ամէն տեղ ուր որ հանդիպեցաւ, Շիւքրի Գարա պէյ իր հետ ունէր ոսարկան-գորքի և զինւորներու պատկանելի գունդ մը: Ամէն տեղ այցելութիւնը կը կատարէր ցուցադրական հանդիսաւորութեամբ, նոր գողերու մատնելով արքայախնէ ու թշուառութենէն ան- բանացած բարութիւնները: Եւ ամէն տեղ, իր ձե- տումն եղաւ զգացնել կատարութեան ուժը, որ կը սկսի կախաղանով և կը վերջանայ տեղահանութեամբ ու ջարդով, ինչպէս մեր օրերուն:

Նախարարական ուղեորութեան ամենէն կարևոր կայաններու Լոյան Տէքսիմ և Տիգրամահերտ:

Առաջինը, քրտական ամառաշէլի միջնաբերդը, մինչև այսօր ալ կը պահէ իր բմբոս մեկուսացումը: Բոլոր փորձերը՝ ամենի յունեւերէն և անդնդախոր ձո- լերէն վար իջնցնելու այդ լեռնականները՝ անցած են ապարդիւն: 1925էն սարգիս, թէ և Տէքսիմցիները շմանակեցան քրտական շարժումներուն, բայց խո- հեմութիւն պարտադրեցին թրջական իշխանութեան: Տէքսիմցիները կը կարծէին թէ կատարութիւնը մին- չև վերջն ալ գործ չպիտի ունենայ իրենց հետ: Բայց ահաւասիկ թիթեպի ըլլալով Արարատի հոգեբէն, էն- կիւրի լրջօրէն կը խորհի խելքի բերել նաև Տէքսիմը: Արդէն իսկ ծրարիւր մը պատրաստուած է, կարգ մը գործողութիւններ կատարելու համար քրտական միջ- նաբերդին դէմ: Կառավարութիւնը զանազան խայծեր, «լքեալ ղոյնքը» խոտանալով Տէքսիմցիներուն, կը փորձէ մաս-մաս բարձունքներէն իջնցնել զանոն և տեղաւորել գիւղերու, քաղաքներու մէջ: Միւս կողմէ, կուզէ պառակտում սերմանել, և ցեղախումբ ցեղա- խումբի դէմ հանելով, դիւրացնել զինուորական գոր- ծողութիւնները: Այսօրեան Թուրքիոյ համար, Տէքսի- մը ան է ինչ որ էին Հայկական Ձէյթունն ու Սասու- նը՝ սարխինի առաջ, սուլթանութեան համար: Գեմա- լապետութիւնը չի հանդուրժեր որ անվերջ ինքնավար, սպանալից վիճակ ունենայ այդ բարձրաւանդակը, պետութեան ամենէն բանուկ մէկ երակին վրա: Եւ ե- թէ իսկպէս երկար տե՛է խաղաղութիւնը արևելեան ճակատին վրա, Տէքսիմը պիտի հարկադրուի վճռական կոխ մը մղել զեմալական իշխանութեան դէմ, որ ա-

ևտապակութիւնը ջնջելու պատրուակով, քրտական բոյն մը ևս ոչնչացնելու կը ձգտի:

Եւրբի Գարայ պէտի երկրորդ կայանն եղաւ, ինչպէս ըսինք, Տիգրանակերտը: Այնտեղ ալ քրտական հնոց մը կը բանի, բայց դաշտավայր ըլլալով, այնքան մտահոգութիւն չի պատճառու: Եւ ահա, թէ թուրք և թէ քերտ ամբողջի վրա ազդելու համար, ներքին գործավարէ հայկական խնդիր մը կը ստեղծէ... աւետարական գեոնի վրա:

Ներածումներու սահմանափակումը հազիւ հրամանադրուած, կառավարութիւնը խիստ միջոցներ սահմանեց մաքաննդութեան դէմ: Եւ քանի որ մաքաննդութիւնը հայրենապաշտութիւն հռչակեցաւ՝ հարկ էր արծաթել կրակը: Արդ, ներքին գործավարը Տիգրանակերտէն հեռազրով (22 նոյ.) կը հաղորդէ ինկիւրթ՝ թէ «մաքաննդութիւնը սարսափելի շափերու հասած է հարստային դաւաճներուն մէջ», իսկ այս չարիքին պատասխանատուն — հետևարար և քնականարար — Սուրբ հաստատուած հայ դաղթականներն են: Թուրք թղթակիցները մէկ բերան կը պատմեն.

— Մաքաննդութիւնը սանեկն աւելի մեծ համեմատութիւններ ստացած է Սուրբոյ սահմանազրուի երկայնքը գտնուող գիւղերու մէջ, ուր հայերը կը բաշարեն և կը հովանաւորեն մաքաննդները, որոնց փախցուցած ապրանքները կը փոխադրեն Անատոլի ներսերը, մեծ միտա պատճառով թուրք վաճառականութեան... Մեր գանձէն փախցած ապրանքներով սահմանազրուիսն անդին կը կուտակուի մեծ հարստութիւն մը: Մաքաննդութիւնը այս դրամներով մեծ գիւղաբաղաներ կը կազմէ և պատճառ կըլլայ մեր ներքին ճարտարարեստին և տնտեսութեան մարերուն: Կարգ մը գիւղեր, ինչպէս Ճարպղուս, առ քանի մը տարւան մաքաննդութեան հատուկներով մէկ-մէկ գիւղաբաղանք վերածուած են... Մինչև թուրք վաճառականները տնտեսական աշխարհաստան տաշնապին հարածներուն կուրծք կուտան, մեր սահմանազրուիսն անդին, հայկական գիւղաբաղաներու մէջ մաքաննդութեամբ հարստացողներ կան, որոնք փոտաւոր կեանք կը վարեն Միջերկրականի ակերտուն վրա»...

Ամբողջ ամբան ընթացքին, թուրք մամուլը շարժաբար հէգեմաթին պատմեց, ապացուցանելու համար թէ Հայերը նոր Հայաստան կը շինեն Սուրբոյ մէջ, Տրանսայի աջակցութեամբ: Կողտար պետութիւնը հրապարակաւ ամբաստանեցաւ իրբեւ դաւադիր. և

թերթ մըն ալ սահման չափ ու սահման անցնելով, առաջարկեց որ հայ դաղթականները Թունուց և Ալժիրիս փոխադրուին:

Երևի այս թմբուկը այլ ևս լաւ չի հնչեր ականջներու, և հիմա նոր եղանակ մը պիտի փորձեն, միտքերը թունաւորելու և Սուրբիս հաստատուած հայ դաղթականները այլապէս կտակածելի ցուցնելու համար:

Արգարև, այս դաղթականութիւնը աչքի փուշ է դարձած Թուրքիոյ համար, որ չի կրնար հանդուրժել անոր այնքան արագ վերածնութեան և մասնաւոր չարեանութեան: Մինչև վերջ արեան և աւարի մէջ թաթիլաւած բարբարոսը չի կրնար ըմբռնել թէ տակաւին երկկ թալանած փոխտապանը ինչպէս յալոյցեցաւ ոտքի կանգնել հաղիւ տար տարիէն, տուն-տեղ ըլլալ, գիւղ և բաղաք շինել և ապարկեց կարողաւ առևտրական հրապարակին վրա: Չի կրնար, որովհետև դիտել որ ինք այնքան անհամար հարստութիւններ յափշտակելէ յետոյ, ամբողջ նահանգներ աւարի տալէ յետոյ, այսօր ունի միայն ամայի տարածութիւններ և անօթի բաղձութիւններ:

Ինկիւրթի ապահովութեան դաշնագիրներ կըքեց գաւազան պետութեանց հետ, իր բոլոր սահմաններուն վրա, բայց չկեցաւ հանդատանալ հայկական մղձաւանջն, որ և է սահմանի վրա, արեւելքն մինչև հարաւ, լեռներէն մինչև ծովը:

Եւ շարտի հանգստանայ, մինչև չհանգստանանք մենք ալ, վերտապանով մեր բաժինը աշխարհի բարիքներէն, — հայրենիք և ապատութիւն:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ. — Վանէն արտասահման անցած օտարական մը կը պատմէ. — Ամբողջ նահանգին մէջ ժողովուրդը ծայր աստիճան թշուառութեան մատնած է: Մասնաւորապէս կը տառապի հաղուտաի շղոյթութեան: Բրտական ո՛ր և է գիւղի մէջ դպրոց չկայ: Զօրքը կեդրոնացած է բաղաքները, իսկ մասնաւոր զօրք մասեր կան միայն Պաշալէ և Սարայ: Ժողովուրդի դժգոհութիւնը այնքան խոր է որ, մէկ ազգանշանի վրա կրնայ ապտամութիւն ծագել: Աշերէթները կտակածանքով կը նային իրարու և համբարաշխութիւն չի տիրել իրենց միջև: Կառավարութիւնը ամէն միջոցի կը դիմէ, պառակտուող սրբուր և դժգոհ աշերէթները Պարսկաստանի դէմ ուղղելու համար:

Մ Ե Ր Զ Ա Ր Ե Ի Ա Ն Ն Ե Ր Ը

ԹԻԻՐՔԻԱՆ ԵՒ ԱԶՐԲԵՋԱՆՑԻ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԸ

Ինչպէս յայտնի է, մինչև վերջերս, Պոլսում էր կենտրոնացած ազդեցական քաղաքական տարազրութիւնը: Թիւրքերը, հակառակ բարեկամութեան բոլշեւիկների հետ, հանդուրժում և նոյնիսկ ձեռքբեր տակից խրախուսում էին նրանց:

Բուլշեւիկները անտարբեր չէին դէպի այս փաստը և մերթ ընդ մերթ ճնշում էին գործ դնում Բենձալի կառավարութեան վրա՝ սահմանելով երկրից արտաքսուլ բոլշեւիկների հակառակորդներին: Խորհրդային դեպքանի բողոքի նկատմամբ, որ 1926թ., հնգա-

մեայ գոյութիւնից անտոյց, փակեց, Ռասուլ Չաղէի «Ենի Կաւկասիա» ամսագրով, որ թիւրք-ազրբէջանան գաղափարների արտայայտիչն էր և Մուսաբի բերանը: Հետզհետէ սահմանափակեց և Պոլսում հաստատուած կովկասցի ազգայնականների ազատութիւնը և, ի վերջոյ, թիւրքիայից հեռացեց Կովկասեան Անկախութեան Կոմիտէն, որի պաշտակներէն է Փարիզի «Prométhée»: Պոլսից վտարեց նաև այդ Կոմիտէի սիւններից Մուսաբի պարագլուխ Ռասուլ Չաղէն, որ հաստատուելով Վարշաւայում՝ շարունակեց, ձեռք տակից, վարել ազրբէջանցիների հակախորհրդային պայքարը և հակաբուլշևիկ հրատարակութիւնները թիւրքիայում: Հիմա այս վերջիններն էլ խափանած են: «Prométhée» ամսագրի նոյնմբեր համարում կարգում ենք այդ մասին:

«Թիւրք կառավարութեան հրամանով խափանած են Պոլսի հակաբուլշևիկ հետևակ թերթերը:

1. Օղլու-Խլտ, ամսաթերթ, ազրբէջանեան ազգային դազափարթաութեան օրգան, որ լոյս էր տեսնում ընդհանուր խմբազուլթեամբ Ռասուլ Չաղէի (ազրբէջանցի ծանօթ քաղաքական գործիչ և հրապարակախօս, պարագլուխ «Մուսաբ» արմատական-ուսմկավար կուսակցութեան ու Ազրբէջանի ազգային շարժման) և գործոն աշխատակցութեամբ Ազրբէջանի ամենէն աշգուսու քաղաքական գործիչները, գրադէտները և հրապարակախօսները: Շուտով պիտի լրանար Օղլու-Խլտը գոյութեան եռամսակը:

2. Ագբիլ թիւրք, նոյնպէս ազրբէջանեան և հակաբուլշևիկ պարթեթերթ, որ դադարեցած էր վերջերս:

3. Ենի թուրքեստան, թուրքեստանի տարագրիների պաշտօնաթերթը»:

Ուրեմն, խափանածը միայն ազրբէջանեան մամուլը չէ, այլ և թուրքեստանի: Պարզ է, որ Մոսկւայի ճնշման սակ, Քեմալը կտրուկ միջոցներ է ձեռք առնում ազրբէջանցի ու թուրքեստանցի ազգայնականների դէմ: Չնայած դրան, այս վերջինները շարունակում են իրենց յոյսը կապել թիւրքիայի հետ և նրանից ըստպանել իրենց փրկութիւնը ոռուսական տիրապետութիւնից: «Prométhée» շանթեր է թափում Մոսկւայի գըլխին և շարունակում է քնքոյշ զգացմունքներ տածել գէպի Անդրաս:

«Մոսկովեան դիւանագիտութիւնը կարող է այսուհետև հրէհել, գրում է նա... զգալի հարած է տրւած ազրբէջանեան ազգային մափուլթի թիւրքիայում: Այդ պարտաւ Ազրբէջանցի շարժումն ցաւի գզգզում այս պահուս Ազրբէջանում պայքարող սեղնիչ հոգում: Կարելի է հեշտութեամբ պատկերացնել, թէ ի՞նչ դառն տպաւորութիւն պիտի գործէ այս քայլը Ազրբէջանի ժողովրդի տրամադրութեան վրա, որը դէռքը ձեռքին, վճռական եռանդով պայքարում է իր ազգային և մարդկային իրաւունքների յաղթանակի համար: Նա չի հաւանայ ու չի հաւատայ, որ թիւրքիայի ազգային քոյր հանրապետութեան մէջ Ազրբէջանի ազգային հանրապետական թերթերը կարող են խափանել:

«Ասիական և անլուս, փաստը մնում է փաստ. իսկապէս դառն փաստ, յետպատերազմեան իրականութեան, որ կարող է կուշել «արբազան ետապաշտութեան դործ»: Ծաւալի՛ փաստ: Ծաւալի՛ ժամանակի և պատ-

մուծեան համար: Հնարաւոր բան է, որ անկախութեան և ազատութեան համար պայքարող ազրբէջանցի տնօրէնները իրենց սրտում Հանրապետական թիւրքիայից չունենան նոյն յիշատակները ինչ որ մաշար ու լեհ ազգայնականները պահել են Կայսերական թիւրքիայից»...

Եւ այս դառն դանդառները անելով հանդերձ «Prométhée» շամուղած է, որ եղածը մի պարզ միջադէպ է, պատահական երեւոյթ, թիւրք քաղաքականութեան մէջ, որ պիտի անցնի առանց հետք թողնելու, որովհետև «թիւրք ժողովրդի իրական շահերը կը թելադրեն իր ղեկավարներին ուրիշ գործելակերպ, ապ ուրիշ փաստեր, որոնք ընդունակ լինեն մոռացնել տալու մեր այսօրայ զգացած ցարը»:

Չուր յոյսեր: Առաջին անգամը չէ, որ «արբազան ետապաշտութեամբ» բռնած թիւրքեան թիկունքեց հարւածում է Կովկասի ժողովուրդներին: Այդ թիւրքիան էր, որ 1919ին համողեց լեռնականներին անձնատուր լինել բուլշևիկներին: Այդ «թիւրքիայի ազգային քոյր հանրապետութիւնն էր», որ ոռուսական կարմիր բանակը բերեց Ազրբէջան: Նոյն թիւրքիան էր, որ բուլշևիկների օգնութեամբ խորտակեց Հայաստանի անկախութիւնը և բուլշևիկներին գործակցեց կործանելու համար Վրաստանը: Վերջապէս, նոյն թիւրքիայի գործակալներն էին, որ օգնեցին Մոսկւային իր իշխանութիւնը տարածելու թուրքեստանի վրա: Թիւրքերը այսպէս են հասկանում «թիւրք ժողովրդի իրական շահերը», և դուր են պրոմէթէականները միամիտ դիմումները Անդրոյայի մեծահոգութեան: Թիւրքը երբեք մեծահոգութիւն չի ունեցել իրենից թոյլ ժողովուրդների նկատմամբ:

Թուում է թէ թիւրք հին ու նոր ղեկավարների հետապնդած այս «արբազան ետապաշտութիւնը», վերջապէս, պիտի բանար ազրբէջանցի գործիչների աչքերը ու պիտի հակակցեն նրանց, որ Կովկասի ժողովուրդների ազատութեան տեսակէտից Կեմալական թիւրքիան պակաս թշնամի չէ, քան Խորհրդային Ռուսաստանը: Երկուսին էլ երեք անծէք: Թիւրքիայի կիրտած ետական քաղաքականութիւնը, որի սահմանների մէջ չի մտնում ոչ «քոյր» Ազրբէջանի, ոչ էլ, առհասարակ, ուրիշ ժողովուրդների ազատութեան մտահոգութիւնը, պէտք է դրդէր ազրբէջանցիներին որոնելու ուրիշ, աւելի իրական ուղի: Այդ ուղին կովկասեան ժողովուրդների համերաշխութիւնն է ընդդէմ իրենց ազատութիւնը ընտանքող բոլոր թշնամիների, ի թիւս որոնց և թիւրքիայի: Ազրբէջանցի ազգայնականները շարունակում են օրօրել սին յոյսերով, թէ թիւրքեան զբական գործոն է կովկասեան ժողովուրդների ազատութեան խնդրում, մինչդեռ պատմութիւնը 1918ից սկսած մինչև այսօր հակոտակն է ապացուցանում. թիւրքերը քանակեցին անկախ Կովկասի միութիւնը, թիւրքերը խորտակեցին Կովկասի առանձին հանրապետութիւնների անկախութիւնը, հիմա էլ, ձեռք ձեռք բուլշևիկները հետ, ստրկութեան լծի տակ են պահում Կովկասի ժողովուրդներին ու իրենց հայրենացի ազատութեան մասին մտածող ազրբէջանցի հայրենասէրներին էլ դուրս են քշում թիւրքիայից: Ի՞նչ բարիք կարելի է սպասել այս թիւրքիայից:

ՎՐԱՑ ՏԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Նոյ Րամիչվիլիի սպանիչի գատավարութիւնը ցոյց տւեց, որ վրաց տարագրութեան ծոցում տիրող պառակտումները շատ աւելի խորն են, քան դրսից կարելի է ենթադրել: Բամիչվիլիի սպանութիւնն էլ արգիւնք էր ներքին այդ հիւանդագին վիճակի:

Վրաց տարագրութիւնն այսօր բաժանւած է մի շարք խմբաւորումների: Փարիզում շարունակուած է գոյութիւն ունենալ Վրաստանի կառավարութիւնը Ն. Ժորճանիայի գլխաւորութեամբ: Ժորճանիայի աջ բաղուկ Բամիչվիլիի մահից յետոյ կառավարութեան եռանդը շատ է թուլացած: Բամիչվիլիի տեղը այժմ գրաւել է արտաքին դործոց նախարար Ե. Գեղեզնիսի:

Կառավարութեան կողմին կայ, այսպէս կոչւած, Աղզային Կենտրոնը, որի մէջ մտնում են սոցիալ-դեմոկրատ, սոցիալիստ-ֆեդերալիստ, սոցիալիստ-յեղափոխական և ազգային-դեմոկրատ (մէկ հատումի) կուսակցութեանց ներկայացուցիչները: Այս կենտրոնը մի տեսակ խորհրդարանը փոխարինող մարմին է, հարցերը նախ քան կառավարութեան դործադրութեան անցնելը քննուած են նրա մէջ: Կառավարութիւնը որոշումները գործադրում է կամ ինքը՝ անմիջապէս և կամ գեսպանատան միջոցով: Փարիզի վրաց դեսպանութիւնը Ա. Չիսենկելիի գլխաւորութեամբ դեռ շարունակուած է ձանձառել Քրանսական կառավարութեան կողմից:

Փաստօրէն, միապէս կենտրոնում, այնպէս և կառավարութեան ու դեսպանատան մէջ, տիրող տարբեր սոցիալ-դեմոկրատ մենչեիկներն են: Միւս կուսակցութիւնների գոյութիւնն ու դերը աւելի անանական է: Համեմատաբար, աւելի ուժեղ է ազգային-դեմոկրատ կուսակցութիւնը, որ, սակայն, պառակտուած է ինքն իր մէջ, գլխաւորապէս մենչեիկների հետ ունեցած յարաբերութիւնների պատճառով:

Աղզային-դեմոկրատները բաժանւած են երկու մասի: Փոքրամասնութիւնը Գ. Գուգուաշի գլխաւորութեամբ մտնում է Կենտրոնի մէջ և դործակցում կառավարութեան: Մեծամասնութիւնը ընդդիմադիր է: Այս վերջինի ընդդիմադրութիւնն էլ սկզբունքային չէ, այլ, աւելի շուտ, ազդեցութեան խնդիր. մենչեիկների հետ համաձայնութեան չեն եկել Կենտրոնի անդամների թւի շուրջ: Վրաստանի անկախութեան և քաղաքական հակումի հարցում երկուսն էլ նոյն զետնի վրա են կանգնած:

Աղզային Կենտրոնը մտնում է, այսպէս կոչւած, Կովկասի Անկախութեան Կոմիտէի մէջ: Թէև մենչեիկները Ընկերակցական Միջազգայինի պահանջով դուրս եկան այդ Կոմիտէի կազմից, բայց Կենտրոնի միջոցով մասնակցում են նրա գլխատանքներին: Ընկերակցական

աշխարհում նրանք ներկայանում են իբրև յիշեալ Կոմիտէի և սրա օրդան «Prométhée»ի հակառակորդներ, իրապէս դործօն դեր են կատարում վերջիններիս մէջ: Այս պատեհապաշտ ու երկրբանսի դիրքը նրանց կեղծ դրութեան մէջ է դնում և՛ դուրսը և՛ ներքը: Այս հողի վրա, մանաւանդ, խիստ սրւած են յարաբերութիւնները Կենտրոնի մէջ շմտնող ազգային-դեմոկրատների և մենչեիկների միջև:

Շատ լարւած ու խիստ թշնամական է յարաբերութիւնը և մենչեիկների ու Ժայրայից ազգայնականների միջև: Այս վերջինները գործում են «Թէթրի Գիորգուի» (Սպիտակ Գէորգ, որ Վրաստանի պետական նշանն է) անունով և մի տեսակ Փաշխտական գունաւորում ունին: Նրանց պարազուլին է ծանօթ «գորավար» Քերեւսելիձէն, ա յն հերոսը, որ 1911ին անցաւ թուրքերի կողմը, կազմեց վրաց կամաւորական մի խումբ և կրոււց Ռուսաստանի դէմ: Պատերազմից յետոյ, Վրաստանի անկախութեան օրերին, Քերեւսելիձէն իր գինակից ընկերներով ազգային հերոսի համբաւ էր վայելում և դուրդուրանքի առարկայ էր մենչեիկ կառավարութեան աչքին: Յայտնի է այն մեծադղորդ զորահանդէսը, որ Քերեւսելիձէի խումբը ունեցաւ Քիֆլիսում սոցիալ-դեմոկրատ կառավարութեան մասնակցութեամբ:

Հիմա նորից սեւ կառու է անցել երկուի միջև: Սպիտակ Գէորգականները բողկացած են մեծ համար աղնական տարբերից և կատարել հակառակորդ են մենչեիկներին: Այս վերջիններն էլ քննուչ զգացմունքներ չեն տածում դէպի Քերեւսելիձէի կուսակիցները:

Վերջերս մի շարք օտար թերթերում հրատարակւեց մի լուր, որ, իբր թէ, Փարիզում գումարել է վրացի հայրենասէրների մի խորհրդաժողով, որին մասնակցելու համար Վրաստանից եկել են 60 զիւզացիներ, իբրև 300 զիւզերի ներկայացուցիչներ: Այդ աթիւ վրաց կառավարութեան մամուլի բիւրօն շտապեց յայտարարել օտար մամուլում, թէ «Վրաստանում գոյութիւն չունի «Սպիտակ Գիորգ» անունով մի կազմակերպութիւն» և, հետևաբար, որևէ խորհրդաժողով կարող չէր գումարել: Միայն շարտասանմանում մի քանի վրացի անհատների հաճելի է եղել, 1926ին, հիմնել Փաշխտական մի թերթ «Թէթրի Գիորգուի» անունով: Այս թերթը բոլորովին անմասնօթ է Վրաստանում և ոչ մի վստահութիւն չի ներշնչում տարապիներին: Այսպիսով, ներքին վէճը պաշտօնապէս դրւում է օտար հասարակութեան առջև: Դրանով կուսակցութիւնները, գուցէ, իրար վնասեն, բայց Վրաստանի դատն, ի հարկէ, ոչնչով չի շահէ:

ՍԻՊՍԱ

Ի Ն Տ Ե Ր Ն Ա Ս Ի Ո Ն Ա Լ

ԱՆՔԻԼԱ: Անգլիական Աշխատանքային Կուսակցության տարեկան համագումարը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 5—6ին: Օրակարգը, բնականաբար, յարմարեցած էր այն կացութեանը որի մէջ դուրսէլ էր Աշխատանքային Կուսակցութիւնը շնորհիւ Մակդոնալդի հակակուսակցական ընթացքի:

Համագումարը առաջին հերթին իր համամտութիւնը յայտնեց Գործադիր Կոմիտէի քաղաքականութեանը՝ դրամական տագնապի և զազային կառավարութեան» հարցերում: Այս դրական վերաբերմունքն արտայայտեց նաև ընտրութիւնների ժամանակ, երբ Համագումարը, Մակդոնալդի ընթացքը խարանելով՝ վերընտրեց, Գործադիր Կոմիտէի մէջ, նախկին բոլոր նախարարներին, որոնք բաժանուել էին Մակդոնալդից: Հինգերորդը, առաջայ պէս պահում է կուսակցութեան ընդհանուր քարտուղարի և պատակալ զանձապահի պաշտօնները:

Մի ընդհանուր բանաձևի մէջ կուսակցութեան ընկերվարական դաւանանքը մի անգամ ևս շեշտեց յետոյ՝ Համագումարը ուրիշ ինքն բանաձևերով դիրք է ճշտում հանդէպ ամենակարգի տնտեսական և քաղաքական հարցերի, որոնք անխուսափելիորէն ընտրական պայքարի նիւթ պիտի դառնան: Դրամական և բանկային քաղաքականութիւն, պատերազմական պարտքեր և հատուցումներ, առևտուր, ճարտարաբանութիւն, երկրագործութիւն, հանքագործութիւն, Հնդկաստանի հարց, գինեթափութեան հարց, գործադրութեան հարց ևն լուսարանած են այդ բանաձևերում աշխատանքային տեսակէտներով:

Համագումարը, հրահանգած աշխատանքային կառավարութեան երկամեայ փորձից՝ զրազուում է և այն հարցով, թէ արդեօք անկախատակաբար Է՞ն՞ կառավարութեան ղեկը ձեռք առնել՝ առանց հաստատուն մեծամասնութիւն ունենալու խորհրդարանում: Շատերն աննպատակաբար միջնադար են համարում, որ կուսակցութիւնը կառավարական պատասխանատուութիւն է ստանձնում առանց կառավարելու հնարաւորութեան: Մակայն, Համագումարը պնդում է, որ անկարելի է կանխատեսել այն բոլոր պարագաները, որոնք կարող են կուսակցութեան համար հարկադրանք ստեղծել նորից կառավարութեան մէջ մտնելու, ուստի և աւելորդ է նկատում որոշել, որ կուսակցութիւնը խորհրդարանում մեծամասնութիւն կազմելուց յետոյ միայն կառավարական պատասխանատուութեան տակ մտնի:

Համագումարի կազմակերպական բանաձևերից ամենակարևորը վերաբերում է խորհրդարանային պատգամաւորների կարգապահութեանը: Մինչև հիմա, խորհրդարանային հաստատի որոշումներին ենթարկելու կամ չենթարկելու խնդիրը վէճի առարկայ էր, և շատ պատգամաւորներ, մանաւանդ, Անկախ Աշխատանքային Կուսակցութեան պատկանողները, յաճախ

հակառակ մեծամասնութեան որոշման էին քեզարկում: Այժմ, մեծապէս ազդած Մակդոնալդի, Մոնտեղնի և Թոմասի վարձուներէց՝ համագումարը 2.117.000 ձայնով ընդգէմ 193.000ի որոշում է, որ խորհրդարանային խմբակցութեան (Փրակցիա) կանոնադրութիւնը և որոշումները պարտադիր են խմբակցութեան բոլոր անդամների համար. հետևաբար, այսուհետև մէկը չի կարող իրեն Աշխատանքային Կուսակցութեան թեկնածու ներկայանալ ընտրութիւնների ժամանակ, եթէ նա չպարտաւորի ենթարկելու խորհրդարանային խմբակցութեան կանոնադրութեանը և որոշումներին:

Այս խիստ ծանրալիւ որոշման անմիջական հետևանքն այն եղաւ, որ Անկախ Աշխատանքային Կուսակցութիւնը որոշեց անկախաբար հանդէս գալ Հոկտ. 27ի ընտրութիւններին: Կուսակցութեան նախագահը՝ Փեննել Բրոքուել՝ շրջաբերական գրութեամբ հաղորդում է իր ընկերներին. — «Աշխատանքային Կուսակցութեան Համագումարը որոշել է մերթէլ պատգամաւորական տեղ տալու Անկախ Աշխատանքային Կուսակցութեան այն անդամներին, որոնք չեն կարող ենթարկել խորհրդարանային խմբակցութեան կանոնադրութեանը: Ա. Ա. Կուսակցութեան թեկնածուները պիտի ներկայանան առանձին և մենք ամենամեծ եռանդով պիտի պայքարենք նոցա ընտրութիւնը յաջողեցնելու համար: Ընտրած թեկնածուները Աշխատանքային Կուսակցութեան ընտրելիները չեն լինելու: Նոքա պիտի գործեն խորհրդարանում անկախաբար՝ յօգուտ աշխատանքային դասակարգի և ընկերվարութեան...»

Բրոքուելի յայտարարութիւնը միմիայն առաջիկայ ընտրութիւններին համար է: Այս խնդրում վերջնական դիրք ճշտելու համար, Անկախ Աշխատանքային Կուսակցութիւնը նոյեմբեր 22ին արտակարգ Համագումար է ունենալու:

ԳԻՐՎԱՆՆԻԱ: Մի քանի շաբաթ առաջ Գերմանական Սոցիալ-Դեմոկրատիան վտարեց իր ծոցից՝ մի խումբ ընկերներ, որոնք, խնամիրութիւն անելով կոմունիստներին հետ՝ անհաւա զդեք էին բռնել կուսակցութեան հիմնական քաղաքականութեան և ղեկավարութեան հանդէպ: Այս առթիւ Կ.Կոմիտէն կուսակցութեան անդամներին ուղղել է մի կոչ, որի մէջ, Կ. մէջ այլոց առած է.

«Մեծ դէպքեր են տեղի ունենում: Դրամատիքական աշխարհը ցնցած է մինչև իր խորքերը: Նրա հիմքերը խախտած են Անգլիայի դրամատիքական տաղանավոր, որի հետևանքները զգացում են ամբողջ աշխարհում: Խորտակում են բուրժուական ըմբռնումները՝ դրամատիքութեան կայունութեան և յաւիտենականութեան մասին:

Պէ՞տք է որ ազգաբնակչութեան հսկայական մասը գոհ բերի դրամատիքութեան խելագար վերձերին,

Թէ՛ պէտք է որ աշխարհը փոխակերպւի յօգուտ աշխատաւոր մարդկութեան:

Գրամատիրական ուժերը մի հատիկ նպատակ են հետաանդուտ բոլոր երկրներում:— օգուտնով անտեսական տաղանակ պատճառած թշւառութիւնն իրրտակել աշխատաւոր դասակարգի ուժը, որպէսզի հասարակութիւնը փոխակերպուի պատմական վայրկեանը չօգտագործուի: Գերմանիայի, Անգլիայի և ամբողջ աշխարհի դրամատէրերի վերջին յոյսն է՝ շեղել աշխատաւոր դասակարգին իր ուղիքից, նրան բաժան քաժան անել և գետին դարնել թշւառութեան օշնու-թեամբ:

Ընկերներ՛, պայքարեցէ՛ք միջազգային դրամատիրութեան դէմ՝ պայքարեցէ՛ք գերմանական դրամատիրութեան դէմ:

Մենք ներկայացնում ենք ժողովրդին մեր անմիջական ընկերավարական նպատակները, որոնք են.

Պետութեան գերիշխանութիւն դրամատիրութեան վրա,

Ժողովրդի գերիշխանութիւն ազգային տնտեսութեան վրա,

Աշխատաւորների, ինչպէս և տնտեսական տաղանակի գոհների հովանաւորութիւն ընդդէմ կարիքի, քաղցի և ցրտի:

Այս պահին, երբ մենք կանգնած ենք պատմական նշանակութիւն ունեցող որոշումների և գործողութիւնների դէմ-յանդիման և, հետևաբար, աւելի՛ քան երբեք կարիք ունինք շարկապումի և երկաթեայ կամքի՛ մի քանի կուրացածներ իրաւունք հաճարեցին առաջ բերել, Սոցիալ-Դեմոկրատիայի ծնողն է, մի աւանձին կազմակերպութիւն՝ որ կարողանար նոցա մասնակի նկատումներին բաւարարութիւն տալ:

Կուսակցութիւնը վարարեց նոցա:

Աշխատաւորները ո՛չ ժամանակ և ո՛չ էլ ցանկութիւն ունին գրառելու հատանական վէճերով: Նա, ով հաշի չաւանելով դրամատիրութեան դէմ աշխատաւորական միացեալ ճակատ կազմելու անհրաժեշտութիւնը՝ յաւակնում է կարծելու, թէ ինքը աւելին գիտէ և աւելի՛ իրաւունք ունի քան ուրիշները — այդպիսին արժանի չէ պայքարելու աշխատաւորների հետ և ոչ էլ նրանց ղեկավարելու:

Ընկերներ՛, թող ամենքիցս հեռու մնան նոքա, որ գլուխ են քաճարացնում մեր միութեան և շարկապման դէմ և կամենում մեզ թուլացնել նեղութեան և վտանգի պահին: Նոքա չեն հասկանում ո՛չ վայրկեանի լըր-լուծութիւնը և ո՛չ էլ կուսակցութեան առաքելութիւնը:

Թո՛ղ հեռու մնան ամենքիցս պատակտիշները: Պատասխանեցէ՛ք նրանց՝ աւելի՛ ևս նւիրելով նորերին կուսակցութեան մէջ անդամագրելու և աշխատաւորական գանձածնները ընկերավարութեան համար համախմբելու գործերին:

Մենք մի միլիոն անդամներ ունինք կուսակցութեան մէջ. — մենք մի միլիոն պրոպագանդիստներ ենք: Միլիոնաւոր նազանբով արձագանգ աւէ՛ք ժողովրդի մէջ մեր կոչին —

Իշխանութիւն տւէ՛ք Սոցիալ-Դեմոկրատիային յաղթահարելու դրամատիրութիւնը:

Առաջ ընթանա՛ք կրկնապատիկ ետանդով: Հակա-

ուսկորդների յայտարարած բոլոր պայքարները և բոլոր փորձերը կասեցնելու մեզ՝ միմիայն թիւաւորում են մեր ետանդը: Մենք տնտեսական դարգերը ընկերավարական դարձնելու խնդիրն ենք մեր առաջ դրել:

Գրամատիրութիւնը նորովք է դարձել մարդկանց համար:

Ընկերավարութիւնը օրհնութիւն պիտի լինի մարդկութեան համար»:

Խ. Հ. ՄԻՈՒԹԻՒՆ: Ինտերնասիոնալի քարտուղարութիւնը հրատարակել է մի դրքոյկ այն դատավարութեան մասին, որ խորհրդային իշխանութիւնը սարքել էր այս տարւայ մարտին ռուս Սոցիալ-Դեմոկրատ Կուսակցութեան նախկին անդամների դէմ: Գրքոյկի նպատակն է ի մի ամփոփել այն բազմաթիւ կեղծիքներն ու ստերը, որ Իրևան ևկան այդ դատավարութեան ժամանակ՝ խորհրդային իշխանութիւնը ծաղր ու ծաւակի առարկայ դարձնելով ամբողջ աշխարհում:

Մասնաւորապէս յայտնի է, որ դատավարութեան միջոցին, «մեղայ ևկողներից» մի քանիսը յամառօրէն պնդում էին, թէ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխներէց մէկը՝ Ռ.Աբրամովիչը, 1928ի յուլիս-օգոստոսին Ռուսաստան է մտել հակախորհրդային դաւադրութիւններն անձամբ ղեկավարելու համար: Գրքոյկի մէջ բազմաթիւ անաւարակիլ վկայութիւններ կան այն մասին, որ այդ օրերին Աբրամովիչն արտասահմանում է եղել և ոչ մի կերպ չէր կարող Ռուսաստանում լինել: Սակայն, ոչ մի վկայութիւն չի կարող այնքան պերճախօս լինել, որքան այն նկարը, որ դարգարում է գրքի երեսը: Նկարը ներկայացնում է 1928ի օգոստոսին Բրիւսելում կայացած Ինտերնասիոնալի Գ. Համագումարը, և նրա վրա մենք տեսնում ենք Աբրամովիչի պատկերը Վանսելիքի, Հինգրուրների, Տուրատտիի, Բրաքի, Ալէրերի և ուրիշների կողքին...

ՁեռնԱՄԱՍԿԱԿԻԱ: Ընկերավարական կուսակցութեան քարտուղարութիւնը հրատարակել է 1931ի առաջին կիսամեան ընդգրկող մի գիկոյց կուսակցութեան վիճակի մասին: Ձեկոյցից երևում է, որ անդամների թիւը, անցնալ վեց ամիսների ընթացքին, ամսական միջին թւով 1830ով աճելով, հիմա անցնում է 180.000ից: Կուսակցութիւնը ունի 4.623 տեղական կազմակերպութիւն: 1920ին, նախքան կոմունիստների անջատումը, երբ ընկերավարական կուսակցութիւնը իր ոյժի դազաթիւնակիտին էր հասած, նրա տեղական կազմակերպութիւնների թիւն էր 4746, այսինքն միմիայն 123ով աւելի ներկայ թւից:

Չնայած որ կոմունիստներն ամէն տեղ իրենց յոյրը դնում են տնտեսական տաղանակի և գործադրութեան վրա, նոցա ուժն ու արդեցութիւնը քանի զնում ընկնում է: Գործարարային խորհուրդների ընտրութեանց ժամանակ, նոքա, վերջին ժամանակներս, մեծ պարտութիւնների մասունւցին: Կորցնում են նոքա հողը և սպառողական ընկերութիւնների մէջ, որոնք մի ժամանակ նոցա գերիշխանութեան տակ էին: Գործակցական Ընկերութիւնների Դաշնակցութիւնը կոմունիստների սաղարաններով հեռացած ընկերավարականները, մի քանի շարաթ առաջ առանձին սպառողական ընկերութիւն էին հիմնել «ԲՈՒՅՈՒՍ» (հաւատարմու-

թիւն) անունով: Ձևայած կոմունիստների հակադե-
ցութիւններին՝ նոքա բացել են արդէն 21 ճիւղեր Պրա-
զայում և արուարձաններում: Աշխատանքի է ձեռնադ-
րւած 16 նոր ճիւղեր ևս բանալու:

ՋՈՒՆԻՑԵՐԻՒՄ: Զուլեցեցողական ընկերւոյ. կուսակցու-
թեան տարեկան համադումարը կայացաւ անցեալ սեպ-
տեմբերին: Համադումարի զբաղման զլխաւոր հարց-
քերն էին դինամիստութիւնը և ներկայ տնտեսական
տագնապը:

Համադումարը գտնում է, որ ժամանակը հասած
է վճռական քայլերի դիմելու ընկերվարական հասարա-
կակարգը կեանքի կոչելու համար և առաջադրում է
իրբն անմիջական գործի ծրագիր հետեւեալ պահանջ-
ները. 1. Կատարել գինթափութեան ենթարկել Զուլե-
ցեան՝ զօրական պէտքերի համար ծախսուող դումար-
ները յատկացնելով ընկերային ապահովագրութիւննե-
րի. 2. Պետական հակակշիռ հաստատել անհատական
մենաշնորհների և Ֆինանսական դրամազլխի վրա: 3.
Առևտուրը հուսաբականութեան մենաշնորհը դարձնել:
4. Լուրջ տուրքի ենթարկել աղքատներական ձեռ-
նարկների շահը. 5. Աշխատանքի տևողութիւնը սահ-
մանափակել շաբաթը 40 ժամով. 6. Գործադրկութեան
դէպէ պետական ապահովագրութիւն հաստատել և հա-
մայնական աշխատանքներ կազմակերպել են:

ՅՈՒՆԱՍՍԱՆ: Յունաստանի Ընկերվարական Կու-
սակցութիւնը, որ կոմունիստների հրահրած պառակա-
տումներից ի վեր կիսաքայքայուած վիճակ ունէր՝ յա-
ջողեց վերջապէս դումարել Սալոնիկում, անցեալ յու-
լիսին, Ընդհանուր ժողով, որ եկաւ վերջ դնելու ող-
բալի կացութեանը: Ժողովին ներկայացուցիչներ էին
ուղարկել Աթէնքի, Լարիսայի, Դրամայի, Կապալայի,
Սէրրէսի, Վերիայի, Կաթերիի և Բիլճիսի կազմակեր-
պութիւնները:

Կուսակցութեան համար կենտրոնատեղի է որոշուած
Սալոնիկը: Կենտրոնական Կոմիտէի համար անդամներ
են ընտրուած ընկ. ընկ. Դ. Եմոյանի, Ժ. Պասսալիդիս,
Ս. Սոմերիտիս, Թ. Իկոնոմու, Պ. Յաթցաս, Գ. Զէյ-
կոս և Ծ. Զանկուտիս: Իսկ Վերահսկիչ Յանձնախմբի
համար ընտրուած են Ն. Եանիոս, Ի. Դելուզանոս և Ս.
Կուսակիչիս:

«Ընկերվարական Դրոշակ» թերթը, որ հրատարակ-
ւում է Սալոնիկում, պիտի դառնայ կուսակցութեան
օրգան:

ԱՍՏՎԻՒ: Հոկտեմբերի 3ին և 4ին տեղի ունեցան
այս երկրում խորհրդարանային ընդհանուր ընտրու-
թիւններ: Բէւէրակողները ընդհանուր թւից — 968 486
— ընկերվարական կուսակցութիւնը շահեց 19 %
կամ 187 356 քէէ՝ դրանելով խորհրդարանի 100 աթոռ-
ներից 21ը:

» ՍՈՑԻԱԼԻԶՄ ԵՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ «

«Նկատեալի երրորդ վճռական տարւայ» ճնա-
ճումները» յարաճուն շարունակում են «սոցիալիզմի
կառուցման» սպարէզում:

«Սոցիալիզմ կառուցող երկրում անդրադէտ չպէտք
է մնալ, — ահա այն կողմը, որ հնչում էր Երևանում,
Հոկո. 1ին, «Համատարած գրադիրութեան և դպրոցա-
կան օրւայ առիթով» կազմակերպուած «Հակայ ցոյցում»:

«Հայաստանի խորհրդայնացման տարեդարձին Երե-
ւանը պիտի դարձնենք համատարած գրադիրութեան
քաղաք», խոստանում է Երևանի կուսկոմիտէի քար-
տուղար Պ. Պետրոսեանը, նոյն «ցոյցի» միջոցին:

Նոյնը, ինչպէս յայտնի է, որոշել է և Հայկենտ-
գործկոմը. մինչև 1932թ. անգրագիտութիւնը Հայաս-
տանում պէտք է բոլորովին վերջանայ: Իսկ մինչ
ա՛յլ...

Հայաստանում «Սեպտ. 7ից դպրոցներում պարագ-
մունքներ սկսել են... Դպրոցական չնքերը 90 տո-
կոսով ենթակայ են վերանորոգման, որոնց մեծ մա-
սը վնասուած է երկրաշարժից: Սակայն, վերանորոգ-
ման աշխատանքները կատարուած են Հազիւ 50 տոկո-
սով... Վերակառուցման կոմիտէին նոր է միայն ըս-
կում դպրոցական 15 նոր չնքերի կառուցումը, որոնք
այս տարի չեն կարող աւարտել»:

Կամ թէ չէ Սիսիանում. առ 27 սեպտ., երբ ար-
դէն գրեթէ մէկ ամիս է, որ ուսումնական տարին

սկսել է, «գառազբեր չկան: Սա արդէն խայտառ-
կութիւն է. ո՛չ մի տետր դեռ չի ստացել. սրա մա-
տակարարումը բացարձակապէս մատնել է ինքնահո-
սի» («Պ. Հ.» 27 սեպտ.):

Վեղու շրջանում, «կան դիւղեր, որ 700-800 տըն-
տեսութիւն ունեն, սակայն, մինչև օրս դպրոցական
չէնք չունեն... Մի շարք պիւղերում նոր դպրոցներ
պէտք է բացէին, բայց դրա համար ինվենտար բոլո-
րովին չկայ... Շրջանը 37-40 ուսուցչի կարիք ունի,
բայց դեռ միայն մի քանի ուսուցչի են նշանակել,
որոնց մի մասն էլ միւս շրջաններից դեռ չի ազատուել»:

Եւ կամ՝ Իլիլիանի շրջանում. «Մի շարք նշաններ
ցոյց են տալիս, որ կազմուած ծրագիրը լուրջ վնասէ
տալ է կանգնած: Առաջին խոչընդոտը դպրոցական
չինարարութեան խիստ անմիթիթարական վիճակն է:
Կառուցել նախատեսուած հինգ դպրոցական չնքից (ո-
րից չորսը թրքական հիւղերում) և ոչ մէկի հիմք
անգամ չի փորւած... Դպրոցական չինարարութիւնը
մինչև վերջերս մատնուած է եղել բացայայտ օպորտու-
նիստական ինքնահոսի: Դպրոցական տարին սկսել է,
բայց դպրոցներից ոչ մէկը դեռ չի վերանորոգուած»:

«Օպորտունիստական ինքնահոս» և Բասարգէշա-
րում. Առ 1 հոկտեմբերի. «Բասարգէշարի շրջանում
դպրոցական գործն անմիթիթար դրութեան մէջ է...
Լուսարժնի և կուս. շրջկոմի ազիւրաժնի բազմիցս դի-

մուսնեքից յետոյ, որոշուել է Նոր-Բայազետի 8 ամսւայ կորսութից (Եօթնամեակ աւարտած) Բասաղեշար ուղարկել 22 ուսուցիչ, որոնցից առ այժմ եկել են միայն 13 հոգի, մնացածներին Ե. Բայազետի լուսարժինը նշանակել է իր շրջանում, իսկ Բասաղեշարին Հարկաւոր է 35 ուսուցիչ: Երջանին Հարկաւոր է նաև 37 թուրք և 2 քերթ ուսուցիչ, սակայն, Լուսժողովրամար կազմերի սեկտոր դեռ ոչ մի ուսուցիչ չի ուղարկել»։ (ՁՆ. չ. 1 հոկտ.) :

Այսպէս է դրուծելը Հայաստանի և ուրիշ կողմերում, ուսումնական տարւայ սկսելուց մի ամիս յետոյ: «Պորճրդ. Հայաստան»ը պաշտօնապէս Հաստատում է, որ թէև Քորուր շրջաններում դպրոցական պարագմունքներ սկսուել են, բայց դեռ չեն կանոնաւորուել, իսկ որոշ գիւղերում (դրանց թիւը փոքր է) պարագմունքները դեռ բոլորովին չեն սկսուել: Դրա գըլխաւոր պատճառներն են. ա) դպրոցական չնչքերի անպատրաստ լինելը, բ) դասաբարձրի ու գրեկական անհրաժէշտ պիտոյքների (ձեռնարկներ, տետրակ, մատիտ և այլն) միանգամայն աննորմալ մատակարարումը» (1 հոկտեմբեր):

Բայց և այնպէս է սոցիալիզմ կառուցող երկրում անդրադէտ չպէտք է մնայ: Մինչև 1932թ. անգրագիտութիւնը Հայաստանում «լուծարքի պիտի ենթարկուի»...

«Կուլտուրական Փրոնտից» անցնէք զիմարարական պրոպրիմներին» և, ի հարկէ, առաջին հերթին Պետշինի այլևս առակի կարգ անցած «խալտուրականութիւններին»:

«Հայպետշինի առաջին շրջանը, գրում է սկստ. Գին «Պորճրդ. Հայաստան», 31թ. առաջին կիսամեակում խալտուրակ կերպով թերակատարքի իր պլանները, 2 միլիոն 648 հազար բուրջու շինարարութեան դիմաց կատարելով 926 հազար 200 ր., որը կազմում է ամբողջ պլանի 37 տոկոսը: Սակայն, աւելի քան խալտուրակ թերակատարում ունեցաւ 3րդ եւամսեակի առաջին ամսին՝ յուլիսին, տարով 86 տոկոսի ճեղքւածք»:

Չպէտք է մոռանալ, որ ամառը շինարարութեան ամենաեռուն շրջանն է, և ամառւայ ամիսներին են պատահում այս «խալտուրակութիւնները»:

«Պ. Հայաստան»ի նոյն համարը առաջ է բերում «բայլչեկիկան տեմպերը» ցոյց տալով սոցիալիսի փատեր. «Երրորդ եւամսեակից 2 ամիս անցել է, բայց ստացւած է անտառանիւթի պահանջի միայն 9 տոկոս, կրի և գաջի պահանջի 26 տոկոսը, երկաթեղէնի 7-8 տոկոսը, իսկ թիթիկ բոլորովին չի ստացուել: Տեղական քարը, որը գեֆիցիտային շինանիւթ չի համարում, ժամանակին չի հասցւում չէնքերին: Օդոստ. 29ին №78 չնչքի 25 քարտաշ բանուրները քար չլինելու պատճառով մէկ ամբողջ օր պարագուրդ են տւել: Յաճախ պատահում է, որ բանուրը պարագուրդ է տալիս մեկ կամ օրակ յիջնելու պատճառով: Խայտնում եղած մեքենաները լրիւ չեն բեռնաւարում և օրերով կանգնած են միում: Ներկայումս առաջին շրջանն ունի 450 բանուր միայն, այն ինչ նրան Հարկաւոր է 1400 բանուր»:

Միայն երևանում չէ, որ շինարարութիւնը օյսպէս «բոլչեկիզէն կազմակերպւած» է: Պատկերը նոյն է և Լենինականում, և՛ պրիմաւանքերում և Հայաստանի ուրիշ շրջաններում: Այսպէս, Սիսիանից հեռագրում են. «Գործկոմի նախագահութեան լայն նիստը քննեց ամենատուժած ենթաշրջանի՝ Ախլաթեանի շինարարութեան խնդիրը: Պարզեց, որ խալտուրակ դրուծեան մէջ է գիւղերի կառուցումը. պլանը կատարել են միայն 3 տոկոսով»: Ուրիշ խօսքով, ոչինչ չի չինուել: Մի՛ մոռացէք, որ սա երկրաշարժից վնասուած շրջանն է:

Նոյնն է վիճակը և Սիսիանի միւս գիւղերում. անտառանիւթ չկայ, փորագրութեան միջոց չկայ, բանուր չկայ. բոլոր հեռագրներին և աղաչանքներին կենտրոնը պատասխանում է լուռութեամբ: Կատարեալ չսոցմըցում»...

Կենտրոնի գործերը բնորոշելու տեսակէտից հետաքրքրական է ծանօթանալ Դաւալուի կրի արդիւնաբերութեան: Այդտեղ «կրի արտադրութեան գործով են զբաղւած և՛ Հայպետշինը, և՛ Լենշինարդը, և՛ Երկոմարեստը: Երկոմարեստը, օրինակ, որ շատ ժամանակ չազիւ 15 բանուր է հունկում, մշտական պահում է 6 ծառայող, Հայպետշինը, որ ունի 25 բանուր, նոյնպէս ունի իր յատուկ շտապը, Լենշինարդը, որի բանուրների թիւը 70 հոգուց կրթե չի անցել, մշտական պահում է 12-15 ծառայող» (ՁՆ. չ. 9 սեպտ.): Ուրիշ խօսքով, շուրջ Հարկու բանուրի համար պահւում է շուրջ 25 գրասենեակային պաշտօնեայ. 4 բանուրային մէկ պաշտօնեայ: Եւ այդ էլ բաւական չէ. այդ հիմարիկները, որպէսզի կարողանան գործ անել, գները աւելացնելով՝ իրար ձեռքից խլելում են բանուրական ուժեր, որով, և՛ լամադձօրէն նկատում է Կենտրոնի մի պաշտօնաթերթը, «բանուրի հոսունութիւն է ստեղծում»...

Միայն մարդկային քնակաբանների կառուցումը չէ, որ «ինքնահոսի է մատնւած». անասուններն էլ աւելի բարիտաւոր չեն: Ինչպէ՞ս են ընթանում գոմերի շինարարութեան աշխատանքները խորհրդային տնտեսութիւններում: «Այստեղ, վկայում է ՁՆ. Հայաստան»-ը հօկտ. 4ին, մենք ուղղակի պէտք է յայտարարենք, որ այդ աշխատանքները վտանգի տակ են դրուած: Հողժողովրամարի տեսակներով առ 15 սեպտ. խորհրտեստեպութիւնների կառուցողական աշխատանքները կատարել են միայն 15 տոկոսով: Անդրգիւղտնոշինը և Հայիւղտնոշինը, որոնք հանդիսանում են գիւղատնտեսական կառուցումների հիմնական կազմակերպութիւններ, հանգէս բերեցին կատարել անճարակութիւն և օպորտունիստական դանդաղկոտութիւն այս քնագաւառում»:

Աւելի փայլուն չեն գործերը և արդիւնաբերութեան քնագաւառում. Երբակի հիւսածեղէնի գործարանում շարունակւում են «կրիայի տեմպերը», որոնք ստեղծել են «անհանդուրժելի դրուծիւն»։ «Տեքստիլը, գրում է ՁՆ. Հայաստան»ը սեպտ. 12ի թմբաբարկանում, հնդամեակի վճուական տարւայ կիսամեակը փակեց պլանի դրալի թերակատարումով: Ետևով երկրորդ կիսամեակի առաջին եւամսեակին ևս վերջանում է, մինչդեռ ճեղքւածքը ոչ միայն չի վերացուել Տեքստիլում, այլ և խալտուրակ շափերի է հասել: Տեքստիլ-

լի առանձին զործարանները պլանի կատարման օրական տեղիկանքները վերջերս չտեսնած ցածր ցուցանիշներ են պարունակում: Անգամ արձանագրած է օրական պլանի միայն 2,8 կամ 8,4 տոկոսով կատարման փաստ, իսկ միջին կատարումը տարբերվում է 30-60 տոկոսի շրջանակում: Առիթի ամօքալի ցուցանիշներ տեխնիկի համար չի կարելի եմքադրել»:

«Ամօթալի» է կացութիւնը և Երևանի գործարաններում, որտեղ «վճարահատարին» նոյնպէս լինէ է «խալտառակութիւններով»: Արեւանի կուսկոմիտէի քարտուղար Պետրոսեանը հաստատում է, որ «ընդհանուր առմամբ պլանների կատարման գրութիւնը Երևանի գործարաններում չափազանց անմխիթարական է... Դրութիւնը վատ է նաև շինարարութեան մէջ» (ՁՍ. չ. » 27 սեպտ.):

Հայկոմկուսի Երևանի քաղաքային կոմիտէին, Հաստատանի Արշեստակեանի Միութիւնների նորհուրդը և Երևանի Քաղաքային նորհուրդը հոկտ. 1ին բաց թողած մի կողմ աջակց են բնորոշում Երևանի գործարանների բացերը: «Երևանի հարւածայիններ, եղած շօշափելի յաջողութիւնների կողքին վճարական տարւայ երրորդ եռամսակը մենք փակում ենք ոչ բաւարար ցուցանիշներով: Միջանկիակամ, կարբիտի, կոնսերւիկ, կաշի և այլ գործարանները քերակատարել են իրենց պլանները: Համարաւ բոլոր գործարաններում ցածր է աշխատանքի որակը, լրիւ չէ կարգաւորւած գործարանները բանուժով ապահովելու խնդիրը, դեմակարգութիւնը դեռ չէ յաղթահարւած: Բանուրութիւնը դեռ պիտոյին չի ընդգրկւած սոցմբջման և հարանձնութեան մէջ, պլանները ոչ բոլոր գործարաններում են հասցւում զազգահաններին, ցեխերին և բրիգադներին: Թոյլ է ընթանում տիւնիկային տիրապետելու գործնական աշխատանքը: Շատ գործարաններ դեռ չեն անցիլ տնտեսական հաշարիկի, զբեթէ ոչ մի տեղ չի կիրաւում աշխատանքների պրոգրեսիւ գործաւարձային սիստեմը»: (ՁՍ. չ. » 1 հոկտ.):

Եւ բոլշեիկեան մամուլը արձանագրում է թերակատարման բազմաթիւ փաստեր:

Այսպէս, Երևանի փայտաշակման գործարանները փայտի ապսպրանք են տալիս՝ 44 վազոն Ատորախանից և 10 վազոն Լենրորանից: Միսամանակ Չանգեզուրի վերաշինութեան կոմիտէն գործարանին պիտի տար 70 վազոն փայտանիւթ: Անցնում են չարաթիւեր ու ամիսներ և ստացւում է միայն 27 վազոն, այն էլ ոչ թէ «որը սղոցելու և տախտիկ դարձնելու համար մեծ ժամանակ և բանուրական ոյթ է հարկաւոր»:

Իր յանձնառութիւնը չի կատարում և Լոռու ատաղձի գործարանը՝ խոստանում է սալ նոր գերաններ, բայց ուղարկւում է «մէկուկէս տարւայ հին գերաններ, որոնք միանգամայն անպէտք են վիճնական կահ կարտիք պարպատելու համար: Այլ գերանները երկու և կէս ամիս էլ մնում են գործարանի բակում՝ արեւի և անձրեկ տակ, և դիրեկցիան վերջն ստիպւած է լինում դրանք գործածել այլ կարիքների համար»: Եւ հետևանքը լինում է՝ «խալտառակ թերազնահատութիւն». «գործարանի հիմնական մասերից մէկը՝ կո-

րացման բաժինը՝ 15 օրով ամբողջովին փակւում է» (ՁՍ. չ. » 1 հոկտ.):

Եւ գարնանային չէ, որ Հայկենտգործկոմի պաշտօնաթերթը, ի տես այս բոլոր խալտառակութիւնների, յուզւում, կատաղում ու սպստնում է, պահանջում է «պատուով աւարտել վճարական տարին»: Այլևս հանդուրժելի չէ մեր կուսակցական կազմակերպութիւններ և ոչ մի օրակի դանդաղաշարժութիւնը: Այլևս հանդուրժելի չէ մեր տնտեսութեան և ոչ մի օրպանի կառչելն աշխատանքի հին, արխայիկ ձևերին: Ժամանակ է, որ մեր պրոֆմիութեանական կազմակերպութիւնները գործնականորէն կափահարեն իրենց և, ինչպէս վայել է սոցիալիզմ կառուցողներին, կիպ մօտենան արտաբերութեան կոնկրետ խնդիրներին» (ՁՍ. չ. » 1 հոկտ.):

Բայց ջուրն իր ճամբով է գնում. խալտառակութիւնները վերջը չեն գտնում:

«Պայտառակութիւններ» և՛ տնայագործութեան արհեստագործութեան մէջ, ուր «ոչ դեֆիցիտային հումքով աշխատող ճիւղեր խոշոր շափով թերակատարել են իրենց պլանը (կատարել են 61,8 տոկոսով): Պլանից առանձնապէս մեծ չափով յետ են մնում նաև տնայագործական արդիւնաբերութեան կարեւորագոյն ճիւղերը, օրինակ՝ շինանիւթերի արտաբերութիւնն իր պլանը կատարել է 46 տոկոսով, գորգագործութիւնը՝ 65,6 տոկոսով, փայտամշակման արդիւնաբերութիւնը՝ 35,5 տոկոսով: Այսպիսով, Հայտատանի արհեստագործական կօօպերացիան չի կարողացել հիմնականում կատարել այն խնդիրները, որոնք առաջադրել է նրան կուսակցութիւնն ընթացիկ տարւայ համար... 1931 թւականի պլանի կատարումը ենթակայ է վիժման վրտանգի» (ՁՍ. չ. » 30 սեպտ.):

«Պայտառակութիւններ» և «հասարակական սնունդի» մատակարարման գործում, և ի՞նչ խալտառակութիւններ: «Հասարակական սննդի գործը Զարաթիխանի շրջանում գտնւում է անմխիթար վիճակում... Բանկօօպի № 2 ճաշարանի դրութիւնը միանգամայն անհանդուրժելի է, թէև քաղաքում այդ ճաշարանը համարւում է «ամենամաքուր»: Ճաշարանի խոհանոցը շատ փոքր է և անմաքուր: Շէնքը վաղուց է ինչ կարեւոր է զգում նորգաման, պատերը սարսափելի կեղտոտ են, պէտք է կրով ծեփել: Բանջարեղէնը մաքրում են ուղղակի յատակի վրա: Ամենուրեք նկատւում է թափափաւորութիւն, անկարգութիւն, կեղտ, փոշի. 18 աշխատակցի համար չկայ բուրարք քանկութեանը գոգնոց. եղածներն էլ պատուած են, կեղտոտ... Ճաշարանի շէնքի ներքին յարկում գտնւում է կաթնամթերքների պահեստը, ուր բերանները բաց պահւում են պանրով լիքը տակաւներ: Ճաշարանի շէնքի յատակը լւաւանջում է անհարկ օր կեղտոտ ջուրը հոսում և լցւում է պանրի տակակների մէջ: Ճաշարանի միշտ էլ վնաս է ունենում»:

Սա դեռ «ամենամաքուր» ճաշարանն է, կարելի է երևակայել միւսները ինչ են: Միւսներից «Փակ-բաշխի» № 2 ճաշարանի բակը գտնւում է սոսկալի կեղտի մէջ, խոհանոցը՝ նոյնպէս: Հայր պահւում է ստանջ ծածկոցի, ճանճերի ստալ, խոհանոցի կաթսաները

կլայեկեամ շեն... Միւր նոյնպէս բաց է պահուում... Ծաշարանում բաժակներ չկան, լաշարանը կեղտոտ է, առանց սապոնի, սրբէշները նոյնպէս կեղտոտ են և կարծես թէ կախած են ցոյցի համար... Մինչդեռ Դաբաքիլիսան մի վազոն սապոն է ստացել, սակայն, զեպագեկոյները դրանում են ճաշարանին սապոն բաց թողնելը»։ («Պ. Հ.» 30 սեպտ.)։

«Ք՛մըշինում ևս սննդի գործը անմխիթար վիճակում է։ Ծաշարանը... շատ անմաքուր վիճակում է։ Սեղանները մեծ մասամբ առանց ծածկոցի են. բանւորները շուրք խմում են ուղղակի դոյլից. ծառայողների գոգնոցները կեղտոտ են։ Լաշարան չկայ. բանւորները ճաշում են կեղտոտ ձեւերով։ Վարչութեան կարգադրութեամբ պատուաքաղ և դանակ չեն տալիս բանւորներին, մինչդեռ ճաշարանում պահած կայ 95 դանակ, 287 պատուաքաղ, 372 ճաշի գդալ և մի քանի տասնեակ թէյի գդալը...»

Նմոյշներ նոյն ճաշարանի տնտեսավարութիւնից. «Վերջին ժամանակներու կազմած արձանագրութիւնից պարզուած է, որ աշխատակիցների անկաշք վերաբերմունքի շնորհիւ փչացել է 960 կիլո ձուկ, 270 կիլո սելեռոկա (աղի ձուկ), 360 կիլո պանիր, 400 կիլո գետնախմբիկ և մօտ 20,000 ձուկ»։

«Սորճրդ. Հայաստան»ը, որ անյոյզ պաղարհնութեամբ արձանագրուած է խորհրդային տնտեսութեան մէջ սովորական զարձած այս երևոյթները, աւելացնում է նոյնպիսի պաղարհնութեամբ.

«Համարեա նոյն դրութիւնն է տիրում և՛ Զարագուստ և՛ Գրանիտի գործարանում»։

Ահա և փաստեր. «Զորացիքի 2րդ շրջանում ժող. սննդի գործը չափազանց անմխիթար է։ Հացի փուռը նմանում է գոմի, փուռում ապրում են ընտանիքներ. ամբողջ չէնքը սաղաած է ցեխով։ Փուռում կեղտոց սեացած մի գոգնոց կայ միայն»։

«Առաջին շրջանի ճաշարանում ամենուրեք կեղտ է, յատկապէս մի մաքրում, սեղանները չափազանց կեղտոտ են, խոհարարը որակեալ չէ. (այսինքն՝ խոհարար չէ. Իր.)»։

«Գրանիտի գործարանի ճաշարանը չափազանց անմաքուր է։ Պնակները լանալու համար կայ միայն մի աման։ Մթերքները մաքրուած են յատակի վրա. լաշարան չկայ։ Ծաշարանը երբեք մածոն, պանիր, բրինձ, ձու, վերմիսել և կաթ չի ստացել... Հացը բերում է այն սայլակներով, որոնցով դուրս է տարւում աղբը»։ («Պ. Հ.» 30 սեպտ.)։

Եւ այսպէս ամէն կողմ։ Ահա Լենինականի Մնունդ-

կօստի № 1 ճաշարանը, ուր «յաճախ ճաշերը բրակ են արւում ու թափում... Սեպտ. 10ի երկերթան կոնսերվից պատրաստած ընթերցը, աւելորդ լինելու պատճառով, հետեւեալ օրը թափեցին։ Սեպտ. 10ին խոհանոցը ստանում է 27 կիլո ոչխարի և տաւարի փոք՝ խաչ պատրաստելու համար, բայց... թողնում է հետեւեալ օրւայ համար և փշանում է։ «Սոհարարը, այնուամենայնիւ, վրան իւղ ու հաւկիթ լիցնելով՝ տապակում ու հրամցնում է բանւորներին, «բայց նրա հաշիւները սխալ են դուրս դալիս. ճաշը բաժանելիս բացում է խոհարարի կեղծիքը, կազմուած է արձանագրութիւն, և կիւած ճաշը դէն է թափում»։

Սեպտ. 13ին «պարզուած է, որ ճաշից նաւթի հոտ է փշում... Այս առիթով կազմուած է արձանագրութիւն և դէն թափում 150 բովին ճաշը»։

Ահա Լամբալուի ծխախոտի խորհանտեսութիւնը, ուր «500 հոգուց բաղկացած բանւորութիւնն ամսական ստանւմ է միայն 70 կիլո միս», «մինչև այժմ ոչ մի արկղ մալարոն կամ ձուար չի ստացած», և «բանւորները երբեմն դէտարանում են նման պայմաններում աշխատել»։ («Պ. Հ.» 24 սեպտ.)։

Ահա՛ ինչ պայմաններում է ապրում և սնւում «սոցիալիզմ կառուցող» բանւորութիւնը «այնարհիս առաջին բանւորական պետութեան» մէջ... Անսպառ Հաստութիւններ վառնում ու փչացւում են, իսկ մարդիկ ուտելու սննդը իսկ չեն ստանում բաւարար չափով։ «Սոցիալիզմի կառուցման» այս ջանաղ աշխատանքի տեսութիւնը փակենք նոյնպիսի չքնաղ մի նմոյշով։ Վերջերս Վրաստանից Երևան է հասնում մեծ քանակութեամբ ձմերուկ։ Ապօպրոզ մարմինները՝ Հայասն ու Կոնսերվչինը, դանապան առարկութիւններով, հրատարում են ընդունել, և խեղճ ձմերուկը մի տեղից միւս տեղ երկար ճամբորդելուց յետոյ, վերջապէս, ընկնում է մասամբ մի խոնար պահեստ, մասամբ էլ Քաղտորհրդի պտղաբանարարութեան բաժանմունքի պահեստը, ընկնում ու մոռացութեան է տրւում։ Եւ հետեւանքը՝ «Մի քանի օրից յետոյ ձմերուկը փշանում է, և ստիպւած են լինում շինարարութեան այս եռուն շըրջանում սաշները դրադեցնել հոտած ձմերուկը քաղաքից դուրս թափելու համար։ Առաջին պահեստից թափում են 60 վազոն, իսկ երկրորդից՝ 10 ֆուրզոն»։ («Պ. Հ.» 24 սեպտ.)։ Մէկ էլ Ե՛րբ Երևանի ձմերուկի երես պիտի տեսնէ։

Սրան ստում են՝ «սոցիալիզմի կառուցում»։ Այսպէս է «կառուցում սոցիալիզմը» Հայոց աշխարհում...

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ

«Դաշակացութեան Օրը», հաստատուած՝ 10րդ Ընդհ. Ժողովին կողմէ (1925), արդէն բարեբրու մէջ մտած է իբրև բնական, անտղիկ երևոյթ։ Ան կը տօնուի ամէն տարի Հոկտեմբերին — երբեմն երկարելով մինչև Նոյեմբեր — բոլոր այն գաղութներուն մէջ ուր հայկա-

կան համարնք մը ծաւրած է։ Եւ կը տօնուի ոչ թէ նեղ՝ կուսակցական շրջանակի մէջ, այլ հրապարակաւ, ծաւալուն բաղմութեանց առջև, համաձայն իւրաքանչիւր երկրի և քաղաքի պայմաններուն։ 1925էն ի վեր, չնդաւ տարի մը որ այս կամ այն

չըջանը զրկէր Դաշնակցութեան Օրէն, կամ նախորդէն պակաս ոգևորութեամբ տօնէր զայն: Ընդհակառակն, ամենէն խոնարհ գաղութի մէջ ալ, աչքի կը պարնէ՛ թէ բողոքութեան և թէ խնդրամատուցութեան յաւելումը, մէկ տարիէն միւրը: Եւ պաշտօնական համարւած բանախօսներու կարգին, հետզհետէ ապաւելց կու գան նորեր, տեղական ուժեր, մանրերով Դաշնակցութեան պողպարները, վերլուծելով անոր անցեալ և ներկայ գործունէութիւնը:

Այս տարի ալ, Դաշնակցութեան Օրը տօնեցաւ սովորական հանդիսութիւններով: Տեղ տեղ տնտեսական տաղնապը կաշկանդած էր ձևոք ու ուռք: Եւ սակայն մեր ընկերները և Մարմինները չթեացան իրենց պարտականութեան մէջ, և տօնը տօնեցաւ ամէն տեղ ուր որ կը տօնէր սկիզբէն ի վեր, օսակառքիւ բացառութիւններով:

Այս տարի, Եւրոպայի մէջ, ազնանշանը տաւ Մարտիւն, կանուխէն ապահոված ըլլալով ընդարձակ սրահ մը, և հետզհետէ տօնցիցի Փարիզ, Լիոն, Տէսին, Վիէն, Վալանս, Սէնթ Էթիէն, Սէն Շամոն, Փոն տը Շէրբուի, Նիս ևն: Փարիզի արուարձաններն ալ, իրենց կարգին, ինչպէս զանազան պիւղաքաղաքներ (Կարտան՝ Մարտչլի մօտ):

Աւերոզ պիտի ըլլար մէկ-մէկ յիշել միւս շրջանները:

Կը բուէ ըսել, որ տօնակատարութիւնները կը սկսին Եւրոպայէն և կերկարեն մինչև Հարաւային Ամերիկա, չորս ցամաքներու վրա, բացի Հայաստան աշխարհէն:

Այս տարի ունեցանք դժբախտ բացառութիւն մը, Յունաստանը, ուր վերջին իրադարձութիւնները ինքնամոտիվով պարտադրած են մեր կաղմակերպութեան, առանց երկ մը պակասելու անոր կողմէն: Փոխանցման շրջանի տաղնապ մը, որ երկար չի կրնար տեսել:

Այս տարի ալ, մեր մամուլը անելի կամ պակաս բացառիկ հրատարակութիւններ ունեցաւ Դաշնակցութեան Օրան առթիւ: Ուր որ չունինք մամուլ, պակասը կը լրացնեն շրջաբերականներ և միօրեայ թերթեր: Այսպէս, Ռուսմանիոյ շրջանը, ահա հինգ տարիէ ի վեր, տարին մէկ անգամ կը հրատարակէ յատուկ թերթ մը, «Դաշնակցութեան Օրը», ամբողջովին ներկած մեծ տօնին:

* * *

Դաշնակցութեան Օրը ծառայելով իրրե տեսակ մը վերաբազ կ'ենթանճանալան, ոգևորութեան առիթ, միևնոյն ատեն կ'օգնէ արծարծելու մեր գործնական քաղաքականութեան խնդիրները: Ասոր համար է որ, մեր Մարմինները միշտ ալ կունենան յատուկ նշանախօսքեր, թէ լրագրական և թէ բեմական քարոզչութեան համար: Ի՞նչ պիտի արժէք սաւառնաթէ ճարտասանութիւնը, առանց հիմնական, թանձրացեալ տեսակէաներու:

Այս տարի, իրրե նշանախօսք, ունէինք —

1. Ներգաղթի խնդիրը: Վեց կամ տասը հազար գաղթականներու փոխադրութեան որոշումը լրաւգոյն աւերին էր կրկին և կրկին արծարծելու այս հարցը, որու

մասին կուսակցութիւնը Երկու տեսակէտ չունի և որ ամփոփած է հրկու խօսքի մէջ — բացէք դուռները»:

2. Քաղաքական պահանջներ: — Ընդարձակում ներքին և արտաքին ուսմաններու, իրականացնելու համար միացեալ Հայաստանը: Թրքահայաստանի դատ:

3. Ազգայնապետում: — Ամէն ճիշ թափել հայրենիքէ դրձած բողոքութեան պողպարներ դիմագործ պահպանելու, հայրենա մշակոյթը պարբարանելու, նոր սերունդին ինքնապաշտպանութիւնը պահպանելու համար: Եւ այս առաջադրութեամբ՝ համերաշխութիւն, գործակցութիւն բոլոր այն տարրերուն և քաղաքական կաղմակերպութեանց հետ որ կրմբունեն կաղութեան պահանջները:

4. Մասնաւոր ուշադրութիւն նոր սերունդին, և առանձնապէս որբերուն, որոնք յանձնած են չորս հովիտներ և կը փրկին միայն հաւաքարար կապելով այս կամ այն կաղմակերպութեան:

* * *

Ամէն տօնակատարութեան, կունենանք «միտութիւններ» ալ: Այս երևոյթը — նորագիրներու մուտքը Դաշնակցութեան մէջ — կապ չունի Դաշնակցութեան Օրան հետ: Տարւան ո՛ր և է եղանակին, և Մակեդոնիայէն մինչև Ռուսկուայ, միշտ ալ կունենանք նորագիրներ: Բայց Դաշնակցութեան Օրը մասնաւոր փայլ էր կուտայ «միտութեան», և շատեր ամէն ձևակերպութիւն լրացնելով հանդերձ, այդ օրան կը սպասեն, կատարելու համար իրենց հանդիսաւոր ուխտը:

1930ին, երբ լրացաւ կուսակցութեան քառասնամեակը, 20—40—50 և 100նոց խումբերով էր որ կատարեցան երդումները: Այս տարի ալ, շարքերու խտացման շրջան էր, և հակառակ տնտեսական դժնդակ պայմաններուն, որոնք երկիրէ երկիր շատ ալ մեծ տարբերութիւն չունին իրենց խտութեամբ և ծանրութեամբ, գարձեալ ունեցանք զօհացուցիչ արձանագրութիւններ:

Բաղմաթիւ են մեր երդումի արարողութիւնները: Եւ սրտաուռ, ինչպէս բոլոր ուխտերը: Ամէն բանախօսի կամ նախագահի տրւած չէ կատարել այդ արարողութիւնը: Տեսակ մը շնորհ և աւանդ՝ այն ալ, լեռներէն և զիւրերէն մինչև միջնադարին պողոտաները փոխադրւած: Եւ այնտեղ ուր դուն պիտի անճրկէիք, ալեհեր հայտուկ մը կամ համեստ գինետր մը արտասուել կուտայ քեզ: Այնքան յուզիչ է ու վարակիչ՝ արարողութիւնը, որ յաճախ օտարոտի տարրեր անգամ չեն կրնար գապել իրեն յոյժումը:

Մեր ներքին կանոնադիրներուն մէջ ունինք երդումի բանաձևեր: Բայց այսօր, մեր նորագիրները կուզեն ինքնաբոխ, ինքնաբեր արտայայտութիւններով ալ ամբարշտել իրենց յանձնառութիւնը:

Ահաւասիկ հատուած մը այն «Ողջոյն»էն զոր գրի առեր էին ինը նորագիրներ, Նոյմբեր 7ին, Լիժնի մէջ, իրենց երդումի արարողութեան առթիւ.

— «Ողջոյն քեզ Դաշնակցութիւն.

«... Մենք, տասնեակ մը երիտասարդներ, կուզանք մաս կաղմել ըստ մեծ նահապետական ընտանիքի և կուխանք ըլլալ հաւատարիմ օրդգիր և՛ թշ-

ատուութեանը մէջ ե' ուրախութեանը ստին, երկունքիդ մէջ թէ զսուքիդ կատարին:

«Հնաւոր Սիպրիի բանտրուն մէջ թէ բռնութեան բոլոր հորիզոններուն տակ ազրոզներուն, արևի, լոյսի և ազատութեան կարոտ մեր հերոս ընկերներուն աղ- ջոյն: Ողջո՞յն աշխարհի չորս ծագերուն մէջ ապրող մեր բոլոր զագափարի ընկերներուն»:

Կը թւի թէ մեր կազմակերպութիւնը այլ ևս չի կրնար Երկրորդական գծի վրա նստել, պատահականութեան ձգել տնտեսական ինքնուպաշտպանութեան ին- ղիբը, նոյն իսկ իր շարքերուն համար:

Վերջին տասնամեակի վերելվայրումներէն յետոյ, հասեր ենք դարձակէտի մը, որուն ելքը դժւար է նա- խատեսել: (Պօսքը զագութներու մասին է): Համաշ- խարհային տագնապը այլ ևս դարձած է տեղական չա- րիք: Բրիտանական նոր քաղաքականութիւնը արդէն զուտները լայն բացած է մաքսային պատերազմին և կատաղի մրցակցութեան համար: Ամէն երկրի մէջ ալ, բնիկը ծուռ կը նայի Լեկոնի, ի ինչի կ'ընդէն հայի: Այն եր- կիրները ուր չօչափելի թիւ կը կազմեն օտար աշխա- տարները (Քրանս և Մ. Նահանգներ), հետզհետէ կը շեշտեն խորացնութիւնը: Իսկ երկիրներ կան ուր տեղացիէն յետոյ Հայերն են որ աչքի կը դարնեն իրրև բանուր (Պուլկարիա, Յունաստան, Սուրիա, Միջա-

զիտք): Չունենալով ազգային պիտութիւն, ոչ ալ մաս- նաւոր պայմանադրութիւն, ատջին հարաձայնը կիջ- նեն մեր պիտուն, ինչպէս կը տեսնենք ամէն օր:

Վերջին Ընդհ. Ժողովը, առանց այսքան սև տես- նելու կացութիւնը, կը հրահանգէր — կազմել արհես- տակցական միութիւններ, զործակցական ընկերու- թիւններ, աշխատանքի դրասնեակներ, բժշկական օգ- նութեան կազմակերպութիւն և փոխադարձ վարկի կամ օգնութեան սնտուկներ:

Արդ, մինչև հիմա, կուսակցականօրէն ոչինչ կ'ըս- է այս ուղղութեամբ: Տարւան սկիզբը, Եւրոպայի Կեդ- ընական կոմիտէն ձեռնարկեց հիմնադրած մը կազմի- լու, նեղ օրւան համար: Ամերիկայի ՅՅրդ Պատգամ. Ժողովն ալ զբաղած է նոյն հարցով:

Գործադրութեան տագնապը արդէն հասած է ան- տանելի շափերու: Ամերիկայի մէջ, իսկ արագօրէն կը պրկէ, կը նեղէ Եգիպտոսն ու Քրանսան, փողոց նե- տելով տասնեակ հազարաւոր աշխատարներ: Պալ- քանները վաղուց կը գալարին գործադրութեան և թշուառութեան ճիրաններուն մէջ, և 5—6000 գաղթա- կաններու փոխադրութիւնը դէպի Հայաստան՝ անշուշտ որոշ թեթևացում յառաջ պիտի բերէ:

Նախատեսելով ամէլ ևս օրեր, պիտի թելադրենք մեր Մարմիններուն՝ լրջօրէն քննութեան ենթարկել Ընդհ. Ժողովին որոշումը, և անոր հիման վրա փորձել իրենց կարելին, համաձայն տեղական պայմաններուն:

Մ Ե Ր Զ Ո Հ Ե Ր Ը

ՊԵՏՐՈՒ ՅԱԿՈԲԵԱՆ

Յուլիս 12ին Քալիֆորնիայի Տրէզնօ քաղաքին մէջ մեռած է ընկեր Պետրոս Յակոբեան, 63 տարեկան հա- սակի մէջ: Հանգուցեալը ծնած էր Ուրբերդը, 1868 սեպտեմբերի. փոքր հասակին, հօրը և եղբօրը Տիգ- բանի հետ փոխադրւած է Մուշ, ուր կը ստանայ իր կրթութիւնը, Մուշ Կեդրոնական վարժարանին մէջ: 1884ին կաւարտէ դպրոցը և ուսուցիչ կը կարգուի Մո- կունքի դպրոցին: Ատեն մը ետք կը պատրաստուի անց- նիլ Ամերիկա, բայց Իզմիրի մէջ կը ձերբակալուի և կը տարուի Կ. Պոլիս, ուր հօրը ապրեցիկ բարեկամնե- րու միջամտութեան շնորհիւ ազատ կարճակուի, 1888- ին: Այս շրջանին Ամերիկա անցնիլը անկարելի ըլլա- լով, ընկեր Յակոբեան ուսուցչութիւն կ'ընէ փոխնիփոխ Եսալովա, Քուրճ ու Պարտիզակ: 1891ին կը յաջողի մեկնիլ Ամերիկա, սկզբնական շրջանին կը մնայ Պոս- տոն և Լին, յետոյ 1901ին կը մեկնի Քալիֆորնիա և այնտեղ ալ կը հաստատուի:

Ընկեր Յակոբեան, դատարարկած ըլլալով իր

հօրը, որ պատուելի էր, և Մուշի մէջ Տամատեանի շունչին տակ, կանձնաւորէր պարկեշտ քրիստոնեայի և հայրենասէր-յիշափոխականի տիպը: Մասնակցած է Տրէզնօի ազգային-հասարակական կեանքին ու շար- ժումներուն, և իր համեստ, առաքինի և ուղղամիտ նկարագրով սիրւած ու յարգւած էր տեղին հայ գա- ղութի ամէն խաւերէն, անխտրի:

Ընկեր Յակոբեան գործակցած է «Ասպարէզ»ը հիմ- նադրող խումբին, թերթի հիմնադրման տւած է իր զործօն աշակցութիւնը և Մէջլէմեանի ու Գապատայ- եանի հետ խմբագրած է զայն փոխնիփոխ, առանց նիւ- թական վարձատրութեան: Հետագային «Ասպարէզ»ը, նոյն հիմնադրի ընկերներու ջանքերով, փոխանցուեցաւ Հ. Յ. Գալանկուցիին և մինչև այժմ կը շարունակէ հրատարակել իրը Քալիֆորնիայի շրջանի Գալանկուցութեան օրկանը:

Ընկեր Յակոբեանի մահով՝ Տրէզնօի հայ գաղու- թը կը կորսնցնէ հայրենասէր, դիտակից ու առաքինի հայ մը, իսկ տեղին կոմիտէն՝ զգաստ, փորձառու, ուղղամիտ և յարգւած ընկեր մը:

ՇԱՆ ԱՐՄԷՆ

Իսկական անունը Պետրոս Տէրտէրեան էր, բնիկ Քղիի Ասողաբերդ գիւղացի: Մահած 1884թ.: Նահաւատակած 1915ի մարտին:

Անխառն յուզումով է, որ կը յիշեմ այդ բնածին ըմբոս ողին՝ ընդվզումի ու յեղափոխութեան գեռ անծանօթ մեր գիւղի՝ շալ օրերու մուտք ու մռայլ դպրոցական յարկէն... Հայ գրեւ մը կարդայ-գրեւ սորված ու տակաւին պատանի՝ ան անցաւ Կովկաս, ապա Ամերիկա, և իսկոյն մտաւ Դաշնակցութեան շարքերը:

1906ին, Պուրկարիոյ մէջ բացուած Հ. Յ. Դ. Զինուորական դպրոցին համար աշակերտներ կարճամազրբն Ամերիկայէն: Պետրոս, գէնթ ու գինամարտութեան ձգտումով ետուն, թախանձագին կը դիմէ ու կընդունուի հոն: Ու կըլայ դպրոցի յաջողագոյն աշակերտներէն մէկը: Օսմանեան Սահմանադրութենէն յետոյ, միւս յեղափոխական գործիչներու նման ան ալ դարձաւ հայրենի երկիրը: Եւ ի՞նչ հիասթաշ փոփոխութիւն. մեր նախկին փոքրիկ ու ըմբոս Պետրոսը Դաշնակցութեան յեղափոխական ու զէնքի դարբնոցին մէջ սնած՝ գրչի ու զէնքի արժանաւոր ասպետ մը դարձած էր: Այլևս Շահ Արմէն էր անունը. լաւ գինամարտ, ուռւմբեր պատրաստող, բեմախօս ու բողոք:

Ի՞նչ անուշ և ի՞նչ յուսառատ օրեր էին... Պետրոս նոր ու մեծ թափով կը կազմակերպէր երիտասարդութիւնը... Քոզաքի հագուստներով ու զէնքերով հիացուցիչ ձիախաղութիւններ և ներսը, թէ եկեղեցւոյ առջևի հրապարակին վրա կրակոտ ու կուռ բանախօսութիւններ կընէր՝ համակ կեանք ու աւելն սփռելով ազատարար ձգտումներ:

Սակայն, իր ծննդավայր գիւղի շրջանակը շատ նեղ էր իրեն համար: Պետրոս ուղեց մեկնիլ Կարին, բայց իր ծնողներն ու բարեկամները, ինչպէս նախապէս կրկնակի դիմումներով ու աղերսանքներով և Կարնոյ Կեդրոնական Կոմիտէի միջոցաւ գիւղ բերած էին զինքը, անանկ ալ թախանձանքով ու ստիպումով ամուսնացուցին զինքը՝ որ չհեռանայ գիւղէն: Ու մնաց ան: Այլ, աւա՛ղ, իր աստղը չփայլեցաւ երկար: Ելը-ջանի խաւարամիտ թիւրք ու քերտ աղապէկերու ատեղավատ ուղին սկսած էր շարժիլ, ու գաղտնօրէն դաւել «Քիտայի» Շահ Արմէնին դէմ...

Օր մըն ալ, այդ դաւաճողներու կարգադրութեամբ, գիւղի անտառին մէջ, Պետրոսին դէմ կելլէ գինամարտ մը՝ անարգանքներով ու յարձակումներով, որուն Պետրոս կը ստիպուի պատասխանել գնդակով: Հաւարը կը փրթի: Կատաղի վոճմանները կը պաշարին Շահ Արմէնը, բայց և ոչ մէկը կը համարձակի մօտենալ անոր: Ի վերջոյ, կը հասնեն կառավարական ուժեր և Շահ Արմէնը ձերբակալելով կը տանին Քղիի բանտը, անկէ ալ Կարնոյ կեդրոնական բանտը...

Պետրոսին համազիւղացիներս, Ամերիկայէն, նիթապա օգնեցինք անոր ազատման համար: Ի վերջոյ, ապաւեցաւ բանտէն և երբ կը պատրաստուէր հեռանալ արտասահման, զոհ գնաց 1915ի նոյեմբին:

Պետրոս կը գրէր Կարնոյ «Յառաջին», և ուրիշ դաշնակցական թերթերուն «Պ. Տէրտէրեան», «Շահ Արմէն», «Սօֆի» և այլ ծածկանուններով:

Շահ Արմէնին լաւ ծանօթ բնկերներէն մէկը այսպէս կը գծէ անոր պատկերը. «Շահ Արմէն կարմրաթուշ, խուճուճ մազերով, յոնքերի տակից նայող աչքերով մի երիտասարդ էր: Առաջին անգամ նրան տեսայ Կովկասում, Թիֆլիս, որտեղի 1909 թւի դաշնակցական խմբի գործօն անդամներից էր: Գրում էր փոքրիկ արձակ բանաստեղծութիւններ: Շատ էր կարդում և ամբողջ ժամանակ հետաքրքրում էր դրական հարցերով: Այնուհետև թէև Շահ Արմէնին կողքի տեսողութիւնից, բայց կարգում էի թերթերում նրա գողտրիկ արձակ բանաստեղծութիւնները:



«Վերջին անգամ Շահ Արմէնին հանդիպեցի Կարնում, 1914թ. ամառը, Հ. Յ. Դ. Տրդ. Ընդհ. Ժողովի ժամանակ: Նա արդէն ապրել էր մի դրամա: Յայտնի սպանութեան առթիւ բանտարկուել էր, և թիւրքական զարհուրելի բանտից ազատուել՝ գլխաւորապէս Ռոստոմի աշխատանքով:

«Ընդհ. Ժողովից յետոյ ընկերական հացկերոյթ ունէինք Սամնասարեանի սրահում: Հարիւրի չափ ընկերներ կային: Ռոստոմը նախազանուճ էր սեղանին: Մի շարք ճառերից յետոյ, խօսք խնդրեց Շահ Արմէնը: Մտայլ ու հայիացքը անհանդիստ, նա սկսեց խօսիլ Դաշնակցութեան ողու շուրջ, և, կարծես մարգարէական շունչով գուշակութիւններ արաւ վաղւայ սարսափների մասին...

«Շահ Արմէնը հակառակ իր մտայլ արտաքինին, զարմանալի սրտակից և անուշ տողայ էր, արտակարգ ջերմ ընկեր, շուտ մտերմացող և հոգու բովանդակ ուժով կապող: Վառ սիրով լեցուն զէպի հայ ժողովուրդըն ու հայրենիքը: Ոչ մի գոհողութեան առջև կանց չառնող, անբիւխ ու վճռական: Ներքին խոհումներով հարուստ: Մոլեռանդ դաշնակցական էր: Զէնքի սիրահար և լաւ զէնք գործածող: Ընդհանուր փոթորիկին արուջին գոհերից եղաւ»:

ՏԻԳ. ՊԱՆՏՈՅԱՆ

Գրախօսական

ՆԱԿԿԻՆ ԶԵԿԻՍՏԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գ. Ս. Աղաբեգով, ԶԵԿԱՆ ԳՈՐԾԻ ՎՐԱ
Г. С. Агабековъ, Чека за Работой. Берлинъ, 1931.

Գ. Աղաբեգովը ծանոթ է «Դրօշակ» ընթերցողներին Զեկայի գործունեության մասին գրած իր առաջին գրքով*): Հիմա նա հրապարակ է գալիս նոյն նիւթին ներքած երկրորդ հատորով, որի մէջ նպատակ է դնում մերկացնել Զեկայի աշխատակիցների կազմակերպումը և չեկիտական գործունեության մեկը արտասահմանում, ինչպէս նաև չեկիտների ապրումներն ու հոգեբանութիւնը: Այնուամենայնիվ լեզուով և գունազեղ պատկերներով, Աղաբեգովը նկարագրում է Զեկայի գործիչներին վերջի վար, Զեկայի ներք տիրող կարգերը, բարեքննիչ ու յարաբերութիւնները, նրա ատորես, գործող դասերն ու սարահանքերը, կամայականութիւններն ու աշխատութիւնները, հարեցողութիւնն ու սեռական թափփրամութիւնը, համատարած փառութիւնն ու բարոյական անկումը: Մտացուած է ամբողջական ու մտայն մի պատկեր. Զեկան, որպէս այլապիսին, գործունեութեան ներքին ու արտաքին կողմերով. չեկիտքը, որպէս խորհրդային միահեծանութեան կամակատար. այն սկզբունքները, որոնք տիրակազէն ունի այդ ոճբարգրած հիմնարկութեան մէջ. այն հրէշային միջոցները, որոնք կիրառուած են նրա անունով:

Ինչ՞ մասին սաես չի խօսում Աղաբեգովը: Գրքի 31 գլուխներում բերած են բազմաթիւ փաստեր Զեկայի կենտրոնի, դաւառական ճիւղերում, արտասահմանեան ներկայացուցչութիւնների մէջ կատարող գործերից և իշխող պայմաններից: Կան յուլիշ էջեր և մարդկային խիղճը կարողով ու ըմբոստացնող պատմութիւններ: Ահա կարուտայեայ, մատաղ Լիւիան, որին, կարծես, սիրում է Աղաբեգովը, բայց բանտարկել է տարիս իբրև հակաօրիորդական: Ահա 12 ամեայ փերևն Օլգան, որի մօրը բանտարկել է Զեկան: Ահա զեկեցիկ և առնական Սոփիա Վլադիմիրովնան, որ, սարքի ոտսային ընկած ճանճի պէս, յանձնուած է Զեկայի որոգայթներում: Ահա Ալդանիստանի խորհրդային դեպիան Մտարը իր երկու կանանցով՝ Արես և Նինա, հեղուան էլ կամուրջաններ, որոնք մեղքին խաղալիք է դեպիանատունը: Ահա Բիլովկինը, Զեկայի աստղերից մէկը, որ զննակահարուած է որպէս արոցիտար: Ահա «խելցից պակաս» Կարախանը, «զողք» Միկոլայան, չինովիկ Դուլիանը, անհաշիւ չեկիտներ Պոլտամ, Պարսկաստանում, Ալդանիստանում, հայ կղերականն ու էֆէնչից լրտեսներ: Ին՞վք փաշայի սպանութեան մասնաբանութիւնները: Ամանուլլային օգնելու նպատակով Ալդանիստան կարմիր զորամասեր մտցնելն ու հազարաւոր աննպատակ զոհերը Ստալինի հրամանով, սանձաբժակութիւններն ու մահախորձ պարսկական հողի վրա, չեկիտական խեղդատակ դատաւարութիւններ և այլն և այլն: Դժուար է թելել Աղաբեգովի զրքի ամբողջ նիւթը: Մի քանի գլուխներ կարելի է կարգաւ ուղղակի իբրև արկածախնդրական վէպ, ինչպէս, օրինակ, «էնվեր փաշայի սպանութիւնը», «Հիւպատոսական ծածկագրերի գողութիւնը», «Մահ դաւաճաններին» և այլն:

*) «Դրօշակ», 1931 թ. № 1—2, «Զեկիստի իտատուականութիւնները»:

Հայ ընթերցողի համար կան առանձնապէս հետաքրքրական փաստեր Հայ կոմունիստների ու Հայ չեկիտների գործունեությանն ու բնորոշման մասին: Ահա գաղութահայ ազգայնականների պարծանք Կարախանը, որին Աղաբեգովը տալիս է հետեւեալ բնորոշումը՝

«Մոսկւայում ո՞վ չի ճանաչում Կարախանին: Ո՞վ չգիտէ նրա ինքնաշարժը, որ ամէն օր սպասում է Մեծ Թատրոնի առջի: Ո՞վ կարող է նրան պատկերացնել պարուհի աղջիկների շքանից դուրս: Պարուհիները այնպէս մոգու են դարձել վերջերս Կրեմլի պետերի մօտ, որ նոյն իսկ «համառուական բատրակ» Կալինինը իրեն համար ձեռք է բերել մի պարուհի: Կարախանին աղջիկները համարում են «հողեակ», իսկ «պետերը» լաւ, բայց ոչ խելօք տղայ: Գէպէտէն, որ արտաքին գործոց գործադարութեան մէջ յանձին Լիտվիտովի ունի մի կատարի թիւնամի, բարեկամական յարաբերութիւններ է պահում Կարախանի հետ: Է՞մ թշնամիների թշնամիներն իմ բարեկամներն են» — ահա Գէպէտի բարեկամութեան հիմքը Կարախանի հետ, որը անուշ իրեն արհամարհող Լիտվիտովի հանդէպ՝ օրգանապէս առում է նրան և միջոց ու դաշնակիցներ է փնտրում փառելու համար նրան: Սակայն, շնայած Կարախանի ակնյայտի տաղանդի զէպի ճղճիմ բանասրկութիւններն ու բուսութիւնները՝ նրա հիմնական թերութիւնը ոչ թէ յիմարութիւնն է, այլ ինքի ու կամից պակասութիւնը, և ես հաւատապատ էմ, որ մօտիկ ապագայում Լիտվիտովը կօզտի նրա որևէ մի սխալից, որպէսզի վերջնականապէս ոչնչացնի Կարախանին: Իսկ Գէպէտում նրա սխալների վրա նայում են մասնիկ արանքով՝ չկամենալով մեղքից փախցնել յանձին նրա պայքարի մի զէնք արտաքին գործադարութեան և ի մասնաւորի նրա ղեկավար Լիտվիտովի դէմ»:

Աղաբեգովը բերում է մի օրինակ, թէ ինչպէս պարսկական դեսպան Ալի-Ղուլին խնայելու հետ բանակցելիս Կարախանը իմացնում է նրան, թէ իրեն յայտնի է պարսկական կառավարութեան ուղարկած գաղտնի հրահանգը: Այս անգլուխութեան հետևանքով ջր է մտած մերկացնել այն աղբիւրը, որից Զեկան տեղեկութիւններ էր ստանում պարսկական կառավարութեան գործունեության մասին:

Միկոյեանի մասին այսպէս է՝ արտայայտում Աղաբեգովը իր գործակիցներից մէկի բերանով. «Ձուր չեն ասում, որ Ռորսթրալին Միուկեանն էմլ ամենաշնամար քիմիկոսը Ստալինն է: Նա կարող է մարդուն վերածել աղբի, ինչպէս վարուց Տրոցկու վերաբերմամբ, բայց աղբից էլ կարող է մարդ շինել, ինչպէս արու Միկոյեանից»:

Շատ փայլուն չէ և Թեհրանի նախկին դեսպան Դուլիանի դէմը: Աղաբեգովը նրա մասին գրում է.

«Մեծ, շեղք առանձնառեւեակ: Ամէն կողմ գողբեր և թանկարժէք կաշիով պատած փառաւոր կահ կարասի: Սենեակի մէջնակը, ահագին մի դրասեղանի մօտ, երեսը դէպի դուրս, նստած էր դեսպան Դուլիանը: Պարսկաստան նշանակելուց արաջ, նա Փարիզի դեսպանի խորհրդական էր: Ուսանողական տարիները Դուլիանին սնց է կացնել ինչպիսիւս: Երկարատև կեանքը Եւրոպայում խիստ զրոյձ էր գրել նրա վրա, որով նա աչքէ կը ընկնում խորհրդային միւս խոշոր գործիչների մէջ: Ինքնաբնասակ, Թուրք ու ղեզիցիկ, դէմքի ուղիղ փծերով, միշտ կրէթ փարսեղուքի համար շրթ-

Հայաստանցիներ հետ՝ Դաւթեանը շատ նպաստաւոր տը-
պաւորութիւն է թողնում: Միւս դեսպաններէն Պաւ-
թեանը տարբերում է նրանով, որ եւրոպական լեզու-
ներ էլ գիտէ: Այս բոլոր յատկութիւններով և աչքի ա-
ռաւ ունենալով այն նպաստաւոր քաղաքական պայման-
ները, որոնք կանխի Պարսկաստանում նրա դեսպան
նշանակելու ժամանակ, Դաւթեանը մեծ գործ կարող
էր կատարել խորհրդային կառավարութեան համար,
բայց նրա բնաւորութեան հակառակ կողմ էլ չիք էր
գործնում նրա բոլոր առաւելութիւնները: Եւ երկչու
ու անվճարական մարդ էր, բոլորովին գուրկ նախանու-
հութիւնէն: Նրա ջանասիրութիւնը սահմանափակում
էր միայն Մոսկուայից ստացած բոլոր հրահանգների
կատարումով, առանց մտածելու: Իսկ 16-նչ հրահանգ-
ներ կարելի էր սպասել արժանքին գործակարծ պաշտո-
նակատար Կարախանից, որի յիմարութիւնը նոյնպիսի
առանի կարգ էր անցել, ինչպէս «բարէ յետոյ» տիւ-
ղոսը ամուր կալի էր Մոտոլոյին, որը նորեւր նշանակ-
ւեց Ռորհը: Միւս կէտէն ժողովուրդներն նախազու-
րէք էր:

Ի միջի այլոց, Դաւթեանը յայտնում է Աղաբէգով-
ին, թէ՛ «Մոսկւան խնդրում է ամէն զնով արդէնէլ
դաշնագրի կնքումը Պարսկաստանի և Իրաքի միջև: Պէտ-
ք էր եղաւ նորից նպաստ տալ իմ քանի թիւրթիւրի
խմբագիրներին, որ լրագրական պայքար մղեն դաշնա-
գրի դէմ: Բացի այդ, ես խոսեցի Մեծիխի պատգամա-
ւորներից մի քանիսի հետ և աշխատելիք գրգռել նրանց
դաշնագրի դէմ, բայց ինձ թւում է, որ մինչ անցոր
ենք որեւէ բան անելու, որովհետև ամբողջ գործը շահ
և թէ՛յնուր-թաշի ձեռքն է»:

Դաւթեանը չէր սխալուած. բոլլեհիկան դրամներն
անցոր գումարները արգելելու Իրաք-պարսկական դաշ-
նագրի ստորագրութիւնը:

Այս յիշում են մի շարք նշանուոր և անշան հայ
չեհիստներ, ինչպէս շորթրամի կողմակերպիչ Գալու-
տեանը, թիւրքիայի գործերի մասնապետ Ն. Գեորգե-
անը՝ «ցգաւարար ու զեղնագոյն դէմքով» մի տղայ,
Աղաբէգովի օդական Սուրէն Մակարեանը, Չեկայի
Թաղիցի ներկայացուցիչ Մինասեանը, լրտեսական
պարտիկ իմրի պետ Օրբէկեանը, Չեկայի Բազմրանի
ներկայացուցիչ Փաշալիք, Դուրուխչեղ և շատ ուրիշ-
ները: Առհասարակ, Արևելիցում, բայց, մասնաւոր,
Պարսկաստանի չեհիստների շարքերում հայերը պատ-
կառելի թիւ են կազմում: Աղաբէգովը հաստատում է,
որ Չեկայ յատուկ ուշադրութիւն է գործնում գաղու-
թահայ հողեւորակներին ու վաճառականների վրա և
աշխատում է նրանց մէջ գտնել գործակալներ: Եւ նոր-
ից ու նորից պնդում է, որ Մազրութեան Եզ., Արսէն
վարչ. Դլուչեան, Բաղդատի ստալիտիւրը և ուրիշներ
Չեկայի վճարովի գործակալներ են:

Արսէն Դլուչեանի մասին Աղաբէգովը գրում է.
«Փրանսայում մենք ունենք մի գաղտնի գործակալ՝
Դ/ՅԴ. Նա հայ վարդապետ է: Հիմա նա այնտեղ մեկ
համար գրեթէ բոլորովին անօրում է: Մենք որոշել
ենք կանչել նրան այստեղ, մեր ունեցած եկեղեցական
կապերի շնորհիւ Եպիսկոպոս ձեռնադրել տալ և ապա
ուղարկել Պարսկաստան Հնդկա-Պարսկական թեմի ա-
ռաջնորդի պաշտօնով»:

Չեկան ինչպէս գրում էր նաև Դլուչեանին իբրև բը-
տուղար տալ չեհիստ Գեորգեանին, որը պիտի մի կող-
մից «վարէր Եպիսկոպոսի գործերը», իսկ միւս կող-
մից Հոյ պատրաստէր Չեկայի գործի կողմակերպման
համար Հնդկաստանում և աշխատէր «հայկական
գծով»: «Պարսկաստանում ապրում են շատ հայեր,
որոնց միջոցով մեծ գործեր կարելի է կատարել»:

Պոլսում «ՆՊ/ՁԹԻ միջոցով մենք ունենք թիւր-
քահայոց պատրիարքի ամբողջ ղրագրութիւնը: Այս
նիւթերից մենք ծանօթ ենք հայ շահախնդների դրու-
թեան, այս կամ այն Եպիսկոպոսի քաղաքական դիմա-
գծին և, վերջապէս, դաշնակների կուսակցութեան մա-
սին»:

«Ճարդատում մենք ունենք վերջերս ստալիտիւրը

նշանակած մի հայ եպիսկոպոս, որին իր պաշտօնա-
վայրը մեկնելուց առաջ գործք է դրաւել Հայաստանի
Գէպէուն»:

Ալիարհական դործակալներից Աղաբէգովը համե-
մատարար երկար կանգ է աւանտ պրկացի վաճառ-
ական էլմայեանի վրա: Ինքը Աղաբէգովը Պոլսում գոր-
ծում էր գաղտնի՝ պարսկահայ վաճառական Ներսէս
Յոյսէփեանի անունով: Պարսի հայ ազգային շրջանի-
րի, թիւրք կառավարութեան և օտար դեսպանների
ներքին կենսը լուսարանելու համար նա, ամսական
150 դոլար վճարելով, իբրև գաղտնի լրտես բանեցնում
է յեշտալ էլմայեանին:

«Վախժանամեայ մի ծերունի, գրում է Աղաբէգով-
ը, արհներ դիտով ու բարեբախտի մեծ փողով, էլմա-
յեանը ուժով սպաւորութիւն էր գործում շրջապատող-
ների վրա: Աւելի քան 30 տարի աշխատելով Պոլսում
իրբև միջնորդ, նա շատ ծանօթներ ունէր հասարակու-
թեան բոլոր խաւերում: Տեսող բարեհամբոյր, էլմա-
յեանի խորամանկ էր խորամանկութեամբ մի Հայի, որ
Թիւրքիայում կատարած բոլոր իրադարձութիւններից
յետոյ, ոչ միայն իրկել էր իր կենսը, այլ և հարբա-
տութիւն էր դիւրել: Նրա աւետարական վարկը ցած էր
ամէն քննադատութիւնէն: Նրա նախնական ուսումնա-
սիրութիւնից մենք այն սպաւորութիւնը հանեցինք, որ
համայեանը միայն մէկ միջև ունի — դրամը: Դրամի
համար նա պարտաւոր էր ծախել ամէն ինչ ու
ամենքին: Հէնց նրա այդ «յատուկութիւնների» համար
մենք ընտրեցինք նրան:

Աղաբէգովը օգտուած է էլմայեանի ազահութիւ-
նից և լույսով նրա ընչախորութիւնն ու ճազգասիրու-
թիւնը՝ ստալարկում է լրտեսութիւն անել: էլմայեան
ը համամասնում է սիրով:

«Նախ, ասում է նա, ես լաւ կապեր ունիմ թիւրք
ոստիկանութեան հետ: Գաղաքական ոստիկանութեան
բաժանումներից մէկի պետը ամբողջապէս իմ ձեռ-
քում է և իմ բոլոր խնդիրները կը կատարէ: Յետոյ,
ես ծանօթներ ունիմ Պարսի համարեա բոլոր դեսպանա-
ւաներում և կարող եմ նրանցից էլ տեղեկութիւններ
ստանալ:

— Ի՞նչ եք անում, պարմանում է Աղաբէգովը:
Նոյն իսկ բոլլեհիկներէն»:

— Այո՛, նոյն իսկ բոլլեհիկներից: Ես տեղեկութիւն
կարող եմ ստանալ ամէն տեղից, բայց անդիւսցանի-
նից: Վերջապէս, գուցէ հայերի թիւրքիայում ունեցած
գործունէութիւնն էլ Նետաքըրէ ձեռք, իմ մտերիմ
բարեկամն է հայ Եպիսկոպոս Գ.՝

Եւ այնուհետև էլմայեանը, ամսական 150 դոլա-
րով, լրտեսութիւն է անում յօգուտ բոլլեհիկների «Մա-
րտիան» ծածկանունով:

Ի վերջոյ, ստալք բերենք Աղաբէգովի գրքի այն տո-
ղները, որոնք վերաբերում են կովկասեան կուսակցու-
թիւններին: Գէպէուն արտասահմանեան մասի արեւել-
եան գործերը ընդունելիս, 1928ի կէսերին, Աղաբէգովը
լում է Նետաեալ զեկուցումը բաժնի վարիչ Գեորգեան-
նից:

«Ես յատուկ գաղաւած եմ կովկասեան խմբակցու-
թիւնների գործերով, որովհետև միւսները ոչ մի լուրջ
բան չեն ներկայացնում: Հիմնական վրացի մենչեհի-
ները, մուսալմաականները, դաշնակցականներն ու
չեռնակներն են: Հէնց Հիմա նրանք իբրև հետ բա-
նակցութիւններ են վարում այսպէս կոչւած կովկաս-
եան կոմիչեկոյիցիքի մէկ ճակատ կազմելու համար:
Համարեա բոլոր խմբակցութիւնները, դաշնակների
բացառութեամբ, պատրաստ են այդ միութեան կոմի-
տէի մէջ մտնելու: Իւրոյ այդ խմբերը նպաստ են ստա-
նում այս կամ այն օտար պետութիւնների, որ շահադը-
բւած է Ռորհը: Միութեան ժողովուրդներն անչա-
տողական շարքում կարգացման մէջ: Առ այժմ մենք
փաստական տեղեկութիւններ ունիք, որ այդ խմբերն

աջակցում են յեհերը, որոնք դրամ են տալիս նրանց այդ ազգութիւններից զինուորական մասնագէտներ են պատրաստում ապստամբութեան համար և, բնական է, օգտագործում են նրանց հետախուզական նպատակներով: Բայց, համաձայն գործակալական տեղեկութիւնների, յեհերի կոնսիլը կանգնած է Ծրանան, որի ղեկավարութեան տակ գործում է լեհական ընդհանուր սպայակոյտը: Այդ պարագան հաստատում է և այն փաստով, որ բոլոր այդ խմբերի կենտրոնները գտնուում են Փարիզում: Ահա ընդհանուր դրութիւնը:

— Իսկ ինչպէ՞ս են դաշնակները, հարցնում է Ազաբեգովը:

— Դաշնակներն ունեն շինուժով կարճակերպութիւն: Նրանց դրամական աջակցութիւն են ցոյց տալիս Ամերիկայից: Բացի այդ, նրանք օգտագործում են հայոց եկեղեցին, որը համարեա ամբողջապէս նրանց ազդեցութեան տակ է գտնուում: Վերջապէս, գործակալները տաւած տեղեկութիւններով, նրանց դրամով օգնում են անգլիացիք: Պէտք է ընդհանրապէս առել, որ բոլոր հակախղափոխական կուսակցութիւններին օգնութիւն են ցոյց տալիս այն երկրները, որոնք շահագրգռւած են կովկասեան նստով: Ահա թէ ինչու մենք ենթադրում ենք, թէ այստեղ գործը կատարում է ոչ ստանց Դեանբրոյի մասնակցութեան:

— Հիմա պատմիր, թէ՛ մե՛նք ինչ միջոցներ ենք ձեռք առել:

— Դաշնակների մասին զու գիտեա Պարսկաստանի գործունէութիւնից: Մենք ձեռք ենք ձգում նրանց նստակները, որ գնում են Թարիզ Իշխանեանի հասցով*): Այդ նստակազրութիւնից մենք իրապէ կենք նրանց գործունէութեան Հարսաստանում և Թիւրքիայում և մեր կողմից հակամիջոցներ ենք ձեռք առնում: Մի ուրիշ աղբիւր Հայերի մասին գտնուում է Պոլսում, որ այնտեղի պատրիարք Նարեկեանի զբարութիւնն է յանձնում մեզ: Վերջապէս, Յունաստանի Հայ ատաշնորդ Մազրեաներ մեր հրահանգներով աշխատում է ջարդարել դաշնակներին և տեղեկութիւններ է տալիս մեզ այնտեղի հայերի վիճակի և արմատաբուծիւնների մասին:

*) Իր առային գրքում է Ազաբեգովը պնդում էր նոյն բանը: Կատարած բնութիւնը պարզում է, որ, իբրք, մի քանի նստակներ Թարիզի փստից անցել են իրազիկների ձեռքը, բայց այդ եղի է մասնակի երեւոյթ և տեղ է շատ կարճ ժամանակ: Բնդիպեալը, բոլոր տեսակներից երևում է, որ Չեկայի միգրերը թափանցելու Դաշնակացութեան մերքը և ձեռք ձգելու մերփին նստակներ ու վաւերագրեր՝ անպտուղ են անցել: ԽՍԲ.

Գալով վրաց մենեիկներին՝ նրանք աշխատում են Թիւրքիայի և մասամբ էլ Լեհաստանի վրայով: Յամալա Պոլիս են գնում Սոսիլո Մդիվանին և Նոյ Բամիշ-վիլին Կովկասի իրենց ցեղակիցների հետ կապելու համար: Նրանց Փարիզից մեկնելու մասին մեր գործակալներն անմիջապէս լուր են տալիս մեզ, և մենք միշտ պատրաստ ենք լինում: Բացի այդ, մենք ստանում ենք նրանց խմբերի նիւտերի արձանագրութիւնները և միշտ տեղեկ ենք նրանց գործերին:

Մուսաւաթականներն էլ աշխատում են Թիւրքիայի և Պարսկաստանի վրայով: Պոլսում նստած է Մահմեդ Ալի Ռասուլ Չաղէն, որ պարագլուխն է այդ կուսակցութեան: Թեհրանում ապրում է նրա եղբայրը, Իսկ Թարիզում և Փեհլիում նրանց գործակալներն են Սիրքա Բալլան և զոկա: Ախոււնովը: Նրանք բոլորն էլ շատ լաւ կերպով գտնուում են մեր հսկողութեան տակ:

Թէ որքան համապատասխան են իրականութեան Ազաբեգովի հաղորդած փաստերը վրաց կամ ազբէջանեան կուսակցութիւնների մասին, կարող են ասել Իրենեք այդ կուսակցութիւնները: Հայ բնիկները համար, սակայն, ակնյայտի է Հ. Յ. Դաշնակցութեան մասին յայտնած տեղեկութիւնների անհեթեթութիւնը: Որ բուլեիկները կարծիքով անգլիացիները դրամ են տալիս դաշնակցականներին, դեռ կարելի է հասկանալ՝ չէ՞ որ նրանց աչքին ամէն տեղ անցիկացու ուրախանն է երևում: Ինչո՞ւ չէ: Անցիկան դրամ շատ ունի, կարող է տալ և դաշնակցականներին: Բայց որ դաշնակցականները «օգտագործում են հայոց եկեղեցին», — այդ արգէն եփած հում էլ կը ծխալի: Ինչո՞ւ համար են դրամ ստանում այդ բոլոր Ալտիանները, Մազրեանները, էրմայեանները, որ այդքան տարբարական լուսաբանութիւն էլ չեն տել Չեկային...

Դեռ ուրիշ շատ հետաքրքրական մէջբերումներ էլ կարելի կը լինէր անել Ազաբեգովի գրքից, բայց մեր յօււածը ստանց այն էլ երկարեց: Իսաւկանանանք այսքանով: Ռուսերին իմացողը Թո՛ղ կարգայ այդ գիրքը. իրատական շատ քան կը գտնէ մէջը: Ազաբեգովը, որ զղեկավարում էր Գէպէտի աշխատանքները Էրմայեան լիւններից մինչև Նեղոսի հովիտը, գործին լաւ տեղեկ մարդու հեղինակութեամբ պատկերացնում է բուլեիկեան Չեկայի քովանդակ փառութիւնը: Եւ գիրքը լրացնելուց յետոյ, ընթերցողը չի կարող չհամակել նոյն զգացումներով ու չղալ նոյն կարակացութեան, ինչ եղբակացութեան եկել է Արաբեգովը, որ՝

— Չեկան կամ Գէպէտի, ջրանորակաւ դիվատաւորութեան փոխարէն քանտրութիւնը խեղդող մի ժարմին է: Մի ժահրոտ պարագ մարդկութեան մարմնի վրայ, որ կարող է բռնակել միայն վերահաստական միջոցներով:

Ս. ՎՐ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ի Ն

Թիւրքական նակատում (Պարագրական) 289
 Հավաքակցութիւն կենդանի պաշտումը (Մ.Վրացեան) 291
 Հայաստանը իրաւագօրիկ (Աշոտ-Արծրունի) 294
 Սա. Նազարեանի քաղաքական դաւաճանքը (Գ. Գիւլալեան) 298
 Թիւրքիոյ շուրջ 303
 Մեր արեւմտեանը (Սիլվա)

ա. Թիւրքիան և ազրբէջանցի ազգայնականները 306
 բ. Վրաց տարագրութեան մէջ 308
 Ինտերնալիոնալ 309
 Անցիալիզմ եւ կառոտցում 311
 Կուսակցական կեանք 314
 Մեր գեները 316
 Գրախօսական 318

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 ֆր. 50 սանի.

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէն՝

M-lle S. A GOPIAN
 5, rue des Gobelins, PARIS (13^e)